



ԴԱՎԻԹ ՍԱՐԱԴՅԱՆ

**ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ
ՎԱՅՐԿՅԱՆ**

Վիպակ
Պատմվածքներ

**ԴԱՎԻԹ ՍԱՐԱՊՅԱՆ
ԵՐԵՔ ՆԱՐՅՈՒՐ ՎԱՅՐԿՅԱՆ**



Երևան
Էյ Զի պրինթ
2019

ԴԱՎԻԹ ՍԱՐԱԴՅԱՆ

ԵՐԵՔ ՆԱՐՅՈՒՐ ՎԱՅՐԿՅԱՆ

Վիպակ
Պատմվածքներ

Թարգմանությունը ռուսերենից և
առաջաբանը՝ Մերի Կարապետյանի

Երևան
Էյ Զի պրինթ
2019

ՀՏԴ 821,161,1 (= 19) - 8 Սարապյան
ԳՄԴ 84 (5 Հ = Ռուս) - 44
Ս 250

Սարապյան Դավիթ


Ս 250 Երեք հարյուր վայրկյան: Վիպակ, պատմվածքներ /
Դ. Սարապյան. – Եր.: «Էյ Զի պրինթ», 2019 թ., 180 էջ

Գրքում ռուսերենից թարգմանաբար ներկայացված են Արցախյան ազատամարտի պանծալի հերոսներից մեկի՝ Դավիթ Սարապյանի (1966-1991) «Երեք հարյուր վայրկյան» վիպակը, մի շարք պատմվածքներ և համակարգչային խաղի համար գրված «Վարազդատ արքա» սցենարը:

ՀՏԴ 821,161,1 (= 19) - 8 Սարապյան
ԳՄԴ 84 (5 Հ = Ռուս) - 44

ISBN 978-9939-9113-3-5
© Կարապետյան Մերի, 2019

«ԴԱՎԻԹ ՍԱՐԱՊՅԱՆ»
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

9	Հայկական մեծ երազանքի ասպետը
30	Երեք հարյուր վայրկյան
86	Հոբբի
100	Բայկոնուր
108	«Կիչա»
118	«Դուրոչկա»
124	Նոր տարի
142	Ձիուկներ
160	Վարազդատ արքա
175	Ծանոթագրություն



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՐԱԶԱՆՔԻ ԱՍՊԵՏՈՒ

Դավիթը միշտ մտքիս մեջ է, և
ես համոզված եմ, որ եթե
յուրաքանչյուր ազատամարտիկ
ունենա գոնե մեկ տոկոս
Դավիթի հայրենասիրությունից,
մենք շատ շուտով կազատագրենք
Արևմտյան Հայաստանը¹:

Մոնթե Մելքոնյան

Առաջադրանք կար՝ հետախուզել Մոավի
լանջերը: Եվ ահա հերթապահ մարտա-
խումբը հաղթահարել է քարակարկառնե-
րը, երբ հանկարծ երկնքում ռազմական «Կոկորդիլոս-
ներ» են հայտնվում: Վարձկան օդաչուները նկատել են
տղաներին ու չարագուշակ պտտվելով՝ պատրաստ-
վում են կրակ բացել նրանց ուղղությամբ: Բաց տարա-
ծություն է, հարկավոր է շտապ հասնել թաքստոցների
ու պատսպարվել: Հենց այնտեղ էլ տղաները նկատում
են, որ Դավիթը մնացել է սարի բարձունքին: Ուղղա-
թիռները, Մոավը օղակելով, ավելի ու ավելի են իջնում:
Երբ նրանք հասնում են նշանառության հեռավորու-
թյան, Դավիթը կանգնում է իր հաղթ հասակով և սկսում

¹ Էվելինա Մելքոնյան, «Մեր օրերի Դավիթը», «Էջ ալրինք», Երևան 2019, էջ 11

է գնդակոծել ուղղաթիռները... Բարձունքից իջնում է՝ «Կոկորդիլոսներից» մեկը կործանած:

Սա ասք է ոչ հեռավոր անցյալից, և ոչինչ առասպելական չկա նրանում: Եվ ոչ էլ վկայողներն են զարմացած պատմում: Դավիթին ճանաչած մարդիկ գիտեին՝ Դավիթը այդպիսին էր: Նրանք բախտ են ունեցել անհնարին-առասպելականի իրականացումը տեսնելու արտասովոր այդ երիտասարդի հոգեկերտվածքի, վարքի, մտածողության, ստեղծագործելու, ամենօրյա գործողությունների ու պայքարի մեջ: Խիզախումի, անձնագոհության, հանդգնության արտասովոր չափաբաժիններով օժտված Դավիթ Սարապյանը, որին նաև Դև էին կոչում², Արցախյան ազատամարտի առաջին նահատակներից մեկը եղավ: 26 տարին չբոլորած: Նրա մարմինն առաջիններից մեկը ակոսեց Եռաբլուրի թանկ հողը:

Այսօր՝ բավական ուշացած, հայ ընթերցողի սեղանին է դրվում Դավիթ Սարապյանի գրական ստեղծագործությունների մի մասը, որը հնարավոր է եղել փրկել Սարապյանների՝ ողբերգական հանգամանքներում կորսված ողջ ժառանգությունից³: Դավիթը ստեղծագործել է ռուսերեն: Ներկա հրատարակությունը Սարապյան ընտանիքի բարեկամ, լրագրող Էվելինա Մելքունյանի աշխատությամբ և ջանքերով 2006 թվական

² «Դև» կեղծանվան ամենատարբեր վարկածներ կան, նախ՝ հնչյունաբանական՝ Դավիթ - Դեյվ - Դև, ապա նաև ինքնաստեղծ, երբ Դավիթը դուռը թակելիս մոր հարցին պատասխանել է՝ ես եմ, բարի Դևը: Հետագայում հաղթ հասակի, իր ինքնաշեն հսկա գնդացիի, թշնամու ահուսարսավոր լինելու համար կոչվել է «Ահեղ Դև»:

³ Սարապյանների բնակարանը Դավիթի մայրը կտակել էր նրա վեց զինակից ընկերներին, որոնք այն թանգարանի պիտի վերածեին, սակայն վերջիններս մի գիշերում վաճառել են բնակարանը, իսկ իրերը բաժանել իրար մեջ:

նին «Նաիրի» հրատարակչությունում լույս տեսած «Давид Сараян. Жизнь, творчество, борьба» գրքում⁴ զետեղված «300 վայրկյան» վիպակի և մի շարք պատմվածքների թարգմանությունն է:

Դավիթ Սարապյանը Երևանի հայտնի ճարտարապետներից մեկի՝ Էդուարդ Սարապյանի և հայկական կիբեռնետիկայի ակունքներում կանգնած ականավոր գիտնական Էմմա Սարապյանի միակ զավակն էր: Նրանց հարկի տակ երևելի մարդիկ էին հյուրընկալվում, և Դավիթը, որ փայլուն սովորում էր դպրոցում, իր անձի ձևավորման վրա էր կրում նաև մտավորական միջավայրի ազդեցությունը: Ռուսական կրթություն ստանալու հարցում մեղադրում էր ծնողներին, ավստոսում, որ ստեղծագործում է ոչ մայրենի լեզվով:

Նրա աշխարհայացքի ձևավորմանը մեծապես նպաստել է Արցախյան ազատամարտի փառապանծ դեմքերից մեկը՝ ֆիզիկոս գիտնական Լեոնիդ Ազգալոյանը: Ազգալոյանը Էմմա Սարապյանի գործընկերն էր, Դավիթի հետ հանդիպում էր թե՛ աշխատավայրում, թե՛ նրանց տանը: Երկուսով երկար զրուցում էին Մեծ Հայաստանի մասին, պատմական անարդարությունների ու դրանց հաղթահարման մասին: Դավիթի պատանեկան երազները հանգրվանում էին սենյակի պատին կախված Մեծ Հայքի քարտեզին, որը պատանու խնդրանքով այդ տարիներին մեծ դժվարությամբ հայթաթել էր հայրը: Ծնողների ու Լեոնիդի աչքի առաջ հասակ էր առնում մի հանդուգն ու արդարամիտ երի-

⁴ Գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել Գրողների միությունում. Դավիթ Սարապյանի գրական շնորհը զնահատել են միության բազմաթիվ անդամներ, գրականագետներ:

տասարդ, որի այլախոհությունն արդեն կոնկրետ գործողությունների էր վերածվում: Պատմում են, որ որպես լավագույն աշակերտ մերձնոսկովյան ճամբարներից մեկի ուղեգիր նվաճած Դավիթը ըմբոստացել է ճամբարի ղեկավարության դեմ՝ չհանդուրժելով այլազգի երեխաների նկատմամբ ցուցաբերվող խտրականությունը: Նրան անմիջապես հեռացրել են ճամբարից: Ցավոք, այս դեպքին հար մնան մեկ այլ իրավիճակում, այս անգամ արդեն խորհրդային բազմազգ բանակում իր ազգային արժանապատվությունն ամեն կերպ պաշտպանող Դավիթը ստիպված էր լինելու հատուցել բանտային մոտ 4 տարիներով:

Դավիթն ինքն էր պնդել, որ ծառայի բանակում, թեև կարճատևությունը կազատեր նրան զինապարտությունից, և նա ուսումը կշարունակեր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որտեղ հաջողությամբ ընդունվել և սովորում էր: Մտավոր առաջընթացին զուգահեռ նա կոփում էր իր մարմինը, զբաղվում արևելյան մարտարվեստով. նա Ազգալեյանի գաղափարական հոգեզավակն էր, իսկ Ազգալեյանը ոչ միայն զգում էր խորհրդային կայսրության մոտալուտ հոգեվարքը, այլև պատրաստվում աշխարհաքաղաքական նոր իրողության մեջ դիրքավորվելու որպես Նոր Հայաստանի զինվորյալ՝ հանուն հայոց անկախության, ապա նաև ազատագրական մեծ նպատակների:

Եվ այսպես, 18-ամյա ուսանողի երևանյան անհոգ կյանքը փոխարինվում է բայկոնուրյան, ապա խմելնիցկյան զորամասերի դաժան առօրյայով. բանակային կյանք, որը, որպես փակ համակարգ, լիովին ար-

տացություն էր խորհրդային խորտակվող բռնապետության ողջ «հմայքը»՝ ժողովուրդների բարեկամության, եղբայրության չգործող լոգունգներով, ազգամիջյան խռովություններով ու ամենաթողությանը: Դավիթն այս միջավայրում առանձնանում էր իր ինտելեկտով, և դա չէր կարող չշարժել շատերի նախանձը: «Արմյանը» քիրախավորվում է: Ծեծկռտության ժամանակ վեճը հրահրած ծառայակիցը դանակի հարված է ստանում Դավիթից, որն իրավիճակում արագ կողմնորոշվելով, հասցրել էր ճանկել դանակը: Խորհրդային «արդարադատությունը» հետագայում անտեսում է տուժողի զոջման խոստովանությունը՝ ամեն կերպ ջանալով գործը բնութագրել որպես կենցաղային վեճ և անգամ կարճել այն: Դա ամենից ավելի ձեռնառու կլինեի Դավիթին: Բայց Դավիթը հրաժարվում է անփառունակ այդ հողվածից, կենցաղային խնդիրը չէր կարող նրան հանել հունից, վիրավորվել էր նրա ազգային արժանապատվությունը, և ինքն ասպետորեն պաշտպանել էր այն:

Սկսվում է Դավիթի կյանքի աշունը, ինչպես ինքն է գրում պատմվածքներից մեկում՝ «տե՛ր Աստված, տասնինը տարեկանում»...Կիրթ և ազնվագարն Դավիթի ողիսականը այս անգամ էլ մի ուրիշ փակ համակարգով պետք է ձգվեր, կրկին խորհրդային կայսրության խիտ ու սեղմ մի մոդելով, որում տարրական մարդկային արժանապատվությունն էր ոտնատակ արվում ամեն ժամ և ամեն հնարավոր միջոցով, ուր մնաց՝ ազգային արժանապատվությունը: Այդուհանդերձ որքան էլ դաժան, այս տարիները բազմապատկեցին Դավիթի փորձառությունը. բանտային ինտենսիվ ընթերցանությանը զու-

գահեռ Դավիթը կենսական իմաստություն էր կուտակում, մարդկային բարդ հարաբերություններում լավագույնս կողմնորոշվելու, մարդ մնալու և չիուսահատվելու հմտություն ու կարողություն, որ նրան այնքան պետք եկան այդ տարիներին հաջորդած ազատության կարճ ժամանակահատվածում՝ ստեղծագործական երանության մեջ լիցքաթափվելու ու կյանքը նորովի իմաստավորելու ճանապարհին:

Բանակային ու բանտային «տարերքներում» քրծվելուց հետո Դավիթն այլևս չցանկացավ ուսումնառությունը շարունակել կիբեռնետիկայի բնագավառում: Հոգում կուտակվածը պիտի պարպվեր թղթին, հետո նաև՝ կինոժապավենին: Դեռ պատանեկան տարիներից էր նա թղթակցում զանազան պարբերականների, մտերիմները հիացմունքով են խոսում անգամ նրա մամականուց⁵, որը հյուսվել էր բանտային տառապանքի ու գեղագիտական նուրբ արարումի արդյունքում: Բայց Դավիթի ստեղծագործական միտքը նոր արտահայտչամիջոցներ էր փնտրում, և նա շուտով դառնում է կինոռեժիսոր Գեմադի Մելքոնյանի օգնականը, մեկնում Օդեսա: «300 վայրկյան» վիպակը շուտով վերածվում է կինոսցենարի, և Օդեսայի կինոստուդիան այն հաստատում է նկարահանման: Եվ որքան էլ մեծ էր Դավիթի ուրախությունը, որքան էլ խոստումնալից՝ նրա կինոպագան, Դավիթը այլ ուսուցչի սան էր, այլ բանի համար էր պատրաստվել և այլ բանի էր կոչված: Պետք է վերադառնար հայրենիք, ուր իր մեծ ուսուցիչը՝ Լեոնիդ Ազգալդյանը, «Անկախության բանակի» հրամանա-

⁵ Դավիթի մամականին, ցավոք, չի պահպանվել:

տարությունն ստանձնած, լծվել էր հայրենիքի պաշտպանության սուրբ առաքելությանը:

Էմմա Պավլովնան՝ Դավիթի մայրը, սերում էր Արցախի Տող գյուղից, Բեկ-Փիրումյանների փառահեղ տոհմից: Դավիթը մանկուց ծանոթ էր այդ բնաշխարհին, և փոքր ու հարազատ հայրենիքից՝ Տող գյուղից էլ պատկերացնում էր Արցախ աշխարհի ազատագրման սկիզբը: Ու իսկապես, Արցախյան ազատամարտում գրանցված առաջին ազատագրական գործողությունը իրականություն դարձավ հենց Տողում: Աղբբեջանի ղեկավարությունը Տողի աղբբեջանաբնակ հատվածում օմոնականների գումարտակ էր տեղակայել: 1991թ. հոկտեմբերի 17-ի գիշերը աղբբեջանցի օմոնականները ներխուժել էին Դանիելյանների բնակարանը, գնդակահարել ընտանիքի բոլոր 5 անդամներին, այդ թվում՝ 4 տարեկան երեխայի: Այդ գումարտակի չեզոքացումն օրախնդիր էր:

Տողի ազատագրումը ղեկավարել է Արկադի Տեր-Թադևոսյանը, որի ազատամարտիկների շարքը համալրել էր նաև Դավիթը: Լեզենդար Կոմանդոսն առանձնահատուկ պարծանքով է խոսում իր բացառիկ զինվորի ու հրամանատարի մասին՝ փաստելով, որ Դևը ռազմական բարդ գործողություններ էր մշակում և ինքն էլ իրականացնում էր դրանք՝ խնայելով մյուսներին: Զինակիցները վկայում են ընկերների նկատմամբ Դավիթի չափազանց ընդգծված հոգատարության մասին, որը դրսևորվում էր մարտական ու հետախուզական բոլոր գործողություններում: Տողի ազատագրումը Դավիթ Սարապյանի ռազմական սխրանքների գագաթնակետն էր:

Քաջածանոթ հարազատ տեղանքին՝ Դավիթը միայնակ դուրս է գալիս հետախուզման և մեկ օր անց վերադառնում: Օմոնականներն իրենց գլխավոր կենտրոնական էին դարձրել Դավիթի պապի տունը՝ գյուղի երևելի երկհարկ շինություններից մեկը: «Ահեղ Դևը» համարձակ պլան ուներ, որը, թեև իրագործելի, բայց չափազանց վտանգավոր էր: Ճանաչելով ու վստահելով Դավիթին՝ Արկադի Տեր-Թադևոսյանը հավանություն է տալիս ազատագրման գործողության այդ խենթ մեկնարկին: Գիշերային խավարում Դավիթը գաղտագողի մոտենում է հարազատ տանը, որտեղ թուրք խուժանը գինարբության մեջ էր, դուրս է կանչում հրամանատարին ու ռուսերեն գռռալով՝ բռնի՛ր, նռնակների խուրճը նետում նրա կողմը: Պայթում է ողջ տունը. գումարտակում խուճապն ապահովված էր, և հայ ջոկատներն իրենց դիրքերից շարունակում են Դավիթի մեկնարկած գործողությունը՝ փառահեղ ավարտի հասցնելով այն: Մեծ Հայաստանի երագով ապրող Դավիթը Երևան է հասնում մորն ավետելու, որ ազատագրված է նրա հայրենի գյուղը, և մի օր հոր հայրենի Կարինի հերթն էլ կգա:

Դավիթը շուտափույթ վերադառնում է Արցախ, այս անգամ՝ Շահումյանի թեժ մարտերին մասնակցելու: Այստեղ իսկական դժոխք էր, ցեղասպանության ու տեղահանությունների խառնարան: Թողան գյուղի մերձակա բարձունքից գնդակոծվում էին հայկական Բուզլուխ, Մանաշիդ և Էրբեջ գյուղերը: Հարկավոր էր գրավել Թողանը: Այդ հանձնառությանը լծված էին «Տիգրան Մեծ» աշխարհագորային գնդի տղաները, որի մասն էր կազմում նաև Դավիթի 30 հոգանոց ջոկատը:

Նախ ոչնչացնելով Բուզլուխի կրակակետը՝ տղաները հերոսաբար հետապնդում են մինչև ատամները զինված օմոնականներին և անհավասար պայմաններում մեծ ջանքերով ազատագրում նաև Թողանը: Խիզախների ուրախությունն անսահման էր. հայկական գյուղերն այլևս թշնամու նշանառության տակ չէին: Բայց Թողանի մարտը վերջինն էր Դավիթի և զինակից շատ ընկերների համար. դարանակալած թշնամու կրակահերթով ընդհատվում է բարձունքում կանգնած, տառապանքով ու չարչարանքով ազատության մի նոր բաժին շահած և այն ըմբռնված Դավիթի երկրային կյանքի առասպելը:

Ինչո՞վ ինքնին գեղարվեստական նյութ չէ այս արտասովոր, գերբնական ու առիմքնող երիտասարդի կյանքը, ուրիշ որտե՞ղ փնտրել փորձառության այսչափ խտություն՝ 26 տարիների մեջ, կատարելության քանի՞ տեսակ գիտենք, որ կարող են հեշտորեն բաղդատվել այս օրինակին: Հանձնառու՝ հայրենիքի ու հողատար՝ զինակից ընկերների հանդեպ՝ Դավիթը սեր ու նվիրում էր, և այդ սերը անձնագոհության լրումին հասած ավետարանական կատարելություն էր:

Իր մասին իրենից լավ ոչ ոք չէր գրի: Ափսոս, շատ ափսոս, որ նրա գրիչը հասցրեց արձանագրել սեփական կյանքի և միջավայրի սահմանափակ, հաշված տարիները միայն, հիմնականում՝ բանտայինները: Մնում է միայն երևակայել, թե այդ օժտված երիտասարդն ազատամարտի ի՞նչ արժեքավոր վավերագրություն ու վիպասք կկերտեր, եթե վերապրեր նաև պատերազմի «տարերքը»...

Ո՛չ բանակային, ո՛չ բանտային տարիները Դավիթին չէին չարացրել: Եթե Սոլժենիցինն ասում էր, որ գուլագը դժոխք է, իսկ Դավլաթովը հակադարձում, թե դժոխքն իրենք էին (բանտային համակարգի աշխատողները), ապա Դավիթ Սարապյանը, որքան էլ իրատեսական էր նրա գրիչը, և որքան էլ նա իրավունք ունենար, շրջանցում է ընդհանրական գնահատական տալու գայթակղությունը: Նրա բանտը, իր խոսքերով՝ զոնը, կենսական տարածություն է, որտեղ ամեն ինչ նույնն է, ինչ դրսում, միայն թե՛ խտացված: Չոնն ավելին է, քան կալանավայրը, այդ զոնի սահմանները նույնական են խորհրդային տերության անժայրածիր սահմաններին, զոնի «բնակիչն» էլ նույնն է, ինչ սովետական քաղաքացին, որ կա՛ն համակարգն է մարմնավորում, կա՛ն համակարգի դեմ ընդվզողն է, ընդ որում՝ կապ չունի՝ կալանավո՞ր է, թե՞ բանտապան, կրկնահանգագո՞րծ է, թե՞ քննիչ:

Դավիթի բազմագիտակությունը, համաշխարհային գրականությանն ու կինոյին ծանոթ լինելը մեծապես նպաստել են, որ անգամ ստեղծագործական որոնումների նախնական փուլում նրա շարադրանքն ու ասելիքը որակյալ ու համոզիչ լինեն: «300 վայրկյան» վիպակն օժտված է կառուցվածքային ամբողջականությամբ, ինչն, անշուշտ, չէր կարող որոշիչ չլինել Օդեսայի կինոստուդիայի՝ համանուն սցենարը նկարահանման արժանացնելու որոշման համար: Արժեքավոր են Դավիթի զինակից ընկեր, ներկայում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան

Դերիկյանի հուշերը Դավիթի հարուստ կենսավորձի և գեղարվեստական մտածողության մասին: Թեժ մարտերի դադարների ժամանակ ծավալված զրույցներից, որոնց, ի դեպ, մասնակցում էր նաև Յվետանա Պասկալան, Դերիկյանն այնպիսի տպավորություն է ստանում, թե Դավիթը ռեժիսոր է և Յվետանայի հետ հավանաբար բանտային կյանքի մասին ֆիլմ է նկարելու: Հարցին՝ զբաղվո՞ւմ է, արդյոք, բանտային թեմաներով նկարահանումներով, Դավիթը մի պահ ցնցվում է, սակայն ակնթարթորեն վերագտնում է ինքնատիրապետումը և պատասխանում, որ բանտերը մի քանի տարի շարունակ ինքը «նկարել» է իր աչքերով⁶:

Ահա այս «օպերատորական» աչքերով էլ շարադրված է «300 վայրկյան» վիպակը: Կարդացվում է մի շնչով, ֆիլմի տևողության չափ ձգվող ընթերցանություն է: Շարադրանքն ասես ոչ թե գրչով, այլ տեսախցիկով ծավալված լինի: Տեսարանների կոնտրաստիվ հաջորդականությունը, կտրուկ անցումները, գեղարվեստական արտահայտչամիջոցների «շոշափելի» պատկերավորությունը օպտիկական լրացուցիչ հնարավորություններ են ստեղծում ընթերցողի երևակայության համար:

«Կալանավորների սև ու թաց զանգվածից «հնգյակների» բարակ շիթեր էին դուրս գալիս ու ողողվելով ջրափոշով՝ լցվում հաշվակետը: Երբեմն-երբեմն դեռ չհաշվված կալանավորների ամբոխի միջից երևում էր Արթուրը: Նա արդեն ամբողջովին թաց էր: Կարճ մազերը կպել էին ճաղատացող ճակատին:

⁶ Էվելինա Մելքումյան, «Մեր օրերի Դավիթը», «Էյ Ջի պրինթ», Երևան 2019, էջ 65

Կողքից մի «այծուրն» սուրաց: Կայծակի բոցավառումը լուսավորեց նրա չարագույժ ուրվապարկերը, բայց ամպրոպի հեռավոր ճայթյունների տակ շուրջն ամեն ինչ վայրկենապես սուզվեց սև մշուշի մեջ: Լույսը հանգավ, ու նորից, ասես նախապես տրված ծրագրով, դժգոհության աղմուկ բարձրացավ: Այն ահագնանում էր՝ վերածվելով հազարավոր փղձկացող կոկորդիսներից ելնող չայների մոլորական շային կոկորդիլի»...

Ստեղծագործական հասունության դրսևորում է նաև գլխավոր կերպարի՝ կալանավոր Արթուրի սիմվոլիկ զուգադրումը Միքայել հրեշտակապետի հետ, որ դաջված է երիտասարդի մեջքին ու վիպակի ողջ ընթացքում կրած օպտիկական «մետամորֆոզներով» արտահայտում է կերպարի ու իրավիճակների նրբագույն փոփոխությունները.

«Միքայել հրեշտակապետի ցասկոյր դեմքը, որ հմտորեն դաջված էր արևառած մեջքին, շարունակ ծամածռվում էր՝ ասես նյարդային ջղաճգությունից: Քրտնաթոր մաշկի տակ պրկված թիակները եռանդագին շարժվում էին, ու դրանից սրբի ծնուրը տմրմրում էր:

Ջլապինդ երիտասարդը ձեռքուտքի անընդմեջ հարվածներ էր տեղում օդում՝ ուղղված երևակայական հակառակորդին»:

Միքայել հրեշտակապետի դեմքը վիպակի առաջին նախադասության ենթական է: Հետագա ողջ պատմության կրողը Ջլապինդ երիտասարդն է՝ Արթուրը, որի մեջքին տարօրինակ դաջվածքն է, բայց պոետիկ այս

հնարքը՝ սիմվոլը «սուրբեկտայնությամբ» օժտելը, որ հեղինակը, ի դեպ, հաջողությամբ բանեցնում է մի քանի այլ հատվածներում ևս, ցույց է տալիս նրա բազմաշերտ ընկալումների խորությունն ու դրանք մատուցելու հասունությունը: Արթուրը հեռավոր մանություն ունի Դավիթին: Սովորաբար բոլոր գրողների ստեղծագործական մեկնարկի շինանյութը սեփական եսն է, ոմանք անգամ պնդում են, որ ոչ մի գրող այդպես էլ ամբողջովին չի ազատագրվում իր եսից, անգամ եթե նրան այլ անուններով է կնքում:

Դավիթ Սարապյանի գեղարվեստական հայեցողությունը կարողացել է որսալ ընդհանրականի և անհատականի հատույթը՝ զոնը ներկայացնելով որպես խորհրդային տերության փոքր մանրակերտ, Արթուրին՝ որպես այդ տերության դեմ ընդվզող այլախոհություն: Միքայել հրեշտակապետը մեզ ծանոթ է որպես ռազմի հրեշտակ, մարտնչող ոգի, համատիեզերական արդարության պահապան: Բիբլիական սուրբը, որ դաջված էր Արթուրի մեջքին, ոչ միայն մատնում է, թե որն է կալանավորի ներշնչանքի աղբյուրը, այլև խորհրդանշում է սրբի բոլոր ժամանակների պատերազմը անարդարության դեմ: Ընդ որում՝ Արթուրն ինքը սուրբ կերպար չէ: Գրողն իր հերոսի անցյալը, կալանավայրում հայտնվելու հանգամանքները թողնում է ընթերցողի երևակայությանը: Այդ հերոսը կալանավայրում ամենասովորական զեկ է՝ ներքաշված թղթախաղի մեջ: Հենց «ազարտի» և դրա հետևանքները «քավելու» մեջ էլ բացվում ու ծավալվում է Արթուրի կերպարը: Տանուլ տված գումարը ժամանակին վերադարձնելու

պատվախնդրությունը Արթուրին ստիպում է փախուստի դիմել կալանավայրից, ոսկերչական խանութ բալանել ու ապահովագրել իրեն «ֆուֆլիժնիկի» խարանից: Կերպարի անգամ այս զարգացման մեջ հեղինակը գերծ է մնում վերջինիս ավելորդ հերոսականություն հաղորդելու պաթետիզմից:

Պատումը հեղինակի միտումնավորությամբ ժամանակ առ ժամանակ ընդմիջվում է առավոտյան կամ երեկոյան հատուկ ժամերին պարբերաբար կանչող «ռադիոաքաղաղի» «խոսում է Մոսկվան» հայտնի ազդակոչով, դրան հաջորդած օրհներգով, որոնց համամիությունական վերամբարձությունը բեկբեկվում, խռպուտվում է կալանավայրի ձայնափողի, կամ արժեզրկվում-կորչում է արևելյան զուգարանի խռոշում փրփրող ջրի աղմուկի մեջ՝ ոչ միայն որևէ բովանդակություն չհաղորդելով անազատների օրվա մեկնարկին ու ավարտին, այլև խորացնելով այն անջրպետի զգացողությունը, որ գոյություն ունի տերության «հզորության» ու քաղաքացու «չնչիության» միջև.

«Ներսում առավոտյան լռությունը ճեղքվեց «Մայակի»՝ ռադիոձայնափողի միջից հեղզհեղե սասարկացող ազդակոչերով: Հաղորդավարի ձայնը հերթական անգամ հասարարում էր, որ հենց Մոսկվան է, որ հիմա խոսում է, ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը, ու օրհներգը թնդաց:

Ազռավակույրը խունապով ցրվեց օրհներգի հանդիսավոր որոյունունքից: Դիպաշարարակի վրա ժամապահը կծկվեց: Հավանաբար՝ վաղորդյան սառնությունից: Եկալերինյան ժամանակների շինության կա-

մարների տակ երաժշտության որոտը շարունակվում էր: Քնաբաթախ հսկիչն անցնում էր միջանցքով, բանալիների խրչով ծեծում խցերի դուռը, գոռում:

– Подъем! Подъем!...

Օրհներգի վերջին ակորդը լուծվեց արևելյան գուգարանի խոռոչում փրփրող ջրի աղմուկի մեջ»:

Գործողությունների խորապատկերն, ուրեմն, Խորհրդային Միությունն է, և այս մեծ բեմում են տեղի ունենում մարդկային ամենատարբեր ողբերգությունները՝ լինի կալանավայրում, թե խաբուսիկ ազատության մեջ: Ահա երիտասարդ հեղինակի ստեղծագործական արժանիքներից ևս մեկը՝ աներևույթ ընդհանրական հրեշ-կերպարի ստեղծումը, որի հետ հարաբերության մեջ էլ դիտարկվում են մարդկային առանձին խելված ճակատագրերը: Այս կերպարը որքան անշուշափելի, նույնքան նյութական է դառնում անհոգի քննիչների, բիրտ բանտապանների, իներտ ու անտարբեր հսկիչների, անգամ քաղբենի սիրած աղջկա գործողություններում: Այդ շարքում առանձնանում է փոքրոգի ավագ լեյտենանտը՝ Ստարլեյը, որին ընթերցողն առաջին անգամ հանդիպում է կառամատույցում կատվաձագի հետ խաղ անելիս: Անմեղ տեսարան: Վիպակի դրամատիզմը, սակայն, հետագա դրվագներում բացահայտում է այս երիտասարդի «համակարգային» ողջ ներուժը, երբ նա չկայացածության իր ողջ մաղձը վերածում է կավատական մանր առևտրի՝ ողբերգական ավարտի հասցնելով տղամարդու և կնոջ ամենաբնական ու կենսատու մերձեցման (ամենևին ոչ լոկ սեռական իմաստով) փոքրիկ, բայց հանդուգն փորձը:

Արթուրի բանտային չարչարանքների հայելին հրեշտակապետի, ինչպես հեղինակն է սիրում գրել՝ սրբի դաջվածքն է, որ մեկ ծամածովում է, մեկ խոժոռվում, մեկ կապտուկներով է պատված, մեկ բծավորվում է շրխկոցով փակվող ճաղավանդակների ստվերներից, մեկ աղավաղվում ցնցուղից թափվող ջրաշիթերից և կամ արդեն անշնչացած զեկի բաճկոնի տակից մի վերջին անգամ երևում երկնքին հառած աչքերով:

Վիպակի դրամատիզմն ամփոփված է միջանկյալ չափազանց կարճ ժամանակի՝ 300 վայրկյանների մեջ: Սա նույն հինգ րոպեն է, բայց այսպիսի ոչ սովորական հաշվումով միայն կարելի է արտահայտել այն բաղձալի ժամանակը, որը «ճանկվել է» անազատության պայմաններում մարդկային ամենաանպաշտպան հույզերով լցնելու համար: «Ձիուկներ» ինքնակենսագրական պատմվածքում, որտեղ նրբին հումորով ներկայացվում է «օսուժողոնկայում» սպասող կին ու տղամարդ կալանավորների հեռահար սիրախաղը, Սարապյանը հայհոյում է այն սրիկաներին, *«որոնք օրենք էին հորինել մեզ՝ քույրերելիի սահմանն անցածներիս դատապարտելով այսպիսի դատարկ, անսեռ գոյության»...*

Դավիթը մարդկային ցավի, տագնապի, ամենահասարակ ու անհրաժեշտ իղձերի, որոնք բոլոր պայմաններում և բոլոր ժամանակներում նույնն են, մեկ բառով՝ հոգու գիտակ էր: Բացառիկ ինտելեկտը բանտում չէր խանգարել նրան թափանցել հասարակ մարդու, մերժված կամ կործանված համարվող կալանավորի ներաշխարհը ու ստեղծագործական պաշար պեղել այնտեղից: Դիմանկարիչ էր: Իր ճակատագիրը կիսող խցա-

կիցներին նա ներկայացնում է խնամքով ընտրված գույներով՝ իրատեսականը չխամրեցնելով ապրումակցումի իր անասհման կարողությամբ: Եվ այդ ամենը նա համեմտում է նրբին հումորով ու հեզմանքով՝ ասես մեղմելու համար այն ցավը, որն ընթերցողը, միևնույն է, չի հասկանալու, քանի որ դրա սեփական փորձառությունը չունի: Իսկ սեփական տառապանքն ընթերցողին «չպարտադրելու» համար ընտրում է ինքնահեզմանքի ոճը, ինչի միջոցով իր բազմաթիվ վեհ ու բարձր արժանիքների կողքին ամենաբնական կերպով երևակվում է նաև նրա աներևակայելի համեստությունը:

Թբիլիսյան էտապում Ամանորի գիշերը «տոնող» կալանավորների մասին հասուն հուշագրությունպատմվածք է «Նոր տարին»: Տրագիկոմեդիկ ոճով նախ մանրամասնորեն կերտելով խցակից «ստրոգացների»՝ Կոլիկի ու Էդիկի դիմանկարները՝ հեղինակը հետզհետե «ակտիվացնում» է դրանք՝ մարդկայինի, արդարի ու ազնիվի վերաբերյալ գրեթե ողջ կյանքը բանտում անցկացրած այդ մարդկանց ունեցած անփոփոխ գիտակցությունը սղության արտակարգ պայմաններում վերհանելու, այն վարպետորեն նաև ազատությունը վայելող անազնիվների կենսակերպին հակադրելու գրողական խնդրադրումով: Անգամ չիֆիրով, եթե դա էլ չկա՝ ժժոնկայով Նոր տարին դիմավորելը շատ ավելի արժանապատիվ կարող է լինել, եթե ի հեճուկս անազատության՝ չպղծվեն մարդկային նախաստեղծ օրենքները, չտրորվեն ազնվության սահմանները:

«Հորբին» սիրո տառապագին փորձառության ճիչ է, թեև վրձնած է զարմանալի թեթևությամբ ու նորից՝ ինքնահեզմանքի շտրիխներով: Մերժված սիրո դառնությունը խոր հետք է թողել հեղինակի վրա, բայց այդ մասին չէ նրա պատմությունը: «Հորբին» թաքուն ուղերձ է՝ դիմացինին աննրբանկատ կերպով չցավեցնելու ու սերը որևէ այլ արժեքի չստորադասելու մասին: Այդ ճիչը լսելի է նաև «300 վայրկյան» վիպակում, որտեղ սիրած աղջկա՝ քաղթենիության ու նյութապաշտության ֆոնին զարգացած դավաճանությանը սիրո ու ազատության այլ չափանիշներ կրող կալանավորը պատասխանում է սեռական բիրտ ակտով արտահայտված հիրավի նատուրալիստական «արդարադատությամբ».

«Նա նույնիսկ հարկ չէր համարել հանվել, ու նրա ցեխուր, պեղսկան կոշտուկոպիր կոշկապակը կտրուկ հակադրվում էր աղջկա կոկած-փայլեցված վարդագույն մանրիկ ոտնաթաթին»:

Դժվար չէ պատկերացնել, թե ստեղծագործական ինչ վերելք կունենար Դավիթը, եթե պատերազմը խնայեր նրան: Նա բազմաշնորհ էր, ինչի մեկ այլ վկայությունն է համակարգչային խաղի համար գրված «Վարագդատ արքա» սցենարը, որի միայն առաջին մասն է ստեղծված, ընկերոջ խնդրանքով, մի գիշերում, քանի որ Դավիթը կարճ ժամանակով էր Երևանում և մյուս օրը կրկին Արցախ պիտի մեկներ: Այս սցենարի հիման վրա գրված համակարգչային խաղը Լոնդոնում հատուկ մրցանակի է արժանանում, բայց որքան ավելի արժեքավոր կլիներ այն, եթե ավարտուն լիներ: Պատ-

մական Վարազդատի մասին չէ խաղը, այլ խորհրդանշական հայոց արքայի, որի ծնունդը համընկնում է պալատական դավադրության հետ, և որբացած մանուկ արքան մնում է հովվի խնամքին: Մտածված է ամեն մանրուք: Անգամ՝ երաժշտության ընտրությունը.

«...Թագուհու փախուստից հեկոտ կռվի դաշտում հայրենիքում են ավազակներն ու դրանիկը: Վերջինս մոտենում է մեռած արքային ու, կռանալով նրա վրա, հանում է կահազարդը, կահում իր վզից: Ապա գեղնից բարձրացնելով ընկած թագը՝ դնում է իր գլխին»...

(Ծանոթագրություն. երաժշտություն, որը կարտահայտի չարի ժամանակավոր հաղթարշավը, ԽՍՀՄ հիմնի պես մի բան: Պլանը՝ ընդհանուր: Տևողությունը՝ 10 վայրկյան):

ԽՍՀՄ հիմն, չարի ժամանակավոր հաղթարշավ... Պատկերավորության ինչպիսի կտրուկ ու համարձակ ընտրություն՝ հայրենի երկրի ինքնիշխանության կորուստը նկարագրելու համար, բնականաբար՝ ախրոնիկ մոտեցմամբ, խաղի վերացականությանը համահունչ: Եվ երևակայել կարելի է, թե պետականությանը, պատմական արդարության վերականգնմանը հետամուտ Վարազդատին ինչպիսի ոճավորված որոգայթների միջով կանցկացնե՞ր Դավիթը, եթե ավարտե՞ր խաղը:

Ինչպիսի՞ Հայաստան կկերտե՞ր Դավիթ Սարապյանը, եթե չավարտվե՞ր նրա «խաղը»: Նրա խղական պայքարն ու ընդվզումը չարի ու անարդարության դեմ:

«Ամենասովորական օր դուրս եկավ այդ օրը՝ շոգ ու ոչ մի նորություն չբերած: Մի բան էր փրկում՝ նախաջրհեղեղյան հսկա հովհարիչը, բայց դա էլ այնպիսի տրակտորատուղաթիռային դռդռոց էր հանում, որ ականջներդ բռնվում էին:


Երիտասարդը մեկնվել էր փափուկ բազկաթոռին ու արդեն երկու ժամ հրաշքի էր սպասում՝ ծխախոտ ծխախոտի հետեից ծխելով: Տաբակի ծուխը, սենյակի հեղձուցիչ օդը, որը տեղ-տեղ կտրտվում էր զովության բարավիկ հոսքերից, ու դռդռոցը, որը դուրս էր գալիս այդ զովության աղբյուրից, սրիպում էին տրվել անցյալի հիշողություններին: Մտաբերել զարմանը ոչ բնորոշ այն արտասովոր ապրիլյան շոգ օրը: Իր կյանքում առաջին ու վերջին պարաշյուտային թռիչքի օրը: «Կուկուռուզնիկի» սրահում, որտեղից գեղնավարելով դուրս էիր գալիս թռիչքագործի, նույն կլիմայական պայմաններն էին: Բայց այն ժամանակ՝ վեց տարի առաջ, տանջանքները հարյուրապարիկ փոխափուցվում էին: Հիրավի, հանում մի քանի վայրկյան ազատ անկման արժեք մի ժամ էլ, երկու ժամ էլ, վերջապես մի ողջ օր էլ տարտբերվել դողդողացող ֆյուզելյաժի մեջ ու խեղդվել միայն «կուկուռուզնիկներին» բնորոշ սպեցիֆիկ հոտից: Փոխարենը հետո, Աստված իմ, ինչպիսի՜ չայներ: Չապանակեռի ճրկոցը, ինստրուկտորի «գնա՜ց»-ը, ականջների մեջ լսվող սուլոցը անկման ընթացքում և վերջապես գլխավերևումը բացվող հսկայական նարնջագույն գմբեթի ճայթյունը»⁷:

⁷ Эвелина Мелкумян, «Давид Сарапян. Жизнь, творчество, борьба», «Նաիրի» հրատարակչություն, Երևան 2006, էջ 113

Սա մի հատված է Դավիթի «Էսթետը» անավարտ պատմվածքից: Էլի իր մասին է պատմում, թեև երրորդ դեմքով: Դավ է երիտասարդի անունը: Նա հանուն մի քանի վայրկյան ազատ անկման պատրաստ էր մի ողջ օր տարուբերվել դողդողացող ֆյուգելյաժի մեջ ու խեղդվել միայն «կուկուռուզնիկներին» բնորոշ սպեցիֆիկ հոտից»: Հանուն ազատ անկման բերկրանքի կյանքի բոլոր դժվարությունների միջով գիտակցաբար անցնող հայ էր Դավիթ Սարապյանը: Հանուն իր երկրի ազատության ապրող զավակ՝ շատերին անմատչելի թվացող երազանքներով ու հավակնություններով, բայցև գործնականում ամեն վայրկյան դրանց հետապնդող հասուն տղամարդ, որ ճախրանքի գեղեցկագույն օրինակը ցույց տվեց մեզ՝ կարճատև կյանքի ամենավառ հետազծով թակելով անմահության դարպասները:

ՄԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՎԱՅՐԿՅԱՆ



Միքայել հրեշտակապետի ցասկոտ դեմքը, որ հմտորեն դաջված էր արևառած մեջքին, շարունակ ծամածռվում էր՝ ասես նյարդային ջղաձգությունից: Քրտնաթոր մաշկի տակ պրկված թիակները եռանդազին շարժվում էին, ու դրանից սրբի ծնոտը տմտմբում էր:

Ջլապինդ երիտասարդը ձեռքուտքի անընդմեջ հարվածներ էր տեղում օդում՝ ուղղված երևակայական հակառակորդին:

Մալխյան արեգակը գեմիթում էր, ու թիկնեղ կերպարանքը գրեթե ստվեր չէր գցում տողապատ մակերևույթին: Դրանից էլ, թերևս, փոքր-ինչ գերբնական էր երևում հարթ կտուրի մուգ մոխրագույն ֆոնին:

Երաժշտությունն ընդհատվեց, ու կարճ դադարից հետո խռպոտ մի ձայն բարձրախոսից հայտարարեց.

– Ուշադրություն: Այն կալանավորները, որոնց ազատագրկման ժամկետը լրանում է այս տարվա հուլիսին, շտապ անցնեն պահակակետ՝ լուսանկարվելու: Կրկնում եմ...

Երիտասարդը դադարեցրեց մարզանքը, ուշադրությամբ ականջ դրեց յուրաքանչյուր բառին: Չնայած շոգին՝ սարսուռը պատեց հրեշտակապետի դեմքը:

Ընդհատված համերգը վերսկսվեց: Երաժշտության միջից լսելի եղավ ինչ-որ մեկի կանչը.

– Հե՛յ, Արթո՛ւր:

Երիտասարդը մոտեցավ կտուրի ծայրին ու ցած նայեց:

– Իջի՛ր, թափառակա՛ն:– Ներքին գորքերի *պրասպորշիկի*⁸ համազգեստով մի տարեց քեռի նրա կողմն էր նայում ու սրբում բրոնզագույն ճաղատի քրտինքը:– Սրան նկարվելու են կանչում, իսկ ինքը թրև է գալիս կտուրներից...

Արթուրը ժպտաց ու ծերուկին աչքով անելով ասաց.

– Վե՛րջ, Նիկողի՛միչ, շաքաշ...

Ու ցած թռավ, լավ է՝ բարաքը միհարկանի էր:

– Շատ ունե՞ս դեռ,– հետաքրքրվեց հսկիչը, երբ երիտասարդն ուղղվեց:

– Զառասու՜նի՜նը օր...

– Մի ոտքիդ կանգնած էլ կձգես,– ձեռքը թափ տվեց Նիկողիմիչն ու հեռացավ:

– Կձգեմ,– ափը չսափրած կզակի վրայով սահեցնելով՝ Արթուրը նայում էր նրա հետևից...

Ծխապատ բարաքում երեկոյան հետաշխատանքային եռուզեռ էր:

Չեկերը վայելում էին իրենց ազատ ժամանակը: Ինչ-որ մեկը *չիֆիր* սարքելու իր հմտությունն էր բանեցնում: Մի պատկառելի տղամարդ՝ ամենայն հավանականությամբ նախկին դիրեկտոր, թերթերը ձեռքին սկսեց տեղավորվել մահճակալին: Երկու հոգանոց փոքրիկ մի «ընտանիք» ազահորեն մսի պահածո էր խժռում՝ տուփի միջից փոքր դանակներով ճանկելով ծխեցրած միսը...

Երկու վարագուրված մահճակալների միջակայքի դիմաց մի վեց հոգի կուտակվել, հետաքրքրությամբ հետևում էին տեղի ունեցող իրադարձություններին:

Եվ ահա թե ինչ էր տեղի ունենում:

Սև շապիկով մի թուլակազմ տղամարդ ծալապատիկ բազմել էր փնթի անկողնուն: Երկրորդ հարկաշարքի երեք կողմերից իջնող վերմակներով պարսպապատված, ասես որմնախորշում նստած կախարդ՝ նա զբաղված էր խորհրդավոր գործով. խա-

⁸ շեղատառ բառերի բացատրությունը ներկայացված է ծանոթագրությամբ, էջ 175

ղաքարտեր էր խառնում: Եվ, խոսք չկա, վարպետորեն էր անում: Նոր խաղաքարտերը կեռումեռ մատների արանքում փայլկտում էին ապշեցուցիչ արագությամբ ու յուրօրինակ ճոթճոթոց արձակում:

Դիմացը՝ մի փոքր առաջ եկած՝ նստած էր Արթուրը և ուշադրությամբ հետևում էր նրա ձեռքերին:

Թուլակազմը խաղաքարտերի կապուկը պարզեց նրան՝ կտրելու, միաժամանակ հարցրեց.

– Աչքերը փա՞կ:

– Հա...– մատնեմատով դեպի իրեն կիսելով կապուկը՝ խռպոտ ձայնով պատասխանեց Արթուրը, ապա ավելացրեց:– Հինգ հարյուրական:

Հանդիսականները խլրտացին: Մեկը կորստյան մատնվածի պես աչքերը վեր հառեց:

– Ինչքա՞ն:– Բանկիրը մայեց Արթուրին:

– Երեք...

Երեք խաղաքարտ իրար հետևից թարս երեսով շարվեց տարուրեստին: Արթուրն անմիջապես ավել ծածկեց դրանք:

– Ի՛նձ:

Թուլակազմը երկու տասանոց նետեց:

– Քսա՛ն:

Արթուրն իր խաղաքարտերը շրջեց ու հովհարածն բացեց: Յոթնոց, իննոց, դամա:

– Տասնինը:– Հանդիսականների շարքերում մի ակնթարթում մաթեմատիկոս հայտնվեց:

Արթուրը մայեց իր հակառակորդին:

– Մի-մի հատ է՞լ:

Սա բացասաբար տարուրեղեց գլուխը.

– Առայժմ հերիք է:

– Թռնո՞ւմ ես, Աղվե՛ս:– Նրա տոնի մեջ սպառնալիք սողուկեց:

Հանդիսատեսը պապանձվեց: Օդում լարված դադար էր:

– Աստվա՛ծ չանի: Ի՛-ինչ ես ասում,– փոքր-ինչ հետ ընկնելով՝ կերկերածայն չասաց, երգե՛ց Աղվեսը:– Դե, ի՛նքդ դատիր, Ար-

թո՛ւր: Երեսուն *կուսոկ* տարվեցիր ինձ: Քիչ փող չէ: Պիտի շոշափե՞մ դրանք, թե՞ չէ: Չանգդ հուլիսի՞ն է: Մի ամբողջ ամիս կա: Դեռ կհասցնենք մի կուշտ խաղալ...

Վերջին բառերի վրա ներկաներից մեկը հեզմախառն ծղրտաց:

Արթուրն աչքերը չռեց Ադվեսի վրա:– Ա՛խ դու քածի մեկը,– մտազբաղ ոռնաց ու տաբուրետը շուռ տալով՝ հարձակվեց վրան:

– «Քածի» համար պատասխան կտաս,– կաղկանձեց սա՝ գլորվելով հարևան մահճակալի տակ:

Հանդիսականներից երկու պնդակազմ ջահել փորձեցին բռնել մոլեգնած զեկին: Արթուրը փորին հասցրած ոտքի կտրուկ հարվածով մի ակնթարթում միջանցք շարտեց մեկին, մյուսին ուղղակի նոկաուտի ենթարկեց ծնոտին հասցրած կարճ կողային հարվածով:

– *Այրա՛ւ:*

Ներկաները ձայնի վրա շուռ եկան:

Միջանցքում կանգնած էր երեսուն-երեսունհինգ տարեկան նիհարակազմ, ոչ բարձրահասակ մի տղամարդ: Նրա հետևում մոտ տասը պնդակազմ ջահելներ էին՝ կիսաշրջան կազմած:

– Ի՞նչ է կատարվում էստեղ:– Ո՛չ հայացքը, ո՛չ հարցի տոնը լավ բան չէին խոստանում:

Չեկերը հայացքները խոնարհեցին: Բարաքում լռություն տիրեց:

– Դե՞: Լեզուներդ կուլ տվեցի՞ք:

Թաքստոցից դուրս սողաց Ադվեսը: Ծառայադեմ նայելով նիհարակազմին՝ սկսեց.

– Ահա թե ինչ, Գեորգի Ստեպանիչ: Երեսուն կուսոկ տարվել է ինձ:

– Ո՞վ:

– Արթուրը:

– Հետո՞ ինչ:

– Ես էլ ասում եմ՝ կմուծվես, կխաղամ...

– Դու, Ադվես, դու ոնց որ ճիշտ տեղից չես ծնվել:– Գեորգի Ստե-

պանիչն առաջ եկավ:– Ես հարցնում եմ՝ ինչի՞ եք կոիվ սարքել:

– Բա ես ի՞նչ եմ ասում: Իրեն ասում եմ՝ ուրեմն, կփակվես, կհասկանանք՝ ինչ ոսկի տղա ես, հետո էլ՝ խնդրեմ, կխաղանք: Իսկ ինքը կոիվ է սարքում:

Գեորգի Ստեպանիչը հանդիմանող հայացքով նայեց Արթուրին:

– Էս ի՞նչ ես անում: Որոշեցիր հենց զանգիցդ առաջ խուլի-գա՞ն դառնալ:

Արթուրը գլուխը կախեց:

– Ի՞նչ ժամկետով էիք խաղում:

– Մայիսի երեսունմեկով...

Գեորգի Ստեպանիչը լռեց, հետո հանկարծակի չոր նետեց.

– Դե հիմա ո՞նց ուզում ես, տակից դուրս արի: Բայց որ էլ տուրուդմփոց չսարքեք:– Ու անցավ առաջ: Ձեկերը, հետ քաշվելով, ճամփա բացեցին նրա համար: Գնաց, հետևից՝ «շքախումբը»:

Բարձրախոսը ֆշշաց, խռխռաց ու մի քանի անգամ հայտարարեց.

– Բոլորը ստուգման: Բոլորը դուրս գան ստուգման:

Կալանավորները շարժվեցին դեպի ելքը: Աղվեսը, անվտանգ հեռավորություն ընդունելով, թունոտ ֆշշացրեց.

– Լսեցի՞ր՝ ինչ ասաց Գողը:

Արթուրը թքեց, մռլտաց, ու պատասխանի չարժանացնելով՝ մյուսների հետ գնաց ստուգման:

Գեորգի Ստեպանիչի շքախումբը նույնպես դուրս եկավ բարաքից՝ նրան մենակ թողնելով մյուսների համեմատ շքեղ միջմահճակալային արանքում: Ոտնամանները հանելով՝ Գողը պառկեց մահճակալին: Գլխավերևում շոշափելով գտավ, չրթացրեց երկրորդ հարկաշարքից կախված լամպը: Ապա բացեց կողապահարանի դռնակը, որի մակերեսով մեկ սոսնձված էին մորեմերկ աղջիկների լուսանկարներ, դուրս բերեց Ֆրոյդի ոսկեկազմ հատորը: Ավելի հարմար տեղավորվելով՝ Գեորգի Ստեպանիչը բացեց գիրքն ու խորասուզվեց ընթերցանության մեջ...

...Հսկա նեոնային լապտերը երկնագույն լույսով լուսավորում էր հատուկ ստուգման համար հատկացված հարթակը, եթե չասենք՝ հրապարակը։ Ստուգման արարողությունն ընթանում էր հետևյալ կարգով. մի քանի հսկիչ, գոռգոռալով, դետուդեն վազելով, խցկվում էին կալանավորների բազմության մեջ ու նրանց շարք-շարք կարգնեցնում հինգ տողաններով։ Պատրաստի «հնգյակներն» առաջ էին քայլում երկու հաշվողների՝ գաղութի պետի հերթապահ օգնականի ու Ավագի (ավագ հերթապահ հսկիչի կամ ուղղակի՝ հերթափոխի պետի) միջև առաջացած բնական դարպասի կողմը։

Ավագը, ձայնը գլուխը գցած, հաշվում էր տողանները։ Գաղութի պետի հերթապահ օգնականը լուռ շրթունքներն էր շարժում։

– Տասնհինգ... տասնվեց...

Այն զեկերը, որոնց արդեն հաշվել էին, ցրվում էին շուրջկալված սեկտորում։ Ոմանք հավաքվում էին խմբերով։ Մյուսները պազած ժամանակ էին սպանում։ Ոմանք զրույցի էին բռնվում շուրջկալն իրականացնող բանտապանների հետ, որոնք իրենք էլ դեմ չէին ձանձրույթը զրույցով սպանելուն։

«Հնգյակներից» մեկի մեջ մտավ նաև Արթուրը։ Նա ազահաբար ներս էր քաշում բռնուցքի մեջ թաքցրած գլանակի ծուխը։

– Երեսունհինգ... Քառասուն։ Կանգնի՛ր։– Ավագը բարձրացրեց ձեռքն ու կանգնեցրեց հաջորդ «հնգյակը», ապա նայեց գաղութի պետի հերթապահ օգնականին։ Սա ինչ-որ նշում արեց ծոցատետրում ու գլխով շարունակելու նշան արեց։

– Գնաց առաջինը,– գոռաց Ավագը, ու այդ պահին... լույսը հանգավ։

Ամբոխի ահագնացող աղմուկի տակ ամեն ինչ սուզվեց խավարի մեջ...

...Մնալով առանց լույսի՝ Գողը լուցկին չխկացրեց ու ճյուղավոր ինքնաշեն «աշտանակի» վրա մեկը մյուսի հետևից երեք մոմ վառեց։

Այս օպերացիան իրականացնելուց հետո նա կրկին խորասուզվեց անհատի հոգեհեռական զարգացման տեսությունն ուսումնասիրելու մեջ...

...Իսկ ինդիվիդներն այդ ընթացքում շարունակում էին աղմկել: Խավարին ընտելացած աչքն արդեն կարող էր տեսնել ալեկոծվող մարդկային սև հսկայական զանգվածը, որի վերևում շարունակ հնչում էր մեզաֆոնով ուժգնացված հրամանը.

– Բոլորը մնան տեղում: Բոլորը...

Այդ պահին քիչ հեռվից լավեց գործի գցվող դիզելի հռնդյունը: Պահակային դիտանոցին ամրացված լուսարձակը, որ ուղղված էր դեպի ստուգման վայրը, հպանցիկ լուսավորեց ամբոխի մի պատառիկ ու անջատված շարժիչի հետ հանգավ: Միայն նրա վոլֆրամային պարույրներն էին հանգչող ճրագների պես մարմնում գիշերվա մեջ:

Ջոնը գտնվում էր ձորակում՝ բոլոր կողմերից բլուրներով շրջապատված: Թռչնի բռիչքի բարձրությունից այն բազմաթիվ մանր լույսերով եզրավորված ձվաձև տեսք պիտի ունենար, որի պարագիծը տեղ-տեղ ընդմիջվում է լուսարձակների ճառագայթների շուղերով: Դատելով հաջորդած խավարից՝ դիզելը գործի գցելու երկրորդ փորձն ավելի արդյունավետ չէր:

Երրորդ փորձից հետո շարժիչն ի վերջո սկսեց շառաչել: Մետաղյա ցվիքի տակ կախված լամպը, որ ազդանշանիչի լարերի հետ ամրացված էր քարե պատնեշից դուրս եկած ցցին, լուսավորեց հերկած հողաշերտը՝ *զապրեպկան*:

Լուսարձակի օվալը դանդաղ փոփոխվում էր՝ ճառագայթը «դարպասներին» ուղղած, որոնց հնգյակներով մոտենում էին զեկերը: Չախ «դարպասաձողը» բարձրաձայն հաշվում էր, աջը՝ լուռ գլխով անում: Իսկ սև «զետոն» ասես վերջ չուներ...

...Երկինքը պարզ էր: Առանց մի հատիկ ամպի: Ջոնը գոտևորող զարնանային բլուրները ծփում էին խիտ պուրակների ու մարգագետինների դյութիչ կանաչով:

Արթուրը նստած էր կտորին: Ծխում էր՝ զմայլված իր առջև բացված տեսարանով:

Նիկողիմիչը մոտենում էր բարաքին: Ջեկին տեսնելով՝ կանգ առավ, կանչեց.

– Հեյ, թափառակա՛ն:

Արթուրը շրջվեց: Ուրախ-ուրախ վեր թռավ տեղից, ձեռքով արեց: Ուզեց ցատկել, բայց վարանեց, քայլերն ուղղեց դեպի կտուրի մյուս ծայրը: Հսկիչը նույնպես քայլեց այդ ուղղությամբ՝ հայացքը չկտրելով նրանից:

Պատին հենած փայտե սանդուղքով իջնելով՝ գեկն ընդառաջ գնաց մոտեցող Նիկողիմիչին: Լուռ ձեռքսեղմումից հետո ծերուկը, շուրջբոլորը նայելով, վեր քաշեց վերնաշապիկը, շալվարի գաղտնագրպանից հանեց մատի հաստության ուղղանկյուն մի կապոց, պարզեց Արթուրին ու հոգոց հանեց.

– Ահա՛: Էստեղ երեք հազար է...

– Ընդամենը,– զարմացած ու հիասթափված բացականչեց գեկը:

– Պառավո՛ղ էղբանն էլ հազիվ է հավաքել... Ասաց՝ վերջինն է: Ինչ կարողացել, ծախել է... Դե, մի տեղ խոթիր՝ փորձանքից հեռու...– ֆշացրեց Նիկողիմիչը՝ տեսնելով, որ Արթուրը շարունակում է կապոցը խաղացնել ձեռքի մեջ:

– Դե լավ:– Ջեկը սեղմեց ծերուկի ուսն ու քայլերի միջից նետեց.– Շնորհակալ եմ քեզ...

...Աղվեսը, ինչպես բոլոր քաղաքակիրթ լատինամերիկացիները, իր սիեստայի ժամն ուներ: Ալարելով նույնիսկ շորերը հանել՝ նա, թափթփված անկողնում պառկած, ընկղմվել էր ցերեկային քնի մեջ ու թեթևակի ֆսֆսացնում էր: Հանկարծակի ուժեղ ուսույունը քիչ մնաց գետնին փռեր նրան: Երկու ձեռքով ամուր կառչելով շրջանակից՝ Աղվեսը բարձրացավ տեղից, վախեցած թարթեց աչքերը:

– Подъём!⁹– Արթուրը նորից, այս անգամ թեթևակի՝ ցնցեց մահճակալը՝ բռնվելով երկրորդ յարուսի թիկնակից:

– Ի՞նչ խուլիզանություն ես անում, հը՞,– բարկությունից նեղացած աչքերը նրան հառելով՝ ֆշացրեց Աղվեսը:

Արթուրը լուռ մտավ երկու մահճակալների արանքն ու նստեց դիմացի մահճակալին:

– Ասում եմ՝ ի՞նչ ես խուլիզանություն անում,– արդեն ոչ այն-

⁹ Վերկացի հրաման

քան վստահ տոնով ծղրտաց Աղվեսը: Մի քիչ մտածելով, ամեն դեպքում, կմկմաց.– Ա՛յ, Գողին կասեմ...

– Դե լա՛վ,– ընդհատեց Արթուրն ու մտավ բաճկոնի ծոցագրպանը:– Մի՛ վնգստա,– այս խոսքերի վրա նա հանեց Նիկողիմիչից ստացած կապոցը:

Աղվեսային հայացքը շողաց ազահուրյամբ:

– Խաղալ չե՞ս ուզում,– կապոցն արձակելով՝ Արթուրը բուր մատը սահեցրեց կանաչ թղթադրամների վրայով:

Աչքը փողերից չկտրելով՝ Աղվեսն աղմուկով կուլ տվեց կոկորդը սեղմող գունդն ու խռպոտ մրթմրթաց.

– Կմուծվես՝ կխաղանք...

Բարաքի անբաններից մի քանիսը կանգնեցին մահճակալների միջակայքում. ֆսֆսացնում, կանխավ վայելում էին սպասվող տեսարանի հաճույքը: Արթուրի անտարբեր հայացքն անցավ նրանց վրայով, գամվեց Աղվեսին.

– Իսկ ու՞ր ես շտապում: Ժամկետին մի շաբաթ կա: Դու քոնը կստանաս...

Աղվեսը երկար քորում էր գլուխը, իբր թե մտածում է: Վերջապես հարցրեց.

– Ինչքա՞ն է...

– Երեք կուսոկ...

– Լա՛վ,– ասաց, վերցնելով արդեն սևին տվող բարձր՝ քչփորեց, միջից խաղաքարտերի նոր, չբացված մի տուփ հանեց:

Հանդիսականներն իրար երեսի նայեցին: Պարզվում է՝ իզուր չէին սպասել:

– Իմացի՛ր, Արթու՛ր, մի՛ խաղ ընդամենը... Ամբողջի վրա:– Աղվեսը չէր շտապում բացել տուփը:– Չես ուզում՝ դու գիտես...

Արյունն Արթուրի դեմքին խփեց: Մի կերպ հավաքեց իրեն, սեղմած ատամների տակից ֆշշաց.

– Գրողի տարած աղվեսի՛ մոռութ: Դու որ մի անգամ ինձ տարվեցիր, էլ չես դգվի:

«Աղվեսի մոռութն» արդեն խառնում էր խաղաքարտերը: Ինչպես միշտ՝ արտիստիկ շարժումներով: Մի պահ, իր գործից կտրվելով, նայեց Արթուրին.

– Մի բան էլ: Քո երեք կուսուկի դեմ հե՛նց խաղից հետո էդքան էլ խաղալու եմ. էն փողերից, որ ինձ պարտք ես:

– Մի՛ զզվեցրու: Լավ է՝ բաժանես...

– Կտրի՛ր:

Արթուրն իր սովորության համաձայն մատնեմատով կտրեց խաղաթղթերը:

Շուրջրոլորն արդեն ահագին մարդ էր հավաքվել: Խաղն ավելի լավ տեսնելու համար հետաքրքրասերներից մեկը ջանում էր Արթուրի ուսի վրայով մահճակալների արանքը նայել: Սա կտրուկ շրջվեց, մատով խփեց նրա քթին.

– Կտրի՛ր էստեղից:

Բանկիրը, առատ թքոտելով բթամատը, հանեց վերևի խաղաքարտն ու պարզեց Արթուրին.

– Էլի՛,– առանց քարտին նայելու՝ ասաց Արթուրը:

Աղվեսը նրան մեկնեց երկրորդը: Գաղտագողի հայացք նետելով երկուսի կողմն էլ՝ Արթուրը ձայնեց.

– Քե՛զ:

Տաբուրետի վրա ուժգին շփփոցով ցած իջան սկզբում մի տուգ, հետո մի տասնոց:

– Очко!¹⁰– միաձայն արտաշնչեցին մի քանիսի կոկորդները:

Արթուրը մի քիչ նստած մնաց: Հետո իր քարտերն առանց բացելու դրեց աղվեսինի կողքը, դրանք ծածկեց հիսուն ռուբլանոցների կապոցով, վեր կացավ ու ծանր քայլերով հեռացավ:

Աղվեսը ծաղրական հայացքով ճանապարհեց նրան, հրճվանքով հավաքեց փողերն ու շրջեց իր հակառակորդի քարտերը: Ինչպես և պետք էր սպասել, դրանք երկու տասնոցներ էին...

...Իրիկնանում էր: Երկնքում խտանում էին ամպրոպաբեր ամպերը: Ագռավների երամը չափազանց ցածր էր թռչում՝ խռպոտ կոհնչով լցնելով օդը:

Գեորգի Ստեպանիչը մոտեցավ հենովի սանդուղքին, նայեց շուրջը, սկսեց բարձրանալ:

Մոտակա բլուրների վրա ստվեր էր իջել, դրանից նրանց կա-

¹⁰ – Միավոր:

նաչը կեղտավուն երանգ էր ստացել: Կտուրից բացվող տեսարանը զուրկ էր գրավչությունից, և, ինչ խոսք, շրջակայքով հիանալու ցանկությունը չէ, որ այդ ժամին կտուր էր բերել Գողին:

Մյուս ծայրին, կզակը ծնկներից հենած, նստած էր Արթուրը: Գեորգի Ստեպանիչը փափուկ քայլերով, գաղտագողի մոտենում էր նրան: Երբ նրանց միջև հեռավորությունը կրճատվեց՝ երեք-չորս մետր էր, Արթուրը հանկարծակի շրջվեց:

– Բարև, Արթուր:

– Բարև...

Փոքր-ինչ կանգնելուց հետո Գողը մոտեցավ, նստեց նրա կողքին, ծխախոտ հանեց: Մեկնեց Արթուրին, նա բացասաբար տարուբերեց գլուխը: Կրակայրիչը չխկացնելով՝ Գեորգի Ստեպանիչը ծուխը ներս քաշեց, քուլան բաց թողեց ու հարցրեց.

– Մուծվելուդ ինչքա՞ն մնաց:

– Երկու օր:

– Ու ոնց ես ֆռռացնելո՞ւ:

Արթուրը զարմացած նայեց նրան:

– Աղվեսը փողերը դրեց ինձ վրա:– Գողը հայացքը հառել էր անորոշ հեռուն:– Որոշեց աչքի ընկնել...

– Արդե՞ն,– քնծիծաղեց Արթուրը:

– Հա... Հույս չունի քեզնից ստանալ...

– Իսկ դու՞:

Գեորգի Ստեպանիչը մատով մաքրեց ծխախոտի մարմրող մասը, որից այն կոնի ձև ստացավ, ու Արթուրի աչքերի մեջ նայելով՝ ասաց.

– Ե՛ս էլ հույս չունեմ: Ամեն դեպքում երկու օրից դու հազիվ թե վճարես, իսկ, այ, երկու ամսից՝ հաստատ... Կուզե՞ս մինչև օգոստոս ձգեմ:

– Քո կարծիքով, եթե երկու ամսից վճարեմ, չի՞ նշանակի, որ *ֆուֆլեցի*:

– Իմ կարծիքով,– Գողը հատուկ շեշտադրում արեց,– կնշանակի՛: Բայց նրանց համար,– նա գլխով նշան արեց զոնի կողմը,– դու կմնաս ուղղակի *ֆրայեր*, որը, դե, ու՞մ հետ չի պատահում, չի կարողացել ժամանակին մուծվել... Գող որ էլ հաստատ

չես լինի...

– Ի՞նչ տարբերություն՝ լինել, չլինել: Ես, էսպես թե էնպես, ուղղակի ֆրայեր եմ... Բայց իմացի՛ր՝ հունիսի մեկին ոչ ոք, նույնիսկ դո՛ւ չես կարողանա իմ մասին ասել՝ *ֆուլլիժնիկ*:

– Սիրուն էլ ասում ես,— քնծիծաղ տվեց Գողը:– Բա ի՞նչ էիր մտածում, երբ նստում էիր խաղի: Ինչի՞ վրա էիր խաղում:

– Էդ մասին կհարցնես մայիսի երեսունմեկին՝ ժամը քսանչորս գրո-գրոյին:

Գեորգի Ստեպանիչը մտածմունքի մեջ ընկավ, հետո վեր կացավ ու արդեն հեռանալիս նետեց.

– Լավ, ուրեմն՝ երեսունմեկին:

Արթուրն աչքերով ուղեկցեց նրան, հետո հայացքը դարձրեց երկնքին: Ամպրոպից առաջ երկինքն ամբողջովին սևագունել էր...

Ու սկսվեց... Ամպրոպը ճայթեց: Կայծակները թրատեցին երկինքը: Որոտը թնդաց: Սևակնած երկինքը հորձանք էր, որ ժայթքում էր երկրի վրա: Նեոնային լամպերի կապույտ լուսավորության մեջ անձրևի շիթերն արծաթին էին տալիս:

Ստուգում էր ընթանում: Կալանավորների սև ու թաց զանգվածից «հնգյակների» բարակ շիթեր էին դուրս գալիս ու ողողվելով ջրափոշով՝ լցվում հաշվակետը: Հսկիչներն ու սպաները գդակների վրայից գլխամոց-անձրևանոցներ էին գցել, ինչը նրանց այծոտնի տեսք էր տալիս:

– Քսանհի՛նգ... քսանվե՛ց,— անձրևի աղմուկը գերազանցելու համար կոկորդ էր պատռում ձախ «դարպասաձողը»:

Երբեմն-երբեմն դեռ չհաշվված կալանավորների ամբոխի միջից երևում էր Արթուրը: Նա արդեն ամբողջովին թաց էր: Կարճ մազերը կպել էին ճաղատացող ճակատին: Կողքից մի «այծոտն» սուրաց: Կայծակի բոցավառումը լուսավորեց նրա չարագույժ ուրվապատկերը, բայց ամպրոպի հեռավոր ճայթյունների տակ շուրջն ամեն ինչ վայրկենապես սուզվեց սև մշուշի մեջ: Լույսը հանգավ, ու նորից, ասես նախապես տրված ծրագրով, դժգոհության աղմուկ բարձրացավ: Այն ահագնանում էր՝ վերածվելով հազարավոր փղձկացող կոկորդներից ելնող ձայների

մղձավանջային կոկտեյլի...

...Ականակիր խավարում, ուր տեղատարափ անձրևը խլացնում էր մարդկային ժխտը, մի լուցկու տուփ առկայծեց: Արթուրի ձեռքերում բոցավառված կրակը լուսավորեց շինարարական անտառի աղբակույտը, որ ձգվում էր ճամբարի երկար շինության շատ վաղուց սպիտակեցրած պատի երկայնքով: Ձեկը հասցրեց մի երկար ու լայն տախտակ ընտրել՝ ոտքերի համար լայնակի մեխած թիերով, ու լուցկին հանգավ:

Տախտակն առաջաթեք բռնած՝ Արթուրը սլացավ բարաքի երկայնքով: Անկյունում քարացավ: Դիզելը շաչեց, ցցապատի լամպերը լուսավորեցին լայն արգելագոտով մեկ ձգվող փշալարերը: Շարժիչը սովորականի պես լռեց: Ամեն ինչ նորից սուզվեց խավարում:

Արթուրն առաջ նետվեց: Ցեխն աղմուկով չմփում էր նրա կոշկատակերին: Զիչ անց փշալարը ծնգծնգաց տախտակի ու նրա վրայով փախչող կալանավորի ծանրությունից:

Արթուրը բարեհաջող վայրէջք կատարեց արգելագոտում ու տախտակը հետևից քարշ տալով՝ վազեց դեպի ցցապատը: Իր հայտնաբերած «սանդուղքը» ցցապատին հենելով՝ նա կայծակնային արագությամբ վեր մագլցեց: Ապա հանեց այն, իր կողմը քաշեց՝ հրնթացս կամուրջ գցելով դեպի մյուս ցցապատը: Փշալարի վերին շերտի վրայով անցնելիս դիզելը նորից շառաչեց: Արթուրը թափ հավաքեց, ուստեց ու գլորվելով թրմփաց մյուս կողմը: Հասցրեց: Վառված լամպը լուսավորեց տախտակը, որը կարծես հենց մի ցցապատից մյուսը կամուրջ գցելու համար էր:

Այս անգամ լույսը սովորականից երկար վառվեց: Ձեկը սկսեց դողալ, երբ լուսարձակի շողը իրենից վեց մետր հեռավորության վրա լուսավորեց փշապատնեշը՝ վերջին խոչընդոտը, որն իրեն բաժանում էր ազատությունից:

Երկինքը սև էր, ամպերով պատված, բայց երջանիկ աստղն անտես ցոլքով լուսավորում էր իր հուսահատության մեջ անհեթեթ այս փախուստը: Դիզելը կրկին լռեց: Վայրկյան իսկ չկորցնելով՝ Արթուրն առաջ սլացավ, մեծ ճիգ արեց ու ծառս եղավ՝

թռչելով փշալարի վրայով: Պոռթվող շորի ձայն, ու քիչ անց նույնիսկ քայլերի ձայնը չկար տեղատարափ անձրևի աղմուկի մեջ: Միայն լուսարձակը, վերջնականապես անդարձ միանալով, մի քանի վայրկյան անց լուսավորեց փշապատնեշի ներս ընկած հատվածը ու մետաղալարին թրթռացող շորի մի պատառիկ...

...Արթուրը վազում էր անտառի խիտ քավուտով: Անձրևի ծանրությունից կքած ճյուղերն անխնա ձաղկում էին դեմքը, քաց գետնի վրա կոշկատակերը սոթ էին տալիս: Բախվելով ծուռումուռ մի կոճղի՝ նա գլխիվայր գլորվեց ներքև: Մինչև ծնկները կեղտոտ ջրացեխում՝ այն է՝ ուզում էր առաջ վազել, երբ անձրևի խշշոցի միջից ավտոմեքենայի շարժիչի հեռավոր գվկոցը խայտաց ականջում... Նա անշարժ քարացավ:

...Անիվներից ցեխաջրի շատրվաններ շաղ տալով՝ գյուղական մեղ ճանապարհով ընթանում էր մենավոր «Նիվան»: Մեքենայի լամպերը վառ լուսավորում էին: Ջրափոշու մեջ ծիածանվող լույսը ցանուցիր ծփանք էր տալիս: Շիկակարմիր, խիտ մորուքով վարորդն ակնհայտորեն խմած էր: Նա ապուշ կտրած նայում էր դիմապակու «հավաքարար» խոզանակից բացվող կիսաշրջանին, որ շարունակ հեղեղվում էր տեղատարափ անձրևի շիթերով:

Ոլորանի մոտ մեքենայի լուսարձակները որսացին գիշերով ճամփեզրին մեքենա կանգնեցնող մարդու ուրվապատկերը: Վարորդն արգելակեց: Մինչ ավտոստոպերը, որը, պարզվեց, Արթուրն է, կմոտենար «Նիվային», վարորդը ձեռքը տարավ նստարանի տակ ու ճանկեց լծակը:

Մոտենալով մեքենային՝ զեկն անսպասելի արագությամբ բացեց վարորդի դուռն ու մատնելով կառչելով Մորուքի թավ գանգուրներից՝ ժամանակ չթողնելով անգամ, որ ծալտուն հանի, դուրս քաշեց նրան ուղիղ ճանապարհի ցեխի մեջ: Սա փորձեց գործի դնել լծակը, բայց ծնոտին ոտքի ջախջախիչ հարված ստանալով՝ կիսամեռ փռվեց ջրացեխի մեջ: Արթուրը բռունցքը թափով իջեցրեց նրա գլխին:

Նա մեքենայի տիրոջը խցկեց սրահն ու նստատեղի թիկնակի

վրայով վեր պտտելով՝ բաց թողեց: Մսագունդը դորդալով ընկավ խցիկի հատակին:

Արթուրը լծակը վերցրեց գետնից ու նստեց դեկին: Դուռը շրխկաց, «Նիվան» շոնդալով պոկվեց տեղից:

...Լուսանում էր: Անձրևը դադարել էր, ամպերի միջից նայում էր արևը:

Ճառագայթները վառվում էին ցուցափեղկերին, շողք ու գզվանքով իջնում վարագույրների շղարշներին, պատվանդանի վարդագույն թավիշին ու կուրացուցիչ անդրադարձվում հսկայական փայլաթիթեղի անճաշակ թագի մեջ՝ վարդագույն թավիշով պատված մեծ խորանարդի վրա: Դատելով վերևում կախված հանգած ցուցանակի՝ կանաչին տվող տառերից՝ խանութն անմիջական կապ ուներ «Յուվելիրտորգի» հետ: Ուղիղ մայթի վրա բացվող ապակեպատ երկփեղկ դռների առաջ ժամանակից շուտ եկած մոտ տասնյակի չափ հաճախորդ հոգնատանջ սպասում էր խանութի բացվելուն:

Քիչ հեռվում արգելակեց հետմամասի ապակիները դեղնակտուց պճնամուղի ոճով վարագուրած, պաշտպանական գույնի «Նիվան»:

Արթուրը, Մորուքի շորերը հագին, դեկին նստած հետևում էր «Յուվելիրտորգի» ցուցանակի հետևում տեղի ունեցող անցուդարձին: Մեքենայի տերը, բրեզենտի մեջ ճոպաններով կապկպված, ընկած էր մեքենայի խցիկի հատակին: Երևում էին միայն ժանգ փոշերը:

Կապույտ խալաթով մի կին մոտեցավ, օղակներից հանեց ներսի կողպեքը: Գնորդների զվարթացած բազմությունը խուժեց խանութ:

Արթուրը մեքենան պոկեց տեղից, սահում վարեց խանութի ուղղությամբ ու արգելակեց դռան աջակողմյան ապակու դիմաց: Կարդալով «Յուվելիրտորգի» աշխատանքային ու ընդմիջման ժամերի մասին տեղեկացնող բրոնզագույն տառերով ցուցանակը՝ նա, առանց ժամանակ վատնելու, «Նիվան» դուրս բերեց երթևեկության երկրորդ գիծ ու կորավ տեսադաշտից:

...Երկաթե լայն դույլի մեջ նիրհում էր սքանչելի կոկոն վարդերի շքեղ փունջը: Զիչ հեռու մատած էր հաստիկ վաճառողուհին: Ծալովի աթոռակը բոլորովին չէր համապատասխանում նրա տպավորիչ չափերին:

«Նիվան» դուրս եկավ փողոցի անկյունից, անցավ ծաղկավաճառի կողքով, հետ գնաց, կանգ առավ: Արթուրը դուրս եկավ մեքենայից, մոտեցավ կնոջը: Գնորդ տեսնելով՝ կինը շողաց ուրախությունից ու գործի անցավ: Հինգ վարդ առանձնացրեց, փաթաթեց թափանցիկ թղթի մեջ ու մանուշակագույն թղթադրամի դիմաց մեկնեց գեկին: Արդեն հեռացող երիտասարդի հետևից մաղթանքի խոսքեր ասաց:

Ծաղկեփունջը խնամքով տեղավորելով նստարանին՝ Արթուրը նստեց դեկին ու «Նիվան» պոկեց տեղից...

...Նախահեղափոխական հինավուրց շինվածքով տան կամարի տակից մի նորագույն «Տոյոտա» դուրս եկավ նրա դիմաց: «Նիվան» կանգ առավ՝ ճանապարհը թողնելով նրան: Հայացքով ուղեկցելով օտարամակնիչ մեքենան ու նրա՝ խիտ գանգուրներով ակնոցավոր վարորդին՝ Արթուրը պտտեց դեկն ու կամարով ներս մտավ: Ութանկյուն հարմարավետ բակում՝ կենտրոնում փարթամորեն ծաղկած շագանակենու տակ, «Նիվան» կանգ առավ:

Պատվանդանին կանգնած քարե Հերակլեսը՝ վեր պարզած ձեռքով, ահեղ տեսք ուներ: Արթուրը հարևանցի նայեց նրան և անջատեց շարժիչը: Սրահի լուսյան մեջ խշխշոց լավեց: Ջեկը շրջվեց. գերին ուշքի եկել, անհանգիստ շարժվում էր բրեզենտի տակ: Արթուրը փնչաց, ոսկրոտ բռունցքն իջեցրեց մորուքավորի գագաթին, բրեզենտի տակ գերին մի պահ սվավաց ու խաղաղվեց:

Ծաղկեփունջը ձեռքին՝ Արթուրը դուրս եկավ մեքենայից, դուռը բանալիով փակեց, քայլերն ուղղեց բակի հակառակ կողմում գտնվող շքամուտքը...

...Կաղնե երկփեղկանի, բարձր, հաստաբետս դռան հետևից մեղմ ու հաճելի մեղեդի հասավ ականջին: Շունչը կտրվեց. մի պահ վարանեց, ապա, հաղթահարելով հուզմունքը, ձեռքը տարավ զանգի կոճակին: Ջանգը գեղգեղաց, դայլալեց, մարեց փափուկ քայլերի մեջ:

– Ո՞վ է,– հարցրեց կանացի երիտասարդ ձայնը:

– Միքայել հրեշտակապետը,– ծիծաղելով ասաց զեկը:

Կողպեքը չխկաց: Դուռը բացվեց: Մերկ մարմինը մի տակ խալաթով պատսպարած, սրբիչը մագերիմ բարձր կապած աղջիկը հավանաբար հենց նոր էր դուրս եկել լոգարանից: Գեղեցիկ էր:

– Ո՞ւմ եք ուզում,– հարցրեց:

Արթուրը թափանցող հայացքով նայում էր նրան:

– Բարև՛, Գալյա:

Աղջիկն ականա առաջ եկավ ու հանկարծ զարմացած կանչեց.

– Արթու՛ր:

Ապահովության կաղնե պատվար դուռը կրնկի վրա բացվեց, ներս առավ զեկին ու շրխկոցով փակվեց...

Արթուրը սովոր շարժումով փորձեց գիրկն առնել աղջկան, բայց աղջիկը հետ քաշվեց:

– Պետք չէ... Խնդրում եմ...

– Ի՞նչ կա, ինչու՞,– հոնքերը զարմացած բարձրացրեց Արթուրը:

Գալյան մի կողմ քաշվեց ու գլխով ցույց տալով բաց դուռը՝ ասաց.

– Ներս անցիր...

Ջեկն աչքի տակով նայելով նրան՝ մեկնեց ծաղկեփունջը.

– Սա քեզ... վերցրո՛ւ...

Գալյան ծաղիկները հպեց դեմքին, շնչեց բույրը, ժպտաց.

– Ինչ լա՛վ են բուրում... Շնորհակալություն...

Արթուրը լուռ անցավ նրա կողքով, մտավ հյուրասենյակ: Աղջիկը հետևեց նրան...

...Աստիճանավանդակին հագիվ հասնող երաժշտությունն այստեղ տեղըտեղին բարձր էր: Սպասքապահարանին, երաժշտության ռիթմին համահունչ, դնչիկը գորովագին խաղացնում էր թավշե սիրունիկ շնիկը: Արթուրը մատով թեթևակի դիպավ նրա քթիկին, ու շնիկի խաղն աշխուժացավ, Արթուրը ժպտաց, շրջվեց՝ նայեց Գալյային:

Աղջիկը, ծաղիկների փունջը շրջանաձև երկարավուն սեղանին՝ հենց սփռոցի վրա դնելով, նստեց թիկնաթոռի ծայրին: Թիկունքում ծածկոցապատված գրասենյակային ռոյալն էր՝ վրան արդեն վաղուց բացված վարդերով ծաղկաման ու շրջանակի մեջ առնված գունավոր մի լուսանկար:

Ջեկը հայացքով նստելու համար տեղ էր որոնում. ընտրությունը կանգ առավ պատի տակ դրված ճոճաթոռին, որի վերևում կախված էր փոքրիկ սրբանկար՝ Միքայել հրեշտակապետի պատկերով:

– Զեզ ժամկետից շու՞տ են բաց թողել,– լռությունը խախտեց Գալյան:

– Հա... մոտավորապես...

Պահապան հրեշտակի հովանու ներքո, ճոճաթոռին օրորվելով՝ Արթուրը ծխախոտ կպցրեց, ծխի քուլան դուրս փչեց ու հեզնեց.

– Դու էլ, երևի, օրերն էիր հաշվում... Ոնց կարողանում, էնպես ապրում, բայց միևնույն է, ինձ էիր սպասում...

Աղջիկը վեր կացավ, անցավ սեղանի կողքով, մոտեցավ բարին: «Պանասոնիկի» ձայնն իջեցրեց, ֆիրմային ծխախոտատուփից մի գլանակ հանեց, կրակայրիչից վառելով՝ շրջվեց դեպի զեկը:

– Գուցե և ավելի լավ, որ քեզ շուտ են արձակել...

– Ի՞նչ ես ասում...

– Մի հեզմիր: Հասկանու՞մ ես... Մենք այլևս չպետք է հանդիպենք... Մի խոսքով՝ ես ամուսնանում եմ: Երկու շաբաթից...

Շարունակելով ճոճվել՝ Արթուրը մատների վրա ինչ-որ հաշվարկ էր անում, ապա նայեց առաստաղին, հայացքը սահեցրեց աղջկա մարմնով, գամեց աչքերին.

– Լսի՛ր, ոնց գցում-բռնում եմ... չի համընկնում: Ինչ է, ցիկլոփոխվե՞լ է:

– Ինչե՛ր ես խոսում,— սրտմտեց աղջիկը:

Ջեկը վեր կացավ տեղից, մոտեցավ դաշմամուրին, հայացքը վարդերի վրայով սահեցրեց լուսանկարին:

Գալյան էր՝ կանգնած մոփ-մոր «Տոյոտայի» առջև՝ զանգրահեր ակնոցավորի քների մեջ: Երաժշտությունը ընդհատվեց: Արթուրը լուսանկարից ժպտացող մեքենայատիրոջ դեմքին կտտացրեց թե չէ, մագնիտոֆոնի ինքնանջատիչը չխկաց:

– Փեսացո՞ւյ է:

– Հա՛:– Աղջիկը հանդուգն նայեց նրան:

Նորից նայելով լուսանկարին՝ Արթուրը հանկարծ մտաբերեց կամարի մուտքի մոտ հանդիպած «Տոյոտան»: Վարորդին հիշեց... Ապա կտրուկ մոտենալով Գալյային՝ վարից վեր զննեց նրան ու չոր նետեց.

– Հանվի՛ր:

Աղջիկը ետ-ետ գնաց, բայց Արթուրը բռնեց նրա ձեռքը, կուպտորեն իր կողմը քաշեց:

– Ո՛ւր: Ոնց որ թե արդեն լվացվել ես:

Պատասխանը շառաչուն ապտակն էր: Ջեկը դառը ժպտաց: Նրա գրկից դուրս պրծնելու աղջկա ջանքերը միայն բորբոքում էին հուսահատ պայքարը: Վրայի խալաթը պատռելով՝ Արթուրն աղջկան տապալեց գորգին: Պայքարը տեղափոխվեց «պարտեր»:

Սպասքապահարանի բյուրեղապակիները զնգզնգացին հատակին գալարվող մարմիններից, շնիկն օրորվեց, մոուրը ճոճեց չինական *բուվանչիկին* բնորոշ դեզեներատիվ պարբերականությամբ:

Պատռելով աղջկա համեստ հանդերձանքի վերջին ծվենը՝ զեկը համբույրներով մխրճվեց նրա ճերմակ պարանոցի մեջ: Աղջկա դիմադրությունը նվազեց: Ուժասպառ քները գորգին բացելով՝ այլևս դադարեց պաշտպանվել:

Պատի հնամենի ժամացույցի սլաքները ցույց էին տալիս մեկն անց քսանյոթ թուպե:

Բազկաթոռը կամացուկ ճոճվում էր: Ոչ մի կողմնակի ձայն չէր քափանցում հյուրասենյակ: Միայն ճռռոց, բյուրեղապակու զնգոց, ժամացույցի թիք-թաք, խուլ հևք, ընդհատ-ընդհատ բարձր շնչառություն՝ իրադրությանը կատարելապես համապատասխան ձայնային խորք: Եվ այս ամենի վրա ոսկեզօծ շրջանակից խիստ կշտամբանքով նայում էր Միքայել հրեշտակապետը:

Աղջկա ոտքն իր ուսին գցած՝ զեկը ուժգին հրոցներով խրվում էր ճերմակ, չքնաղ մարմնի մեջ: Նա մույնիսկ հարկ չէր համարել հանվել, ու նրա ցեխոտ, պետական կոշտուկոպիտ կոշկատակը կտրուկ հակադրվում էր աղջկա կոկած-փայլեցված վարդագույն մանրիկ ոտնաթաթին: Սրբիչն արձակվել էր գլխից, հավանաբար՝ մարտի ժամանակ, ու աղջկա թաց մազերը սփռվել էին գորգին: Աչքերը փակ, ներքևի շրթունքը կծուտելով՝ կամացուկ տնքում էր ամեն հրոցից:

Ժամացույցի թվացույցի վրա մեկն անց կես էր: Մեխանիզմի մեջ ինչ-որ բան բզզաց, ապա քրթքրթաց, ու զանգը սկսեց խփել...

Արթուրը մեկեն ձգվեց: Ճակատի երակները պրկվեցին: Հրոցները դարձան տենդագին, ուժեղ: Դեմքը շառագունեց, աչքերը մթնեցին, ու որպես պղնձամարտի վերջին ակորդ՝ խռպոտ ոռնաց ու փլվեց Գալյայի վրա:

Փողոցից փչող քամին լայն բացեց օդանցքն ու խճճվեց շղարշյա վարագույրի մեջ: Մենյակի լռությունը խաթարվեց վերսկսվող անձրևի խշշոցից:

Գալյան բացեց աչքերը. շնչակտուր հևքը, արդեն սովորության ուժով, շարունակվում էր: Երկյուղած նայեց իր արձակ մազերի մեջ դեմքով ընկղմված Արթուրին, մեղմորեն հպվեց նրա ուսին: Ջեկը դեմքը փոքր-ինչ բարձրացրեց, ապա նորից իջեցրեց: Գալյան թևաթափ ծամածռեց շրթունքները: Հիասթափությունը փոխվեց վիատության, ապա բարկության: Արթուրին հրեց վրայից, բարձրացավ ծնկների վրա, հարվածներ տեղաց նրա գլխին: Կոկորդից անհասկանալի հնչյուններ էին թռչում, դեմքը ողողված էր արցունքներով: Ջեկը բարձրացավ, զարմացած նայեց: Աղջիկը խելացնոր խփում էր: Արթուրը, ձեռքը լայն բացած, մի

շառաչում ապտակ ծեփեց նրա այտին: Գալյան փռվեց գորգին: Արթուրը վեր կացավ, կանգնեց, վերնաշապիկը խրեց վարտիքի տակ: Սեղանից վերցնելով փաթեթից չհանված ծաղկեփունջը՝ նա մոտեցավ ռոյալին, կոկոնները խրեց ծաղկամանում արդեն թռչնող վարդերի փնջի մեջ: Շրջվեց, նայեց հեկեկացող աղջկան ու մտազբաղ ասաց.

– Ափսոս «Տոյոտա» չունեն: *Կապույտի* վրա հավետով կշիների քեզ...

Ու դուրս եկավ սենյակից:

...Փողոցն անձրևից ամայացել էր: Հատուկենտ անցորդներ էին պատահում, որը՝ հովանոցով, որը՝ օձիքը բարձրացրած, որ ջուրը ներս չլցվի: Անձրևի մանրահարվածներից նշանառության օղակներ հիշեցնող ալիքներ էին տարածվում խայտափայլ ջրափոսերում:

«Նիվան» կանգնած էր փողոցի՝ «Յուվելիրտորգին» հանդիպակաց կողմում՝ խանութին շեղակի: Դիմապակու միջով Արթուրը նայում էր, թե ինչպես են հաճախորդները դուրս գալիս խանութից: Վերջին հաճախորդից հետո կապույտ խալաթով կինը ներսից կողպեց դուռը, կախեց «Ընդմիջում» դեղին ցուցանակն ու անհետացավ խորքում:

Ջեկը ձեռքը տարավ մստաբանի տակ, հանեց երկաթյա ծանր ձողը, դրեց կողքին: Ապա պտտեց բանալին. մեքենան պոկվեց տեղից, երթևեկության առաջին գոտի դուրս եկավ ու շրջվեց դեպի «Յուվելիրտորգը»:

Երբ խանութի դռներն ու մեքենայի առաջամասը հայտնվեցին նույն գծի վրա, Արթուրը դեկն ուղղեց, փոխեց արագությանը, կողքից անցնող մարդատարը բաց թողնելով՝ կտրուկ առաջ սլացավ:

Իրավիճակին հարիր հնարավոր առավելագույն արագությամբ «Նիվան» հայտնվեց մայթին ու ողջ թափով մխրճվեց «Յուվելիրտորգի» դռների մեջ:

Ջարդուփշուր ապակիները զոնգոցով թափվեցին, մերկացած փեղկերը թռան տեղից, ու մեքենան խանութ մտավ: Արգելակներ-

րը սուր վնաստացին. «Նիվան» մեխվեց տեղում: Միայն պոչի մասը մնաց դռներից դուրս:

Մետաղյա ձողը ձեռքին՝ Արթուրը ցատկեց մեքենայից:

Ծառայողական հատվածի դուռը բացվեց, հետմախողշում երևացին վախեցած կանայք: Ձեկը վայրենու դեմք ընդունեց, վեր պարզեց իր սոսկալի «զենքը». կանայք հոդս ցնդեցին:

Արթուրը ցատկեց դեպի վաճառասեղանը: Թավշապատ ցուցափեղկերը չէին շլացնում ոսկերչական ապրանքների առատությամբ, բայց ինչ-ինչ զարդեր, այնուամենայնիվ, կային:

Չողը շրխկաց փեղկերին... Իսկ խանութի մոտ արդեն, չնայած անձրևին, եթե ոչ ամբոխ, հետաքրքրասերների բազմություն որ հավաքվել էր: Ինչ-որ տեղ՝ մոտերքում արգելակեց «09»-ը, վարորդն ակնթարթորեն դուրս եկավ մեքենայից:

Մարդիկ չէին հասկանում՝ ինչ է կատարվում խանութում: Անիծյալ շղարշավարագույրները չէին թողնում ներսում մի բան տեսնել: «Նիվան» էլ, շրջակալներին կիպ հագած, խցկվել-մնացել էր դռների մեջ: Հետնապակու պիժոնական վարագույրն էլ իր հերթին էր փակում տեսադաշտը...

Իսկ զեկը՝ խանութի մարգարիտ-մարջանը գրպանները լցրած, արդեն դեկին էր:

Շարժիչը հռնդաց: Պարապ-սարապների ամբոխը ցաքուցրիվ եղավ: «Նիվան» հետընթաց դուրս եկավ խանութից, թափով մղվեց երթևեկելի մաս ու մխրճվեց կողքից սլացող «Մոսկվիչի» կողի մեջ: Երկաթների տիհաճ զխկոցից «Մոսկվիչը» շուռ եկավ սկզբում կողքի, հետո՝ գլխիվայր:

Արթուրը զագագած պտտեցրեց դեկը, մեքենան շրջեց, ապա չորրորդի տակ սեղմեց գազի ոտնակը: Ոստիկանական շչակի մոտեցող ոռնոցի տակ «Նիվան» գնդակի պես սուրաց փողոցով:

Ձեկն արդեն թեքվել էր, երբ դեղմաերկնագույն «Վոլգան», դուրս գալով նույն անկյունից ու կտուրի կապույտ փարոսիկը թարթելով, սլացավ դեպքի վայր...

...Դուրս գալով բանուկ ավտոմայրուղի՝ «Նիվան» խառնվեց մեքենաների հոսքին ու ընթանում էր կանոնավոր արագությամբ:

Անձրևը ողողում էր դիմացի լուսացույցի կարմիր աչքը: Արթուրն արգելակեց առջևից ընթացող շքեղ օտարամակնիշի հետևում, ավտոլ սրբեց ճակատի քրտինքն ու նայեց հայելու մեջ: Հոնքերից վեր արյան հաստ շերտ կար: Արթուրը շրջեց ավերը. թաց էին արյունից: Կողքից լսվեց մոտեցող շշակի ձայնը: Ջեկը լարեց ուշադրությունը:

Հետիոտները ծանրաքայլ կտրում էին գծանցումը, երբ «Նիվան», շրջանցելով առջևի մեքենան ու հազիվ փախցնելով կողքից անցնող կնոջից, մտավ հանդիպակաց գոտի ու սլացավ առաջ:

Վայրկյաններ անց մայրուղին հատող փողոցից խաչմերուկ մտավ հրշեջ մեքենան...

...Նիվան մտավ նեղիկ նրբանցքը, սուզվեց կամարի տակ ու հայտնվելով մի մեծ բակում՝ կանգ առավ:

Շարժիչն անջատելուց հետո Արթուրը չորս բոլորը նայեց ու գրպանների պարունակությունը լցրեց նստարանին: Թանկարժեք իրերի բավականին պատկառելի մի կույտ առաջացավ: Եվ ոսկի կար, և ադամանդ, ճիշտ է, ոչ շատ: Հիմնականում արծաթամարգարտամարջանե խառախուռա էր:

Դիմադարակից բուտերբրոդային կերուխումի փշրանքներով մի տոպրակ հանեց ու միջի բորբոսները թափ տալով՝ տեղը իր ավարը լցրեց: Ապա շրջվեց ու ներքև նայեց:

Բրեզենտի տակ հանգիստ էր: Մատները ճոպանի տակ մտցնելով՝ Արթուրը քաշքշեց գերուն: Սա անհողաբաշխ փնչացրեց: Արթուրը մատներն ազատեց ճոպանից ու բռնցքի մի հարված իջեցրեց Մորուքի ճակատին: Բրեզենտի տակ վերականգնվեց «ստատուս-քվոն»:

Արթուրը դուրս եկավ, մեքենան կողպեց, քայլերն ուղղեց դեպի բակի հակառակ կողմում գտնվող շքամուտքը: Բանալիները նետեց ճանապարհին պատահած աղբամանը: Շքամուտքը, պարզվեց, միջանցիկ էր. անցավ մութ միջանցքով, դուրս եկավ սալարկված նեղիկ փողոցը: Բաճկոնի օձիքը բարձրացրեց, քայլեց մայթն ի վեր՝ կամաց-կամաց լուծվելով անձրևի քողի մեջ:

...Մերկ, աղուտ լամպը ճոճվում էր մրոտ առաստաղից կախված մետաղալարին: Նրա թույլ լույսի տակ ամուրի տղամարդու թափթփված խոհանոցը ներկայանում էր իր ողջ քրեստոմատիական ողորմելիությամբ: Քրքրված մարգահագուստով տարեց մի տղամարդ կանգնած էր փողոցին նայող լուսամուտի մոտ: Անձրևը չէր դադարում: Նրա բարակ շիթերն արծաթին էին տալիս փողոցային լապտերի կապույտ լույսի տակ: Կաթիլները զարկվում էին ապակուն, շիթերով ցած հոսում:

Գազօջախի վրա թեյնիկը սուլեց: Ծերուկն անջատեց գազօջախը. դռան զանգի կերկերուն ձայնը սղոցում էր ականջը: Տնքտնքալով գնաց բացելու:

Ապահովության շղթա-փականը գցելով՝ չիկացրեց կողպեքը, կիսաբաց դռնից նայեց: Նեղ դռնախորշից երևաց Արթուրի թրջված դեմքը:

– Դ-դ-դու՞:

– Ողջո՛ւյն, Ռոմե՛ն,– քիթը քաշելով՝ ասաց զեկը:

– Ողջո՛ւյն, թե որ չես խաբում: Էս ու՞ր էիր, չէիր երևում, թափառակա՛ն:

– Դե բա՛ց արա, *բլի՛ն*:– Արթուրը բարկացած չորս կողմը նայեց:– Ինչ է, էս ճեղքի՞ց զեկուցեմ...

Ռոմենը շղթան զնգզնգացրեց ու դուռը լայն բացեց.

– Դե մտի՛ր...

– ...Ինչի՞ ես եկել,– Արթուրի հետևից խոհանոց մտնելով՝ հետաքրքրվեց ծերուկը:

– Ուրեմն գո՛րծ կա, որ եկել եմ:– Արթուրը շրջվեց:

– Ապրա՛նք է, ի՞նչ է: Ի՞նչ կարգի...

Պատասխանի փոխարեն զեկը ծոցից հանեց փոքրիկ պարկը: Թանկարժեք իրերը թափվեցին կաշուն կեղտաբծերով, հացի փշրանքներով ու հակասանիտարական այլ մանրուքներով լի կեղտոտ մոմլաթին: Թափ տալով պարկը՝ Արթուրը սպասողական հայացքով նայեց Ռոմենին:

Ծերուկի աչքերը շողացին: Փրչոտ թաթը փայլփլող կույտին՝ գորովանքով շոշափեց «գանձը»: Քնքշորեն, ինչպես սիրելի կնոջ ականջաբլթակը կշոյեր, նա բթով ու ցուցամատով շոշա-

փում էր խոշոր մարգարտահատը:

– Ու ինչ ես ուզում սրա համա՞ր,– հետաքրքրվեց նա:

– Հիսուն կուսոկ:

– Շատ ես ուզում, շա՛տ,– մրթմրթաց *բառիզը*:– Քսանը ոչինչ, մի կերպ կճարեն...

Արթուրը լուռ մի կողմ հրեց նրան, քանկարժեք իրերը բուռն առած՝ այն է՝ ուզում էր հետ լցնել, Ռոմենը կախվեց ուսից:

– Կա՛ց, սպասի՛ր... քսանհի՛նգ:

Ջեկը հետ շարտեց նրա քեր: Այդ ժամանակ բառիզը կաղ-կանձեց.

– Երեսո՛ւն, երեսո՛ւն եմ տալիս:

Արթուրը մի պահ լռեց, ապա հազալով ասաց.

– Դե լավ... բայց որ... հենց հիմա:

– Հիմա՛, հիմա՛,– գլխով արեց Ռոմենն ու սկսեց դողդողացող մատներով սեղանից հավաքել ավարը, որ քիչ էր մնում ձեռքից բաց թողներ, ու տեղավորեց մոմլաթե տոպրակի մեջ, որ սիրալիր կերպով պարզել էր Արթուրը:

– Մի քիչ միտի՛ տուր, գալիս եմ:– Ավարը կրծքին սեղմած՝ բառիզը մանր ու արագ քայլերով հեռացավ խոհանոցից:

Ջեկը նստեց աթոռակին: Հանեց ծխախոտը, լուցկին: Ծուխը ներս քաշեց: Թխակապույտ քուլան վեր բարձրացավ, փաթաթվեց խղճուկ լամպին:

Ռոմենը վերադարձավ՝ թղթադրամները գրկում սեղմած: Փողերը թափելով այն տեղում, որտեղ քիչ առաջ «ապրանքն» էր՝ խոր շունչ քաշեց.

– Ահա՛: Երեսուն հատ:

– Լավ է՝ ռուբլիներով չես բերել: Ինչ է՝ էսքանն ատամներո՞վ եմ տանելու:

Բառիզն ուսերը թոթվեց ու շուրջը նայեց: Հայացքը կանգ առավ հնամաշ պարկին, որ մի ժամանակ «ռյուկզակ» էր կոչվել: Մեխից կախված նախկին ուսապարկն իջեցնելով՝ Ռոմենն արձակեց հանգույցն ու հացի չոր փշրանքները մոմլաթին թափ տալով՝ դրեց կողքը:

– Էստեղ՛դ դիր...

Փողերը պարկը լցնելով՝ զեկը հանգույցը ձգեց ու վեր կացավ:

– Դե՛, լավ մնա, ծերո՛ւկ:– Թփփափացնելով բառիզի մեջքին՝ դուրս եկավ միջանցք:

– Հա բայց... չասացիր է՛ ուր էիր կորել...– Արթուրի հետևից գնալով՝ հետաքրքրվեց Ռոմենը:

Արդեն դռների մեջ՝ Արթուրը շրջվեց:

Ծերուկն այդպես էլ պատասխան չստացավ: Լսվում էր միայն աստիճաններով հեռացող քայլերի դմբդմբոցը...

...Անձրևը վերջապես դադարեց: Ամպերի տակից ծիկրակող լուսինն արծաթեց՝ զիշերով սուրացող գնացքի դուրս ցցված կողմ: Երկաթուղու ռելսերն անցնում էին անտառագոտու երկայնքով՝ բոլորելով անտառը:

Արթուրը երևաց վագոնահարթակի կիսախավարում: Ուսապարկ հիշեցնող կապոցը ճոճվում էր դաստակից կախված միակ փոկից: Հասավ ելքին, լայն բացեց դուռը: Դիմահար քամին ռելսերով անցնող անիվների սաստկացող դրոշյունի հետ ներխուժեց հարթակ: Բռնաձողից կառչելով՝ Արթուրը դուրս կախվեց: Ծառերի սև ուրվապատկերներն արագորեն հաջորդում էին միմյանց:

Հետևից խշշոց լսվեց: Արթուրը շրջվեց. դռան կողափայտին սեղմված կանգնել էր հարբած մի աղջիկ: Լողված շրթունքներով ծամծմելով մխացող սիգարետի ֆիլտրը՝ շաղված աչքերով նայում էր զեկին:

Արթուրի հայացքը նրա վրայով անցավ, կանգ առավ արգելալծակի վրա: Ջեկը չանթեց լծակն ու ուժգին քաշեց իր կողմը՝ կոտրելով կապարակնիքը:

Արգելակներն ու աղջիկը միաժամանակ ճչացին: Ծխուկն ընկավ աղջկա բերանից: Կտրուկ կանգառից հավասարակշռությու՛նը կորցրած՝ աղջիկը թռավ ծխուկի հետևից: Ջեկը դուրս թռավ վագոնից, վազեց անտառի կողմը՝ մերթընդմեք սայթաքելով թաց գետնին:

Անշնորհք լաքած եղունգներով մատները ձգվում էին դեպի

դեռ մխացող ծխուկը: Աղջիկը նստած տեղից բարձրացրեց չի-
նարիկը, կպրեց ու ծուխը խոր ներս քաշեց:

Կապույտ քուլան դուրս ձգվեց ելքի դռան սև ուղղանկյան մի-
ջով...

Ջոնն ասես կովկասյան երկարակյացի ծննդյան տորթ լիներ,
որի տերը չի հիշում՝ իր որերորդ հարյուրամյա հորեկյանն է:
Վառվում էին բոլոր լույսերը: Թե՛ լամպերը, թե՛ նեոնային լապ-
տերները, թե մնացած լուսավորող սարքերը: Լուսարձակները
ճառագայթների աչալուրջ ճաղերով սահում էին շրջակայքի
վրայով՝ հիշեցնելով, որ այդ ամենը, այնուամենայնիվ, հորեկյա-
նական տորթ չէ, այլ գոն:

Արթուրը, երկարատև վազքից ամբողջովին քրտնած, բլրի
գագաթին կանգնել, վերևից զննում էր ճամբարը: Ապա սկսեց
ձորն իջնել...

...Լուսարձակի ճառագայթը մթությունից դուրս բերեց հերկած
գոտու առջև ձգվող փշապատնեշն ու սահեց առաջ:

Հայացքը հեռացող ճառագայթին՝ Արթուրը դուրս եկավ քա-
րերի միջից, որտեղ պառկած էր, ու կիսակրթած դիրքով փորձեց
անադմուկ մոտենալ փշալարին: Մնում էր տասը մետր. սկսեց
վազել, ցատկ արեց, անցավ պատնեշը, ապա առանց կանգ առ-
նելու նետվեց դեպի ցցապատը: Հետո վեր ցատկեց, կառչեց
ցցից, որի վրա, փշալարին ոլորված, ամրացված էին կայծակի
արագությամբ գործող ազդանշանիչի զարհուրելի լարերը:

Լուսարձակների գազազած ճառագայթներն այսուայնկողմ
նետվեցին՝ որոնելու գիշերային անդորրը խախտածին, բայց սա
արդեն մագլցում էր վեր: Լարերի վրայով անցնելով՝ գեկը մի
պահ շունչը տեղը բերեց, թռավ մյուս ցցապատին: Ոտքը
պլստաց՝ կրաշաղախի մի մեծ շերտ պոկելով քարապատնեշից,
որից տագնապի ազդանշանն ավելի սաստկացավ, բայց գեկը
հասցրեց կառչել ցցից ու վեր մագլցել. սողացող լուսաշերտը լու-
սավորության գոտի կապեց նրա շուրջը: Պահակային աշտա-
րակից կրակ բացեցին՝ լուսածիր գնդակների վառ կետագծեր

քաշելով մթության մեջ: Ջեկը ցած թռավ. նրա կանգնած տեղում արդեն անվրեպ կրակահերթից ցայտող քարերի շատրվանիկներ էին միայն:

Արթուրը հեռապառ վագում էր արգելագոտով, կրնկակոխ հետևող լուսային գոտուց խուսափելու համար զիգզագներ անում: Գնդակներն անդադար բզկտում էին հերկված փխրուն ջրկացեխը, երբեմն՝ նրան շատ մոտ: Վերջապես հասնելով պատնեշին՝ Արթուրը հավաքեց վերջին ուժերը, պրկվեց, գոռաց ու մի ուսայունով հայտնվեց մյուս կողմում: Ուշացած վերջին կրակահերթը վնգալով անցավ փշալարերի վրայով:

...Արթուրը քամու պես սուրում էր ճամբարային երկար շինության սպիտակեցված պատի երկայնքով: Անկյունադարձին համազգեստային գլխարկով երկու կերպարանք հայտնվեցին նրա դիմաց. հսկիչներ էին:

– Կանգնի՛ր, – գոչեց մեկը:

Ջեկը վազքի մեջ խոյացավ նրա վրա, ոտքի մի հարվածով գետին տապալեց: Երկրորդը այն է՝ ուզում էր թևից բռնել, բայց նա հմտորեն խաբս տվեց, ճակատով խփեց դեմքին, «որպես վերջին արար»՝ թղթադրամներով լի պարկը զարկեց գլխին ու փախավ անկյուն՝ թաքնվելով մթության մեջ:

– Կանգնի՛ր, կանգնի՛ր, սրիկա՛, – հասնում էր ականջին...

...Բարաքում արդեն քնած էին: Տիրում էր ժամանակ առ ժամանակ խոխոռոց-ֆաֆոնգով, զսպանակների ճռռոցով ընդհատվող զիշերային անդորր:

Գետրգի Ստեպանիչը, սովորության համաձայն, կարդում էր գլխավերևում վառվող լամպի լույսի տակ:

Աղվեսը բարձր ֆսաց ու արթնացավ: Մահճակալին նստած՝ շալվարը վրան քաշեց, բոբիկ ոտքերը խոթեց ոտնամանների մեջ, դուրս եկավ միջանցք, քստքստացնելով գնաց դեպի դուռը:

Դռան մոտ քայլերի դոփոփյուն լսվեց: Աղվեսը չհասցրեց դուռը բացել, փեղկն ինքը հետ գնաց, ու բարաք մտած Արթուրը, ոտնատակ տալով ապուշ կտրած զեկին, գնդակի պես սուրաց

միջանցքով:

Աղմուկի վրա Գողը կտրվեց գրքից, տեղում պապանձվեց՝ զարմանքից ծնոտը կախ գցած:

Արթուրը կանգ առավ նրա տարածքում:

– Որսա՛,– գոռաց՝ փողերի տոպրակը նրան նետելով, ու ավելացրեց.– Թաքցրո՛ւ: Երեսուն կտո՛ր է:

Ապա պոկվեց միջանցք, ցատկեց երկրորդ հարկաբաժնի թափուր մնացած մահճակալին և, ինչպես որ կար՝ հագուստով, տեղավորվեց վերմակի տակ:

Առաստաղի լամպը վառվեց:

Բարաքում աղմուկ բարձրացավ, իրարանցում սկսվեց: Մահճակալների ճաղերի արանքից Արթուրը տեսնում էր, թե ինչպես են բոտրագույն եզրակներով գլխարկները մոտենում իրեն: Վերմակը քաշեց գլխին, ամեն ինչ սուզվեց խավարի մեջ...

– Դե՞: Խոսելո՞ւ ես, սրիկա՛:– Կապիտանի ուսադիրներով, սև կաշվե ձեռնոցներով հաղթ, զազիր ոստիկանը բռնուցքի հարվածներ էր տեղում Արթուրի դեմքին:

– Ա-ա՛ն քեզ:– Վերջին հարվածը ծնոտին իջավ, և ուժասպառ կապիտանը կողմ քաշվեց:

Ջեկը բարձրացրեց գլուխը: Դեմքն ուռած էր, կապտուկներից սևացած: Աչքերը բորբոքված էին: Ջարդած հոնքերից, բերանից արյուն էր կաթում: Նա նստած էր հատակին ամրացված աթոռակին՝ ձեռքերը ձեռնաշղթաների մեջ մեջքին ոլորված: Ոտքերը կոճերին հագցրած «ապարանջաններով» գամված էին աթոռակի ոտքերին: Մերկ իրանին հարվածներից մանուշակագույն ակոսներ ու բծեր էին գոյացել:

Կապիտանը կողքից մոտեցավ, պտույտ տվեց ու կրունկով խփեց ուղիղ արևահյուսակին: Արթուրը ցնցվեց: Աչքերը մթնեցին: Պատերը, առաստաղը, դիմացը կանգնած քննիչը, ամբողջը բոտրագույն դարձան...

– Ջո՛ր լցրու վրան,– հրամայեց կապիտանը հսկիչներից մեկին:

Հսկիչը դուլից լիքը բաժակով ջուրը լցրեց զեկի գլխին: Թա-

փանցիկ շիթերը մեջքն ի վար սահեցին՝ փայլուն զիզագներ քաշելով հրեշտակապետի դեմքին:

– Հիմա ի՞նչ, չես երգելու՞:– Զննիչն անցավ մեջքի կողմը, ոտքերով զարկ զարկի հետևից խփեց երիկամներին: Հարվածներից մեկն իջավ Միքայել հրեշտակապետի աչքին: Սուրբը քիթ-բերանը ծռմեց: Արթուրն անսպասելի կծկվեց, կռացավ, ու ոտքը հարվածի պատրաստ կապիտանը թափի հետ թռավ գեկի վրայով, փռվեց գետնին:

– Զա՛ծ,– վեր կենալով վնասաց նա ու ոտքը պարզեց Արթուրի դեմքին, բայց հարվածն անցավ ճարպիկ շարժումով մի կողմ թեքված գեկի քթի տակով:

– Ի՞նչ եք կանգնել: Պահե՛ք դրան:

Հսկիչները վրա պրծան, երկու կողմից ամուր բռնեցին ուսերը:

– Դու դեռ կերգես, զարշելի՛ սողուն,– ամեն հարվածի հետ գոռում էր քննիչը, հայհոյանքներ տեղում: Արթուրը որսաց հարմար պահն ու ատամները խրեց նրա դաստակի մեջ: Ծնոտները ջղաձիգ կծկվեցին: Հսկիչները հարվածների տարափ տեղացին գեկի գլխին: Կապիտանին վերջապես հաջողվեց ձեռքն ազատել ատամների աքցանից: Բայց Արթուրն արդեն անգիտակից փռված էր գետնին:

Զննիչը փորձում էր դադարեցնել դաստակից հոսող արյունը: Հսկիչը մոտեցել, օգնում էր, որ թաշկինակով կապի վերքը:

– Ես գնացի *սանմաս*... Իսկ սրան,– կապիտանը խրեց Արթուրի կողը,– *կարցե՛ր* տարեք...– ասաց, դուռը շրխկացրեց ու գնաց:

...Միջանցքում լուրջյուն էր տիրում: Բայց քիչ անց հնչեց զանգը, ապա չիսկոց լսվեց, աստիճաններ տանող դուռը լայնորեն բացվեց, ներս մտավ զինվորական համազգեստով մի կին՝ փոկից կախված մահակը դաստակին հագցրած: Չեռքը դրան կողափայտին՝ աստիճանների վրա կանգնածներին նշան արեց ներս մտնել:

Միջանցք մտած կանայք շարվեցին պատի տակ. ծեր, միջին տարիքի, երիտասարդ, բոլորովին դեռատի կանայք: Մոտ տասնհինգ հոգի: Բոլորի ձեռքին բաղնիքի պարագաներ կային:

Աղակալած լաթերի տակից նկատվող կարմրած, մաքուր ու փայլուն մաշկով էին:

– Երկու-երկու շարվե՛ք,– վերջինին ներս թողնելով՝ հսկիչը շրխկոցով փակեց դուռը: Կանայք շարվեցին:

Միջանցքի ծայրից աղմուկ լսվեց: Երկու հսկիչ Արթուրին խցից դուրս բերեցին, քները մտած՝ քարշ տվեցին կանանց կողմը:

– Դեմքով՝ պա՛տը,– հրամայեց *պոպկար*-մորաքույրը:

Կանայք լուռ ենթարկվեցին: Միայն մեկը՝ մի բարձրահասակ գեղեցկուհի, թաքուն շուռ եկավ: Տեսավ միայն հրեշտակապետի հեռացող դեմքը՝ սևուկապույտ, ինչպես պրոֆեսիոնալ բոցքա-մարտիկի դեմքը չենպիոնի տիտղոսի համար մղած պայքարից հետո...

...Անսարք ծորակից ջուրը կաթկթում, խառնվում էր արևելյան գուգարանի «աչքի» մեջ աղմկող հոսքին: Ճաղագատված խոր-շի դռան վերևում կախված լամպն աղոտ լուսավորում էր «կար-ցեր» կոշվող բետոնե խոնավ պարկը: Արթուրը գլուխը գետնից բարձրացրեց, դարձյալ երեսնիվայր գցեց հատակին: Քիչ հետո վեր կենալու նոր փորձ արեց. բետոնե անհարթ, քերծող պատից կառչելով կանգնեց, մայեց շուրջը: Խղճուկ պատկեր. ծալովի նստարան՝ կողպեքով պատին ամրացված, գետնից դուրս ցցված անհեթեթ կոճղակ՝ իբր նստելու համար, այնքան նեղ և այնքան սուր, որ վրան կարելի էր մահապատիժ իրականացնել ցից հանելու միջոցով, *պարաշը...* Ու վերջ... Հենվեց դռանը, նախաբազուկը մոտեցրեց բերանին, ատամներով շոշափեց երակը: Զգաց սեփական մսի համն իր բերանում, ործկաց, սրտխառնոցից նվաղեց, ընկավ գետնին:

Արյունը կծած երակից բաբախող շիթով հոսում, մուգ լճակ էր կապում շուրջը...

...Կլորադեմ ճաղատ մարդը քրտնամխած ձեռնաշարժություն էր անում վաֆլի-սրբիչի մեջ: Մահճակալի պարույրները դառը ճոճչում էին նրա տակ: Ուսերին գցած պիժաման սահել, ընկել էր, մերկացրել ճլորած, փռչոտ միսը: Հաստիկի հարևանները,

նրա ինքնատիպ հոբբիին հաշտ, խաղաղ մրափում էին իրենց մահճակալներին: Հետճաշյա հանգստի ժամն էր: Բուդյոնովյան բեղերով տարեց սանիտարը միջանցքից դռան քառակուսի պատուհանի միջով հետևում էր ձեռնաշարժողին: Վերջինս զգաց, մի պահ կտրվեց աստվածընդդեմ գործողությունից, նայեց սանիտարին:

Ըստ երևույթին՝ սանիտարի ահեղ բեղերը բարկացրին նրան: Հանդգնաբար շողացնելով խորանիստ աչքերը՝ նա ավելի մոլեգին տրվեց իր շնությանը:

Սանիտարը զզվանքով թքեց ոտքերի տակ ու գնաց միջանցքի ծայրը...

...Մեկուսարանի միակ մահճակալին՝ դեմքով դեպի պատը, պառկած էր ուսերից մինչև ծնկները զսպիչ կապերով փաթաթված մի մարդ: Երբ դռան կողպեքը չիսկաց, նա ցնցվեց, բայց դիրքը չփոխեց:

– Արթուր,– շեմքին կանգնելով ձայնեց նրան սանիտարը:

Տղամարդը շրջվեց: Այո, Արթուրն էր: Միայն թե խիստ նիհարած, այտերի փոխարեն սև, վաղուց չսափրած խիտ ու ցից մազերով ծածկված փոսեր, խորշոմած մաշկ, աչքերի տակ կախված պարկեր: Ամբողջ դեմքը՝ ապաքինվող սալիների թարմ կարերի մեջ:

– Հը՛, ո՞նց ես:– Մոտենալով զեկին՝ սանիտարն օգնեց նրան նստել մահճակալին:

Արթուրը թոթվեց ուսերը:

– Վեր կաց:– Գթության եղբայրը հողաթափերը հրեց նրա ոտքերի մոտ:

– Ինչի՞ համար:

– Գնում ես ուղեղի էնցեֆալոզրամի:– Հիրավի՝ Էվերեստը մենակ նվաճելը դատարկ բան էր օտար ծագման այդ խրթին բառն արտասանելիս սանիտարի քաշած դժվարությունների համեմատ: Ձեկը հողաթափերը զցեց ոտքերն ու քստքստացրեց դռան կողմը՝ իր «բարեգութին» հենված...

...Հասուն բալը սանձարձակ մազանքով ցուցադրում էր իր

լցված կողերը, շողշողում փարթամ սաղարթի մեջ: Ամառային արևի ճառագայթների տակ կապտակարմրագույն հյութեղ պտուղներն ախորժելի գրգռում էին քիմքը:

Երկու ոստիկան տանում էին Արթուրին բալենու այգով՝ ձեռնաշղթայով մեջքին կապված ոլորված թևերից բռնած: Ձեկին «բարտրից արծակել» ու տարաշխարհիկ նախշերով կարճ պիժամա էին հագցրել:

Բերքի ծանրությունից ճկված ճյուղերն անդիմադրելի գայթակղիչ էին. Արթուրը մեկեն դուրս պրծավ ուղեկցորդ-հսկիչների ձեռքից, թռավ դեպի ճյուղը, ատամների աքցանի մեջ առավ բալի տերևախառն փունջն ու նորից «վայրէջք կատարեց» խոտերին: Բարձրահասակ ոստիկանը վրա հասավ, ոտքով խփեց փորին: Ձեկը երկտակ ծավլեց: Ծամծմված բալը դուրս թռավ իր հյութից կապույտով ներկված նրա բերանից: Ուղեկցող հսկիչը բռնեց պիժամայի օձիքից, բայց Արթուրը պոկվեց նրա ձեռքից, ոտքով խփեց աճուկներին: Հսկիչը ցավից ոռնալով կքեց:

Մյուսը, որ մինչ այդ միայն դիտորդ էր, թռավ, ոտքով զարկեց Արթուրի ուսին ու գետին գցեց: Արթուրը փորձեց բարձրանալ, բայց աքացիների տարափի տակ կծկված գալարվեց: Արդարադատության ասպետը, որ քիչ էր մնում՝ զրկվեր ժառանգներ ունենալու հնարավորությունից, եռանդագին միացավ ընկերոջը՝ սեփական լուման ունենալու արդարության հաղթանակի գործում:

Ձեկը խոտերին թավալվելով փորձում էր խուսափել հարվածներից և անգամ հակահարված էր տալիս, երբ հնարավոր էր:

Բալենու բարալիկ ճյուղը տրտում օրորվում էր քամուց...

Էկրանի մուգ մակերևույթին տկտկոցով կեռումնեռվում էր կանաչ գիծը:

Էկրանի առաջ նստածն Արթուրն էր, որի գլխին ամրացված սարքի ռետինե շերտերից բազմաթիվ լարեր էին դուրս գալիս ու գնում-կորչում էին դռացող ագրեզատի խորքերում: Կողքին կանգնած էր սպիտակխալաթավոր մի տարեց մարդ, թիկունքին շարված էին ուղեկցող ոստիկանները:

Բոլորը նայում էին Էկրանին...

...Ագռավակույտը պտտվում էր լուսադեմի երկնքում, կռիչներով լցնում օդը:

Վաղաժամ արթնացած թռչունների կռվարար ճիչը կախվեց քարե պարսպով շրջապատված, անկյուններից դուրս ցցված պահակային դիտակետերով ազդեցիկ շինության վրա: Ներսում առավոտյան լռությունը ճեղքվեց «Մայակի»՝ ռադիոճայնափողի միջից հետզհետե սաստկացող ազդակոչերով: Հաղորդավարի ձայնը հերթական անգամ հաստատում էր, որ հենց Մոսկվան է, որ հիմա խոսում է, ԽՍՀՄ-ի մայրաքաղաքը, ու օրհներգը թնդաց:

Ագռավակույտը խուճապով ցրվեց օրհներգի հանդիսավոր որոտմունքից: Դիտաշտարակի վրա ժամապահը կծկվեց: Հավանաբար՝ վաղորդյան սառնությունից: Եկատերինյան ժամանակների շինության կամարների տակ երաժշտության որոտը շարունակվում էր: Քնաթաթախ հսկիչն անցնում էր միջանցքով, բանալիների խրճով ծեծում խցերի դուռը, գոռում.

– Подъем! Подъем!...

Օրհներգի վերջին ակորդը լուծվեց արևելյան զուգարանի խռոշում փրփրող ջրի աղմուկի մեջ: Սև գույնի հորիզոնական զոլերով մոխրագույն շալվարը հագին անտերունչի տեսք ունեցող տղամարդը իջավ պարաշի աստիճաններով ու սկսեց լվացվել: Խցի զովավոր համակազմը կամաց-կամաց վեր էր կենում: Դռան փոքրիկ բաքը դրդալով բացվեց, ու քառակուսու միջից *բալանդորի* ճարպոտ դեմքը հայտարարեց.

– Նախաճա՛շ, նախաճա՛շ:

Նախաճաշ ասվածը, որ մի թաս վռիկ, մի կտոր սևահաց, թեյ ու մի գդալ շաքար էր, անցավ լուռումուռ: Ծնոտները սովոր բացուխով մանրամասնորեն որոճում էին անորոշ գույնի պղտոր հեղուկը: Վռիկի մեջ մի հատիկ պինդ բան գտնելու հույսը կորցրած՝ Արթուրը թասը մի կողմ հրեց, անցավ թեյին: «Անտերունչը» ծամել վերջացրել էր և աչքերը կարոտով հառեց «մերժված» ջրապուրին: Արթուրն առանց խոսքի թասը թեթևակի հրեց նրա կողմը: Սա սեղանի լայնքով մեկ ձգվեց, գգուշությամբ վերցրեց վռիկն ու լցրեց իր ամանի մեջ:

Բացովի բաքը նորից ճռռաց, պատուհանիկի մեջ երևաց հսկիչի գլուխը:

– Արթուր կա՞:

– Կա... հա...,– այսուայնտեղից լսվեց մի քանիսի ձայնը:

Արթուրը բաժակը մի կողմ դրեց, շրջվեց դեպի դուռը:

– Հավաքվի՛ր,– հայտարարեց պոպկարը, շխկացրեց դռնակն ու կորավ տեսադաշտից...

...Նախաբաղնիքում՝ ցնցուղաբանից դուրս եկող գոլորշու քուլաների տակ աղմուկ էր, դռվռոց, շլմփոց, ճռճռոց, բզզոց:

Վրժժիկ: Կալանավոր վարսավիրը էլեկտրական ամելիով վերջին գոլը քաշեց մեկի անկանոն գլխին:

– Հաջո՛րդը:

Արթուրը նստեց ազատված աթոռակին:

Վրժժ... Թոթռացող դանակների ատամիկներն անցնում էին արդեն սևին տվող գանգի վրայով ու սպիտակ մաշկի այլանդակ շերտ բացում վզից դեպի ծոծրակ...

...Գոլորշու ամպի մեջ պսպղում էին գեկերի՝ խայտաբղետ դաջվածքներով մարմինները: Տեսարանը մի ամբողջ պատկերասրահ էր ներկայացնում: Վարպետությունը, որով արված էին դաջվածքները, ապշեցնող էր: Մսի գեղարվեստական ձևավորման հավաքածուի մեջ նշմարվեց հրեշտակապետի դաջվածքով ծանոթ մեջքը: Ջրի շիթը լվանում-տանում էր կեղտոտ փրփուրը: Միքայելի դեմքի վրայով...

– Ուշադրությո՛ւն: Առանձնակի վտանգավոր է,– բղավեց ասես Քրիստոսի հայտնությանն ականատես եղած շիկահեր պրապորշիկը:

Արթուրը, գոլավոր հագուստը հագին, դուրս եկավ «պահակակետից»: Շոգի պատճառով բաճկոնն ուղղակի գցել էր մերկ մարմնին, թեքերը կրծքի մոտ իրար կապել, ձեռքին՝ իրերի լղարիկ տոպրակը: Պաղ հայացքը սահեցնելով պրապորշիկի ու երկու ուղեկցորդ-հսկիչների վրայով՝ քայլեց դեպի բանտի արտաքին ու ներքին դարպասների արանքում կանգնած *վորոնկը*:

– Երեսուներե՛ք: Վերջի՛նը,– հայտարարեց մեքենայի թափ-

քում գտնվող զինվորը՝ նրան ճաղադռնակով խցկելով լեփեցուն մեկուսախուցը:

Մեկուսախցում նեղ ու հեղձուցիչ էր: Բաճկոնը հանելն էլ չէր օգնում: Խոնավ մարմինների հպումից քրտինքը ջրի պես թափվում էր:

– Երկա՞ր ես գնում, *քրապոնկ*,– հետաքրքրվեց կողքին հայտնված լուղը:

– Մինչև վերջ...– քրթմնջաց Արթուրը:

– Իրար հետ, ուրեմն...

Պահակախումբը գործի անցավ: Մեկը մյուսի հետևից շրխակալով փակվեցին թափքի ու խցիկի դռները:

Շիկահերը տեղավորվեց վարորդի կողքին ու գլխով արեց՝ շարժվեցինք: Շարժիչը հռնդաց: Դարպասները ժնգժնգալով բացվեցին, ու վորոնկը դուրս եկավ պարսպապատ տարածքից...

...Կայարանի հնամենի զանգերը խփեցին սահմանված քանակով. սլաքները ցույց էին տալիս երեկոյան ժամը վեցը: Կառամատույցում խառնաշփոթ էր, աներևակայելի աղմուկ-աղաղակ: Կանացի ձայնը ձայնասփյուռից ինչ-որ բան էր բլբլում: Բառերը կորչում էին համատարած ժխտրի մեջ: Մարդիկ ճամպարուկներով, արկղերով, ինչով պատահի իրար քերծելով, մղվում էին դեպի վագոնները, որտեղ արդեն խոնկել էր բազմությունը:

Մինչև քարշակի վերջափակ շարժակազմը, կառամատույցն ընդհատվում էր երեք վագոնաչափ տարածությամբ:

Քիչ այն կողմ, ուր աղմուկը մեղմանում էր, լղարիկ կատվաձագը, թռչկոտելով ու խճաքարների վրա պտտվելով, փորձում էր որսալ թեկն կապած թղթիկը, որ վեր էր ձգում ավագ լեյտենանտի ուսաղիքներով երիտասարդ սպան: Մենք նրան հակիրճ *Սիրալէյ* կանվանեցք: Նա պազել էր «փոստատարի» ու քարշակի արանքում գտնվող տարօրինակ վագոնի դռնախորշում: Տարօրինակ՝ լուսամուտների պատճառով, որոնց ապակիները փայլատ էին, անթափանց:

Այս գվարճանքը Ստարլեյին ահռելի բավականություն էր

պատճառում: Ծիծաղից թուլանում էր՝ հետևելով թղթին տիրանալու կատվային անհաջող փորձերին: Բեռնատարի շարժիչի հռնդյունը սպային կտրեց իր գվարճալի խաղից:

Վորոնոկը «վայրէջք կատարեց» ու դիպավ բառացիորեն կես մետրով խճաքարերի փռվածքից բարձր ասֆալտի եզրաշերտին: Խցիկի դուռը բացվեց, դուրս թռավ շիկահեր պրապորշիկը:

– Չամո՛ւռ,– գոռաց վարորդի վրա,– չէիր կարո՞ղ մի քիչ հեռու կանգնել:

– Հիմա: Շատ բարձր է,– լավեց խցիկից:

– Դե լավ,– ձեռքը թափ տվեց շիկահերը՝ շուրջբոլորը նայելով,– պե՛տք չի... Իջի՛ր...

Ստարլեյը պազած տեղից վեր կացավ, ականջ ծակող սուր ձայնով սուլելով դեպի վագոնի խորքը՝ իջավ: Քրոմե սապոգները խշխշացին խճաքարերի վրա՝ անցնելով կատվի կողքով, որը ծվատում էր վերջապես ճանկած թղթի կտորը:

– Գնա՛ց առաջինը,– գոռաց վորոնոկի թափքում մնացած զինվորը՝ մեկուսախցից դուրս թողնելով Լոլոզին: Ջեկը շարժվեց դեպի ելքն ու կանգ առավ:

– Թռի՛ր,– հրեց ուղեկցորդ-հսկիչը:

– Էստե՛ղ, առաջի՛ն:– Շիկամազը Լոլոզին ցույց տվեց վորոնոկի առջևի ելուստը, որի շուրջկալն իրականացնում էին երկու ավտոմատավորներ ու վարորդը:

– Ծնկները ծալա՛ծ:

– Դեհ,– լողլող հսկիչը ձեռքն իջեցրեց Լոլոզի ուսին, որ սա պազած իջնի:

– Երկրորդը...

Ստարլեյը մոտեցավ վորոնոկին: Նրա հետևից գալիս էին հինգ ավտոմատավորներ:

Կառամատույցի եզրին հավաքվել էր հետաքրքրասերների մի խումբ, որ գուցե Էտապավորվողների հարազատներից էր կազմվել:

Շիկամազը պատիվ տվեց մոտեցող սպային, բայց սա ձեռքն անտարբեր թափ տվեց, ապա ձեռքով բարևեց նրան: Նայեց

նստած գեկերին: Արդեն բավական շատ էին: Արթուրն առանձնանում էր իր զոլավոր հագուստով:

Նա շրջվեց, ու հայացքով հանդիպեց Ստարլեյին:

– Երեսուներեքերորդը: Վերջինը:

Ձեկը տեղից վեր ցատկեց, իսկ ուղեկցորդ-հսկիչը, դռների մեջ կանգնած, հարցական նայում էր շիկամազին:

– Ի՞նչ ես սպասում: Բա՛ց թող,– մռթմռթաց սա:

Ներկաներն իրար երես էին նայում: Հետո հայացքներն ուղեցին դռան կողմը, որի բաց փեղկի մեջ մի կերպ խցկված հաստաքամակ զինվորը մեկտեղանոց նեղլիկ խցի «բոքսի» դռնակն էր փորձում էր բացել:

– Ֆյու-ու-յո՛ւ,– հիացական սուլեց պզուկոտ դեմքով մատղաշ տղեկը:

Իսկ հիանալու պատճառ կար: Երկար, սլացիկ ոտքերը սև տրիկոյի մեջ կիպ գրկված, «Աերոֆլոտի» հսկա պայուսակն ուսին՝ ելքի դռան մոտ հաստաքամակ զինվորականի փոխարեն կանգնել էր այն նույն գեղեցկուհին, որը, հրամանն անտեսելով, շրջվել, նայել էր հարցաքննությունից գետնաքարշ իր խուցը տարվող Արթուրին:

Գեղեցկությունը գեղեցկություն է, անգամ սև ու մաշված լաթերի մեջ: Ձեկերը, զինվորները, Ստարլեյը, բոլորը կախարդված նրան էին նայում: Բայց շիկամազն ամեն ինչ փչացրեց. կալանավորուհին կանգնել ելքի մոտ ու չէր գնում, դեռ մի բան էլ ժպտում էր.

– Ի՞նչ ես լռվել, лярва¹¹, դե թո՛իր:

Ժպիտն անհետացավ աղջկա շուրթերից: Նա դեմքը խոժոռեց ու ճչաց.

– Դե գնա՛..., козел¹²... Չէ մի չէ՝ ոտներս ջարդեմ:

Առանց այն էլ կարմրերես козел-ը կաս-կարմիր կտրեց: Խումբը պապանձվել, սպասում էր միջադեպի շարունակությամբ: Շիկամազը չէր հասցրել մի նոր կեղտոտ բան դուրս տալ,

¹¹ քաժ, պոռնիկ

¹² էժ

երբ... կալանավորների սև զանգվածից պոկվեց զոլավոր մեջքն ու իրեն գցեց վորոնոկը: Աղջիկը շփոթվեց, բայց վայրկյան իսկ չկորցրեց՝ գնահատելով պահը. հենվեց գեկի պարզած ձեռքին ու ցած թռավ: Ձեռքերը բաց չթողած՝ նրանք մայեցին իրար աչքերի մեջ:

Շուրջկալից դուրս պրծած երկարաբոյ սերժանտը, ինքնաձիգը թափ տալով, հարձակվեց Արթուրի վրա: Ջեկն իրեն չկորցրեց, ակնթարթորեն պտտվեց ու հարվածը կասեցնելով՝ պտույտի մեջ ուսին հասցրած հուժկու հարվածով նրան փռեց խճաքաբերին:

– Բռնե՛ք դրան, – գոռաց շիկամազն ու նետվեց առաջ:

Պահակախումբը բոլոր կողմերից վրա հասավ. խելագար ծեծկռտուք սկսվեց: Արթուրը բավական լավ դիմադրում էր, պաշտպանվում հարձակումներից: Շիկամազը փորձեց միանալ հարվածողներին, բայց քթին բռունցքի թարս հարված կերավ ու փռվեց գետնին:

Արթուրը անակնկալ հայտնվել էր թափքի դռան տակ, ու թափքին կանգնած ուղեկցորդ-հսկիչը պահը բաց չթողեց՝ ոտքով խփելով գեկի գլխին: Նա տեղում օրորվեց՝ կառչելով զինվորի ոտքից: Հսկիչները վրա տվեցին, հարվածների տարափի տակ Արթուրն ընկավ՝ իր հետևից տանելով վորոնոկի ուղեկցորդ-հսկիչին:

Լոյոզը, էլի մի քանիսը էտապականներից վեր թռան տեղներից, բայց Ստարլեյի հրամանից տեղում չորացան:

– А ну сидеть, суки!¹³

«Մակարովի» սպառնալի փողը ստիպեց նրանց պազել:

Գիտակցությունը կորցրած Արթուրին ոտքով մի կողմ հրելով՝ ուղեկցորդ-հսկիչները հեռացան: Ջոլավոր բաճկոնը ծեծկռտուքի ժամանակ փակել էր գեկի գլուխը, մեջքը մերկացել էր. Միքայել հրեշտակապետն էր՝ վեր հառած աչքերով:

Ծեծկռտուքից մի կողմ քաշված աղջիկը անթարթ նայում էր հրեշտակապետի դեմքին՝ աստիճանաբար հիշելով, որ այդ մեջքն արդեն մի անգամ տեսել է: Այն ժամանակ, միջանցքում...

¹³ – Նստե՛ք հլա, քածե՛ր:

Անհասկանալի ճիչով շուռ եկավ ու տեսնելով կողքին հայտնված շիկամազին՝ «Աերոֆլոտը» իջեցրեց նրա գլխին: Շիկամազը չընկավ անսպասելի հարվածից, այլ նստեց գետնին: Ջինվորները հարձակվեցին աղջկա վրա, ձեռքերը մեջքին ոլորելով՝ քարշ տվեցին «սպողիպին» (այսպես ենք անվանելու տարօրինակ վագոնը):

– «Եռյա՛կ» տարեք դրան,– նրանց հետևից գռռաց Ստարլեյը:– Սրա՛ն էլ...– հայացքով ցույց տվեց Արթուրին: Երկու հսկիչներ նրան մեջքի վրա շրջեցին, երկու կողմից ձեռքերը բռնած՝ քարշ տվին վագոնի կողմը:

– Կանգնե՛լ,– որոտաց հրամանը:

Ինքնաձիգավորները շրջապատեցին կալանավորներին ու «քայլով մ-մա՛րշ» հրամանով տարան ստովիպին:

Կառամատույցում կանգնած անգործները քննարկում էին հենց նոր տեսածը, նայում մռայլ թափորի հետևից...

...Նորալուսինը հայտնվում ու կորչում էր կողքից սուրացող ծառերի հետևում: Ստարլեյը ծխուկը կրակեց մթության մեջ ու պատուհանից հետ քաշվեց: Մոտեցավ, կանգնեց «եռյակի»¹⁴ մոտ:

Աղջիկը, քնատեղին նստած, ծխում էր:

– Զնած չե՞ս, գեղեցկուհի՛:

Անսպասելի ձայնից աղջիկը վեր թռավ, ծխախոտը ձեռքից գցեց: Ստարլեյը քնծիծաղ տվեց, բանալիները զրնգացնելով՝ բացեց ճաղավանդակը: Աղջիկը ոտքով աննկատ ճզմեց դեռ մխացող ծխուկն ու հրեց նստարանի տակ:

– Դե՛-դե՛, մի քիչ տեղ տուր... քեռին նստի,– խուց մտնելով՝ խոսեց սպան:

– Ավելի լավ է պազես, քաղաքացի՛ պետ,– խորամանկ ժպտաց աղջիկը:– Նստելու համար տեղդ չոր կլինի:

Այնուամենայնիվ, մի կողմ քաշվեց:

– Ում համար՝ քաղաքացի պետ, ում համար՝ Սերյոժա,– նա խոսելով տեղավորվեց աղջկա կողքին,– իսկ ում համար է՛լ Սեր-

¹⁴ ռուս.՝ тройник, ստովիպինյան գնացքի խցիկ՝ երեք քնահարթակով

յոժենկա,– ժպտաց Ստարլեյը՝ ավիդ դնելով աղջկա ծնկին:

Կալանավորուհին նայեց նրա ձեռքին, դեմքին ու քնքուշ ձայնով ասաց.

– Թաթդ քեզ քաշի, կե՛ղտ...

Սերյոժան շարունակում էր ժպտալ՝ դեմքին զարմանքի արտահայտություն տալով, բայց ձեռքը հետ չէր տանում, ընդհակառակը, սահեցնում էր վեր՝ դեպի կանացի ոտքի արգելված բարձունքները:

– Թաթդ քեզ քաշի, զգվա՛նք մենք,– ատամների արանքից ֆշշացրեց աղջիկը արդեն բոլորովին այլ տոնով և անսպասելի շրխկացրեց Ստարլեյի ձեռքին:

– Ах ты лярва,– կատաղեց սպան ու, ձեռքը հետ չքաշելով, մյուս ձեռքը մեկնեց նրա կողմը:

Աղջիկն, ավիդ պարզած, ակնթարթորեն վանեց ու այնպես ուժեղ հրեց նրան, որ հետ-հետ գնալով՝ Ստարլեյը զարկվեց ճաղերին: Աղջիկը կծկվեց անկյունում, ֆշշացրեց.

– Չհամարձակվես դիպչել ինձ, սրիկա՛: Թե չէ էնպիսի՝ աղմուկ կբարձրացնեն...

Սպան միանգամից սթափվեց: Շփոթմունքից հազաց, վեր կացավ տեղից ու արդեն հեռանալիս նետեց.

– Լա՛վ, հանգստացիր: Մինչև լույսը բացվելը դեռ շատ կա:

– Դու՛րս կորի՛ր, չքվի՛ր,– շուտասելուկի պես գոռաց նրա հետևից...

...Միջանցք դուրս գալով՝ Ստարլեյը կանգ առավ մյուս «եռյակի» մոտ:

Դեռ գիտակցության չեկած Արթուրը, ձեռքերը մեջքին ոլորած, երեսնիվայր ընկած էր գետնին:

Կայարանի լույսերն աղոտ անդրադարձվում էին վագոնի փայլատ ապակու մեջ: Միջանցքում շարժում սկսվեց: Պահակախումբը մոտենում էր:

Գնացքն աստիճանաբար դանդաղեցրեց ընթացքն ու վերջապես կանգ առավ: Պահակախմբի անդամներին առաջ թողնելով՝ Ստարլեյը նրանց հետևից գնաց վագոնահարթակի ուղղությամբ: Դրսից լսվեց մոտեցող բեռնատարի շարժիչի դռռոցը:

Վորոնոկը՝ թափքի դռնակը բաց, գլավարելով ստոլիպինին մոտեցավ այնքան, որ մեքենայից հնարավոր լիներ վագոն մտնել, ու կանգ առավ: Սկսվեց ուղևորների բարձումը: Բեռնաթափքը բաժանված էր երկու մեկուսախցի: Մեկում տղամարդիկ էին, մյուսում՝ կանայք: Սկզբում բարձեցին մարդկության լավագույն կեսին...

...Արթուրը սթափվեց միջանցքից ականջին հասնող աղմուկից: Փորձեց վեր կենալ: Դժվարությամբ, բայց կարողացավ: Շուրջբոլորը նայելով՝ քայլեց ճաղավանդակի կողմը, աչք ածեց միջանցքը. ոչինչ չտեսավ. դիտանկյունը չափազանց փոքր էր: Ստարլեյը, որ մինչև վորոնոկի մոտենալը հասցրել էր դուրս պրծնել ստոլիպինից, մաքուր օդում ծխում էր՝ հանգիստ զրուցելով տարեց պրապորշիկի հետ:

Մարդկության լավագույն կեսի ներկայացուցիչներին արդեն «բարձել» վերջացրել էին, անցել էին մյուս լավագույն կեսին...

Արթուրը կործքն ու փորը ներս տարավ, ուսերով շարժվեց առաջ ու ձեռքերը բարեհաջող անցկացրեց տակը, ապա նստեց նստարանին ու ծունկը կրծքին տանելով՝ ոտնաթաթն ուսերի արանքով խցկեց ներս: Նույնը կրկնեց մյուս ոտքով:

Ստարլեյը ծխախոտը մինչև վերջ քաշեց ու ծխուկը ոտքերի տակ գցելով՝ գոռաց ստոլիպինում գտվող զինվորների ուղղությամբ:

– Հը՞: Շատ ե՞ք լավելու:

– Վերջ... Շաբա՛շ, – ձայն տվեցին միանգամից մի քանիսը:

Ճաղավանդակին ավելի մոտ գնալով՝ Արթուրը միջանցքի աղոտ լույսի տակ զննեց ձեռքերը: Ցավալի պատկեր: Դաստակի մեջ խրված ձեռնաշղթաների օղակներից բռնցքներն ուռել, մթության մեջ ասես բռնցքամարտի մարզական ձեռնոց լինեին, մատների մաշկը պլակվել էր, դաստակներին լերդացած արյան հետքեր էին: Միջանցքում սաստկացող աղմուկն ու շարժիչի՝ դրսից հասնող հոնդյունը շեղեցին նրա ուշադրությունը: Գնացքը միանգամից պոկվեց տեղից:

Ուղեկցորդներն անցնում էին «եռյակի» մոտով: Նրանցից մեկի ձեռքին մոր էտապականների «Գործերի» տրցակն էր:

– Հե՛յ, կոմանդի՛ր,– ձայն տվեց Արթուրը հետ մնացած զինվորին:

– Ի՞նչ ես ուզում,– շրջվեց սա:

Ձեկը շփոթմունքից հազաց ու մրթմրթաց.

– Պարաշ եմ ուզում վազել...

– Ի՞նչ է ուզում,– հարցրեց այդ ընթացքում նրանց մոտեցած

Ստարլեյը:

– Պարաշ է ուզում գնալ, պե՛տ...

Սպան սևեռուն հայացքով նայեց զեկին:

– Հըը, զոլավո՛ր, էլ անկարգություն չես անի, չէ՞:

Արթուրը տարուբերեց գլուխը, հասկացրեց՝ ոչ մի դեպքում:

Ստարլեյը հանեց բանալիները: Կողպեքը չխկաց, ճաղավանդակը մի կողմ գնաց:

– Դու՛րս արի:

Սպան բանալիների խուրձը մեկնեց զինվորին.

– Վերցրո՛ւ: Ձուլավորին տանում ես միգելու ու բերում ես ինձ...

Է՛,– բռնեց նա Արթուրի ուսը,– կանգնի՛ր հլա: Ձեռքերդ ցույց տուր:

Ձեկն ուռած բռունցքները մեկնեց նրան:

– Ֆյո՛ւ-ու-յո՛ւ,– շվացրեց Ստարլեյը,– տե՛ս, է՛, ոնց եմ ուռել:

Սպասիր տեսնեմ...

Նա գրպանից մի փոքր բանալի հանեց, Արթուրի ձեռնաշոթաներն արձակեց: Հետո նայեց նրա աչքերի մեջ ու ասաց.

– Խուլիզանությանը գլխիդ սարքելու էիր: Ափսոս ես: Կկործանվես ախր... Դե լա՛վ,– թփթփացրեց զեկի ուսին,– գնա՛...

Ու ինքն էլ հեռացավ: Արթուրը ետ նայեց ու հանկարծ քարացավ. հարևան «եռյակի» ճաղավանդակից նրան էր նայում կայարանի ծանոթ աղջիկը:

– Ինչի՞ կանգնեցիր,– հրեց նրան ուղեկցորդ-հսկիչը: Միջանցքով առաջ անցան: Խցերի կալանավորներն արդեն պատրաստվում էին քնելու: Կամանց «կուպեի» մոտով անցնելիս բնակչուհիները, Արթուրին տեսնելով, հիացական ճղճղացին.

– Ի՛նչ տղամարդ է: Արի մե՛զ թող նրան: Ու՞ր ես տանում:

«Եռյակի» աղջիկը գլանակը մատների արանքում տրորեց,

լուցկին չխկացրեց ու ազահաբար ներս քաշեց ծուխը: Թխակապույտ ծուխը ճաղավանդակի շեղանկյունիկների միջով տարածվեց միջանցքում...

Լուրզը պառկած էր երկրորդ հարկաբաժնում՝ երկու քնած հարևանների արանքում: Արթուրին տեսնելով՝ ձայն տվեց.

– Հը՛, եղբայր, դզվեցի՞ր:

Արթուրը գլխով արեց: Ուղեկցորդ-հսկիչը խթեց նրա մեջքը...

Ջեկը մտավ իր մոտ՝ «եռյակ», վերևի դարակից իջեցրեց իրենի կապոցն ու սկսեց քանդել հանգույցը: Երբ զինվորը հեռացավ, միջնորմը թակեցին:

– Հե՛յ:

– Ասա՛, – շուռ եկավ Արթուրը:

– Ողջո՛ւյն:

– Ըհը՛, – հանգույցը չէր քանդվում անհնազանդ մատների մեջ, պետք էր գործի դնել ատամները, ու պատասխանը մի տեսակ մրթմրթան ստացվեց:

– Ո՞նց ես, – հարցրեց աղջիկը:

– Ոնց որ թե՛ նորմալ... Զեզ ո՞նց դիմեմ:

– Վերոնիկա: Իսկ քե՞զ:

– Արթուր:

– Արթու-ուր... – ձգեց աղջիկը:

– Լսի՛, դո՞ւ ինչի ես «եռյակում»:

– Էդպես... Էն կյաժը կա՞, պայուսակով գլխին տվեցի, – բացատրեց նա:

– Այ՛ քեզ աղջիկ, – քմծիծաղեց գեկը: – Անդաստիարակ հո չե՞ս...

– Դու քե՛զ նայիր: Հասել ես գոլավոր շորերի ու չես խրատվել, էլի կրակի դեմ ես գնում: Դու ինչ է, օրենքով գո՞ղ ես, հա՞, – վերջը գլխի ընկավ աղջիկը:

– Չէ հա... Էնպես... ուղղակի ֆրայեր...

Նա մի պահ լռելուց հետո հարցրեց.

– Վաղո՞ւց ես նստած:

– Վեցերորդ տարին է...

– Այ քեզ բան: Դու քանի՞ տարեկան ես:

– Քսանհինգ:

– Да ну-у брось!¹⁵ Մենակ չասես՝ անչափահաս տարիքից են գոլավոր պիժամա հագրել:

– Չէ, ինչի՞ անչափահաս... անցած ամսվանից:

– Թուլացել էի՞ր,– գլխի ընկավ աղջիկը:

– Դեհ...

– Ու... ինչքա՞ն տվեցին:

– Տասնհինգ...

– Ջանգին շատ է՞ր մնացել...

– Ջանգն արդեն խփել էր...

Երկուսն էլ լռեցին: Միայն զսպակների ճռռոցն ու անիվների չկշկոցն էր լսվում լռության մեջ՝ կյանքն ասես ակամա համեմատելով գիշերվա միջով սուրացող գնացքի հետ:

Հիմնական քարշակից բացի միշտ երկրորդն էլ կա: Պոչին: Ու սա ունակ է ամեն ինչ ետ պտտելու:

– Գոնե պատճառ կա՞ր,– վերջապես լռությունը խախտեց աղջիկը:

– Ահ,– ձեռքը թափ տվեց զեկը:– Չգիտե՛մ... Արի ասե՞մ ինչ... Ուրիշ բանից խոսենք, լա՞վ:

– Արի՛: Իսկ ինչի՞ մասին:

Արթուրը սկսեց մտածել: Որպեսզի միտքը պայծառանար, որոշեց ծխել: Հանեց ծխախոտը: Լուցկին չխկացրեց: Հազիվ էր ծուխը ներս քաշել՝ միտքն արդեն մստած էր գլխում:

– Վերոնիկա:

– Ինչ:

– Դու... Ի՞նչ կասես... Դե, մի խոսքով, կուզե՞ս միասին մի քիչ ճամփա գնանք:

– Դե, մենք միասին էլ գնում ենք...

– Ես է՞դ չեմ ասում...

– Ա՛աա, հասկացա՛:– Վերոնիկան խորամանկաբար ժպտաց քթի տակ:

Ձեկը հագաց:

– Ի՞նչ կասես:

¹⁵ – Դե լավ, հա՛:

– Ի՞նչը ինչ կասեմ:

– Ասում եմ՝ կթողնե՞ս հյուր գամ:

– Պիտի մտածեմ,– լուրջ հայտարարեց Վերոնիկան:

– Ա՛: Դե մտածի՛ր:

Ձեկը մի քանի ծուխ ներս քաշեց ու թակեց միջնորմը:

– Դե ի՞նչ: Մտածեցի՞ր:

– Իսկ դու քեզ լա՞վ կպահես:

– Հուսա՛:– Այն ոգևորությունը, որով նա այդ «հա՛»-ն ասաց, հասկանալի էր դարձնում, որ նա ամենեւին չէր պատրաստվում «լավ» պահել իրեն:

Աղջիկը փոթկաց, ձեռքը թափ տալով՝ ասաց.

– Ահ: Մի՛ անգամ ենք ապրում: Գնա բազա՛ր արա *կոնվոյի* հետ... Փող ունե՞ս:

– Ունեմ... *չեքվոնեց*...

– Ֆյու՛,– հիասթափված սուլեց Վերոնիկան:– Էդ չիրիկի դիմաց ով ստորագրություն կդնի:

– Զի՞չ է:

– Հըմ: Զիչ է: Դեռ մի բան էլ կարող եմ «բրապետ» հագցնել, եթե չեքվոնեց առաջարկես... Գոնե ինձ մոտ մի բան լինե՛ր... Թե չէ՝ անիմաստ է...

– Կփորձեմ ամեն դեպքում...

– Թարգի՛: Ավելի լավ է՝ թեյ առ քեզ...

...Ժամապահին անվրդով կոնծում էր միջանցքի վերջում՝ ուղեսյան վրա:

Պահականոցի դուռը բացվեց, ու դուրս եկավ Ստարլեյը: Ձինվորը վեր թռավ տեղից, կեցվածքն ուղղեց, բայց սպան ուշադրություն չդարձրեց նրա վրա և անցավ միջանցքով:

– Արթո՛ւր,– ձայն տվեց աղջիկը զեկին:

– Ի՞նչ:

– Դու նդունո՞ւմ եք,– նրանց խոսակցությունն ընդհատեց հանկարծակի հայտնված Ստարլեյը:

Վերոնիկան զգաստացավ:

– Դու նդունում եմք, պե՛տ,– Արթուրը նայեց սպային ու ավե-

լացրեց:– Գործ կա հետդ...

– Իրո՞ք:– Սերյոժան ձևացրեց, թե խիստ զարմացավ:

– Որ մենք,– զեկը գլխով արեց միջնորմի կողմը,– միասին ճամփա գնանք:

– Միասի՞ն,– չհասկացավ կամ ձև արեց, թե չհասկացավ Ստարլեյը:

– Ո՞ւմ հետ:

– Նրա՛,– Արթուրը նորից գլխով արեց միջնորմի կողմը:– Կես ժամով...

– Կես ժամով... Հըմ: Կես ժամո՞վ, ասում ես... Դե՛ լավ: Հիսուն ռուբլի տուր ու գնա:

– Մոտս մենակ մի չերվոնեց է...

– Դե-ե, եղբայր,– ձգեց Ստարլեյը:– Ուրեմն չիրիկդ քեզ պա-
հի: Լավ տրորի, փափկացրու, ու փաթաթի վրան,– անպարկեշտ
շարժում արեց սպան:– Ու առա՛ջ: Կեցցե՛ տվետական իշխանու-
թյունը...

Այս խոսքերի վրա շրջվեց ու հեռացավ:

– Ասում էի, ախր...

– Ասում էի, ասում էի,– աղջկան կապկեց Արթուրը...

Պահականոցին հասնելով՝ սպան խփեց զինվորի փորին,
մոլտաց.

– Չտեսնե՛մ էստեղ շնթկես:

Ու դուրս եկավ վագոնահարթակ: Ջղային շարժումով տրորեց
ծխախոտը, լուցկին չխկացրեց, բայց չկարողացավ կայցնել. ձեռ-
քերը դողում էին: Մի քանի անգամ ծուխը ներս քաշեց, ծխուկը
զցեց գետնին, տրորեց, վերադարձավ միջանցք...

...– Լսի՛ր, իսկ եղ ո՞վ է մեջքիդ: Քրիստո՞սը,– հարցրեց Վերո-
նիկան:

– Չէ... Միքայել հրեշտակապետը: Ինչի՞:

– Հենց էնպես... Ես նրանով քեզ ճանաչեցի:

– Ճանաչեցի՞ր,– զարմացավ Արթուրը:

– Հա... Քեզ մի երկու ամիս առաջ քարշ տալով տանում էին
միջանցքով, մենք էլ բաղնիքից էինք գալիս:

– Ինչ-որ չեն հիշում:

– Մնում է հիշեի՜ր... Դու էն ժամանակ լրի՛վ անջատված էիր...

Մոտեցող քայլերի ձայն լսվեց:

– Է՛յ, գոլավոր:– Արթուրի դիմաց կանգնած էր Ստարլեյը:

Չեկը անհամբեր նայեց նրան:

– Տու՛ր չերվոնեցո: Էդպես էլ կանենք՝ կթողնեն նրա մոտ:
Հի՛նգ թույլեմ...

Վերջին բառերից Արթուրի ուրախությունը սառեց, բայց ոչ երկար: Նա ձեռքը թափ տվեց, գրպանից հանեց տասանոցը: Սպան արդեն բանալիներն էր զնգզնգացնում: Չերվոնեցն առնելով՝ կրկնեց.

– Հի՛նգ թույլեմ:

Ու նրան տարավ հարևան «եռյակ»...

Այնտեղ արդեն սպասում էին նրան: Վերոնիկան խցի կիսամթում ճոճվում էր վագոնի հետ: Շրթունքը դողում էր: Աչքերը փայլում էին: Լուսաստվերը խաղում էր ձվաձև գունատ դեմքին. ճաղավանդակի շեղանկյունիկները կտրտում էին դեմքը:

Վանդակը բացվեց: Աղջիկը ճանապարհ տվեց, Արթուրը ներս մտավ: Նա բաճկոնը չէր հագել, և ճաղավանդակը, իր տեղը դառնալով, գորշ ձողերով բծավորեց հրեշտակապետի դեմքը:

Տղա ու աղջիկ: Տղամարդ և Կին: Դեմդիմաց կանգնած, անշարժ, առանց մերձեցման որևէ փորձի:

Վագոնը թեթևակի ցնցվում էր. Արթուրը հենվեց որմնադարակիին, որ չընկնի:

Նա կանգնած էր մեջքով դեպի լույսը, կիսամութը ստվերում էր նրա դեմքը, միայն դարակին հենած դաստակն էր լուսավորվում իր տխուր պատկերով:

Վերոնիկայի մուգ նրբերանգներով դեմքը լրիվ փոխվել էր: Դասական գրգռիչ գեղեցկությունը չքացել էր: Դիմագծերը հարթվել, ավելի կանացի էին դարձել: Նրա խոնավ հայացքը տղայի դեմքի վրայով սահեց, փարվեց ջարդված ձեռքին:

Չգույշ, որ չցավեցնի, Վերոնիկան այտուցված ձեռքն առավ ափերի մեջ, հպեց դեմքին, համբույրներով ծածկեց վիրավոր մատները:

Արթուրը սարսռաց, ազատ թևի մեջ առավ աղջկան ու դեմքը

թաղեց նրա մազերի մեջ...

Ստարլեյի դեմքին մի ակնթարթում արտացոլվեցին նրա հոգեվիճակի բոլոր մետամորֆոզները: Տեսարանից ունեցած ակնկալիքը փոխարինվեց խոր հիասթափությամբ, արհամարհանքի աստիճան ահագնացավ ու ի վերջո վերածվեց ատելության: Ժամացույցին նայեց, շրջվեց միջանցքում շարված զինվորների կողմն ու գլխով արեց «եռյակի» կողմը:

Ճաղավանդակը սահուն կողմ քաշվեց: Արթուրը դեռ փաթաթված էր Վերոնիկային, երբ զույգ ձեռքերը ճանկեցին նրա ուսերը ու դուրս քաշեցին միջանցք: Աղջիկը փորձում էր նրան «եռյակի» խորքը ձգել, բայց վերջին պահին մեկը հրեց նրան, ու ճաղավանդակը շխկոցով փակվեց:

Արթուրը շփոթված շուրջը նայեց: Չորս կողմը զինվորներ էին: Նրանց հետևում կանգնած՝ Ստարլեյը եղունգով թկթկացրեց ժամացույցի ապակուն ու ժպտալով, ասես ոչինչ չէր եղել, ասաց.

– Հինգ լոպեն անցավ:

Արթուրի դեմքի շփոթմունքն ատելության փոխվեց: Նա պոկվեց ուղեկցորդ-հսկիչների ձեռքից, հարձակվեց սպայի վրա, վզից քաշեց ու զցեց գետնին: Ապուշ կտրած զինվորները սրափվեցին ու հասան պետին օգնելու:

Պետը շնչահեղձ էր լինում: Կաս-կարմիր կտրած դեմքն արդեն համարյա կապտում էր: Նա փորձեց ձեռքը ատրճանակին տանել, բայց Արթուրը ծնկով հատակին սեղմեց նրա դաստակը: Ջեկի ճակատի երակները ցցվեցին: Ինքն էլ Ստարլեյից պակաս կարմրատակած չէր: Աչքերն ուր որ է՝ դուրս կթռչեին բներից: Թալտում էին լարված ջլերը...

Սպային մի կերպ փրկեցին: Հսկիչն առջևից հարձակվեց, ոտքով տակից խփեց Արթուրի ծնոտին: Հարվածն ուժեղ էր, զեկը հետ շարտվեց՝ Ստարլեյին թողնելով: Սա, հագիվ շնչելով, սողալով մի կողմ քաշվեց: Արթուրն արդեն ուշագնաց էր, բայց հսկիչները մոլեգին մեքենայությամբ շարունակում էին խփել: Հետո, թևերից բռնած, քարշ տվեցին բաց «եռյակի» կողմը, ոտքի վրա կանգնեցրին ու բաց թողին: Անգամ չթողեցին, որ ինքնիրեն ընկներ: Լոնդի սերժանտը կողային ցատկ կատարեց ու սապոզի

քթով դեմքին հասցրած հարվածով նրան խփեց «եռյակի» պատին: Ձեկը սահեց գետնին ու գլուխն անբնական ձևով հետ գցած՝ անշարժացավ: Ճաղավանդակը նրան շոնդյունով տրոհեց շեղանկյունների...

Իսկ Վերոնիկան անհավասար պայքարի մեջ էր մտել զինվորների հետ, դիմադրում էր նրանց, ճշում, կծում էր՝ թույլ չտալով, որ իրեն միջանցք հանեն: Բայց զինվորները «եռյակից» դուրս քաշեցին նրան: Աղջիկը հսկիչների ձեռքերի մեջ ջղաձիգ գալարվում էր և երբ քրեց մեկի երեսին, զինվորը նրա մազերը բռնեց, փաթաթեց ձեռքին ու, ինչպես ոչխարին մորթելու են տանում, քարշ տվեց ստողիպինի երկայնքով:

Իրարանցումից արթնացած ուղևորները սպառնալից ցնցում էին ճաղերը: Ձինվորները բոլոր կարելի-անկարելի մեթոդներով փորձում էին կարգի հրավիրել նրանց, բանալիների խրճով շրխկացնում յուրօրինակ համերաշխության ցույցի խանդավառ մվիրյալների՝ ճաղավանդակներին կեռված մատներին:

Վերոնիկային քարշ տալով տարան կանանց «կուպե» ու զցեցին ներս: Աղջիկը հետ մղվեց, որ դուրս գա, բայց ճաղավանդակը շրխկոցով փակվեց նրա դեմքին:

– Արթո՛ւր, Արթո՛ւր, – գոռում էր նա ու ցնցում վանդակը: Բանալիների խուրճն իջավ ուղիղ դեմքին: Նա ճչաց, ցավից կուչուձիգ՝ ընկավ կանանցից մեկի գիրկն ու սկսեց ցնցվել սրտակեղեք հեծկտոցից...

Պահակախումբը, գործն ավարտած համարելով, կորավ պահականոցի խորքում: Մնաց միայն ժամապահը, որ ուղեսյան վրա տեղավորվելով՝ գրպանից հանեց ծխելիքն ու սկսեց երանագին բքել...

Նույն կիսապառկած դիրքով հատակին ընկած, հսկիչների գնալուց հետո էլ, Արթուրը օրորվում էր վագոնին համընթաց՝ այդպես էլ գիտակցության չգալով...

Ստողիպինում համընդհանուր դադար էր: Անիվների չկշկոց-ճռռոցով, փնչացնելով անցնում էր գնացքը: Ուրիշ ոչ մի ձայն:

Լոլոգի քունը չէր տանում: Հենվելով արմունկին՝ մերթընդ-

մերք նայում էր շուրջբոլորը, մրափող հարևաններին: Քիչ հետո քեքվեց փորի վրա, ոտքերը մտցրեց երկրորդ հարկաշարքի միջնադարակի քառակուսի խորշի մեջ ու իջավ: Ներքևի քնատեղերին մրափող ուղևորներից մեկին հրեց, արթնացրեց, ցուցամատով կանչեց իր մոտ: Սա, մի քանի քայլ չարած, փռվեց գետնին՝ ծնոտին իջած բռունցքի հարվածից: Աղմուկից արթնացած երկրորդ ուղևորն արժանացավ նույն բախտին:

Ժամապահը ծանրաքայլ անցնում էր միջանցքով:

– Հրամանատար,– նրա հետևից լսելի շշուկով կանչեց Լոլոզը:

– Ի՞նչ ես ուզում:

– Պարաշ գնամ...

– Չի՛ կարելի,– փքվեց զինվորը և նույն պահին էլ փափկեց՝ գեկի ճկուն մատների մեջ փայլին տվող կապույտ թուղթը տեսնելով:

Ժամապահը նայեց չորսբոլորը ու ճաղավանդակի շեղանկյունից իրեն պարզած հինգանոցը վերցնելով՝ բանալիները գնդացրեց:

– Դո՛ւրս արի:

Լոլոզը ծխախոտը հանեց բերանից ու դուրս եկավ միջանցք: Խուցը փակելիս ժամապահը կողքով էր կանգնած, և գեկը բռունցքի անսպասելի հարված իջեցրեց նրա ծնոտին: Ծնոտը ծռվեց, ձեռքերը թուլացած կախվեցին, երկրորդ հարվածը գետնին փռեց հազիվ ոտքի վրա մնացած զինվորին:

Նայելով վնասագերծված զինվորին՝ Լոլոզը թուլացրեց բռունցքը: Դեռ միացող ծխուկն ընկավ հատակին...

«Մակարովը» ձեռքում ամուր պահած՝ գեկը ոտքի մատների վրա գաղտագողի մոտեցավ պահականոցին: Ազատ ձեռքով թափով մի կողմ հրեց դուռը, կանգնեց շենին ու կրակ բացեց. կրակոց կրակոցի հետևից: Քնաթաթախ հսկիչներն ընկնում էին, արյունաքամ լինում՝ չհասցնելով նույնիսկ ոտքի ելնել: Ուսը վիրավոր Ստարլեյը ձեռքը տարավ ավտոմատին, բայց վերջին՝ ութերորդ փամփուշտը ճեղքեց նրա գանգը, ու նա երեսնիվայր փռվեց հատակին:

Լոլոզը ձեռքն իջեցրեց: Ատրճանակն ընկավ թուլացած մատ-

ների արանքից, դորդոցով զարկվեց հատակին:

Ծանր ճաքակոշիկները չմփալով անցնում էին լուսամփոփի մուգ կապույտ լույսի տակ սևին տվող արյան լճակի միջով: Մեկի անշնչացած մարմինն անկողնուց գլորելով՝ զեկը նստեց նրա տեղը, թիկունքը հոգնած դեմ տվեց պատին:

Ստոլիպինը գվվում էր անհանգստացած մեղվափեթակի նման: Ամենուրեք ցնծություն էր: Ուղևորները թափվում էին միջանցք, շնչակտուր լինում խանդավառ գրկախառնություններում: Մեկը հեկեկում էր:

– Արթուր, դե վեր կաց, Արթուր,– Վերոնիկան քաշքշում-քրքրում էր ուշքի չեկող զեկին: Վերջապես նա բաց արեց աչքերն ու նայեց շուրջը:

Աղջիկն ուրախությունից ճչաց, խելահեղ փարվեց կրծքին...

Խնդության գլխավոր մեղավորը՝ Լոլոզը, անցնում էր խայտացող ամբոխի միջով: Երեսնամյա տիկինը, նրան տեսնելով, վիզն ընկավ, համբույրներով թաղեց իր տաք գրկում:

Վագոնահարթակ տանող դուռը բացվեց. Արթուրն ու Վերոնիկան հարթակ դուրս եկան: Աղջիկը նայեց շուրջբոլորը, նվաղեց հեռավոր ծփանքից.

– Տե՛ս... Ծո՛վը...

Արտաքին դռան լուսամուտից երևում էր ծագող արևի բոստով ճառագող ծովային հեռաստանը:

Արթուրն աչքերով որոնեց գտավ արգելալծակը, չանթեց այն ու կապարակնիքը ջարդելով՝ իր կողմը քաշեց:

Արգելակների վնգոցը միախառնվեց խլրտուն ամբոխի ցնծության ճիչերին: Հանկարծակի կտրուկ արգելակումից բոլորը փովեցին գետնին: Գնացքը կանգ առավ:

Լոլոզը փորձեց վեր կենալ, բայց տիկինը, տաքատի գոտուց բռնած, նորից ներքև քաշեց նրան ու անհագուրդ համբույրներով ծածկեց բերանը:

Կանգ առած շարժակազմից դուրս եկան երկու ուղևոր և լանջն ի վար վազեցին դեպի ծովը, առջևից՝ Վերոնիկան, նրանից մի քիչ հետո՝ կաղին տվող Արթուրը: Ծովը դյուրում էր, կան-

չում, ալիքներով լիզում ավազները: Վազքի մեջ աղջիկն արդեն վրայից պոկել էր հագուստը, և հիմա՝ մերկ ու գեղեցիկ, ցատկեց դեպի ավան ու շրջվեց: Ծագող արևը ոսկով երիզեց նրա նրբակերտ մարմինը:

Արթուրը կանգ առավ, ժպտաց, ձեռքով արեց:

Իսկ Վերոնիկան արդեն ծովն էր մտել: Հետևից շիթեր էին ցայտում: Նա վազքի մեջ նետվեց լողալու:

– Վերոնիկա-նիկա-իկա՜, – արձագանքը սփռվեց կապույտ մակերևույթին:

Աղջիկը շրջվեց, ձեռքով կանչեց: Արթուրը հենց այդպես՝ հագուստով, նետվեց ջուրն ու լայն թևերով ճեղքեց ալիքները:

Անորոշ մուգ բիծը՝ հեռացող Վերոնիկան, շարունակ աչքի առաջ էր: Բայց հանկարծ հերթական ալիքը մեկեն իր տակն առավ նրան ու երբ հետ քաշվեց, առջևում արդեն տուկ ծովի մերկ լազուրն էր: Աղջիկը չկար:

– Վերոնի՜կա, Վերոնի՜կա, – Արթուրը գրեթե մինչև գոտկատեղը բարձրացավ ջրից: Ոչ ոք չկար: Դատարկ կապույտ եզերքն էր:

Արթուրը սուզվեց:

Ջուրը՝ սկզբում երկնագույն, սկսեց աստիճանաբար մթնել նրա աչքերի առաջ, մինչև որ կատարելապես սևացավ: Շուրջն ամեն ինչ խավարեց...

...Գնացքը կանգնած էր: Ստոլիպինում աղմուկ էր, իրարանցում. բեռնաթափում էին: Ստարլեյը մոտեցավ «եռյակին»: Խցի դուռը բացելով՝ մոտեցավ կիսապառկած դիրքով գետնին ընկած Արթուրին:

– Է՛յ, – ճտքակոշիկի քրոմե քթով թեթևակի հրեց նրան սպան: Ձեկը չշարժվեց:

Ստարլեյը կռացավ, թեքվեց նրա կողմն ու հանկարծ սարսափահար ետ-ետ գնաց:


Ժպիտը սառել էր Արթուրի կապտած շրթունքներին...

Հայտնվեց վորոնոկը՝ մեկուսախցերի բաժանված քափքով:
Խցերից մեկում ժխոր էր: Մյուսը կանանց խուցն էր:

Դեմքը ճաղավանդակին սեղմած՝ Վերոնիկան անթարթ նայում էր ստոլիպինի դռան շրջանակի մեջ մերթընդներթ երևացող զեկերին, որոնք շտապում էին նոր-նոր լցվող վորոնոկի կողմը:

Ամեն անգամ, երբ հարթակին ուղևոր էր երևում, աղջկա աչքերում ամկայծում էր հույսը և անմիջապես էլ մարում: Արցունքները գլորվում էին այտերով, բայց նա չէր մաքրում դեմքը՝ վախենալով բաց թողնել նրան, ում սպասում էր:

Իսկ սևազգեստ մարդկանց անվերջանալի շարանը հայտնվում էր ու անհետանում...



ՀՈՒՐԻ



Երկրագնդի բնակչության մեծ մասը հոր-
բի ունի: Կարևոր չէ՝ ինչ հորբի: Ոմանց
համար նամականիշ հավաքելն է սի-
րած զբաղմունք, մյուսների համար՝ սպորտը, երրորդների հա-
մար՝ կիրառական արվեստը: Ես էլ հորբի ունեմ: Ճիշտ է՝ մի քիչ
յուրօրինակ, բայց դե ունեմ...

Բանն այն է, որ ամողջ քնից ազատ ժամանակս սիրո վրա եմ
ծախսում: Չէ, չէ, դուք ճիշտ չհասկացաք: Ասում եմ՝ սիրո: Պետք
չէ ամեն ինչ սեքսին վերագրել:

Ես վաղուց եմ այդ գործի հիվանդը: Երկրորդ դասարանից:
Հենց ինձ հայտնեցին, որ աղջիկները գոյություն ունեն ոչ միայն
այն քանի համար, որ քաշես նրանցից անհաջող կախված ամեն
ինչից, ես իսկույնս եթ, առանց հետաձգելու, սիրահարվեցի մեր
դասարանի՝ իմ կարծիքով ամենասիրուն աղջկան: Դա պատա-
հեց պարի դասին: Դպրոցում պարի խմբակ էր բացվել, ու քանի
որ այդ ժամանակ սպորտի հանդեպ առանձնապես սեր չունեի,
ինձ պարի տվեցին: Հիշում եմ՝ սարսափելի դիմադրում էի, այն-
պես որ մորս մեծ դժվարությամբ հաջողվեց ինձ պարասրահի
դռնից ներս հրել: Պարուսույց Կոլյան, հայրանունը չեմ հիշում,
խղճալի հայացքով ոտքից գլուխ չափեց ինձ, հետո ձեռքս բռնեց
ու տարավ... նրա մոտ: Հենց այդ ժամանակ էլ առաջին անգամ
սիրահարվեցի նրան:

Նա սիրունիկ էր՝ բաց գույնի մազերով, կապուտաչյա, ու ի լրումն այդ ամենի՝ սպիտակ շորով ու նույն գույնի էլ կոշիկներով: Ընդհանուր պատկերի վրա իմ փոքրիկ փերին ինձ սպիտակ վարդ էր թվում՝ ուղտափշի մազառուտում: Այսպես ուրեմն, ես սիրահարվեցի...

Մեզ երկար շաբթով երկու-երկու կանգնեցրին ու պատվիրեցին իրար ձեռք բռնել: Ես որսացի նրա խոնավ ձեռքը, ու հավանաբար՝ շատ կտրուկ, քանի որ նա զարմացած աչքերը հառեց վրաս:

– Ի՞նչ ես անում...

Ես չհասցրեցի պատասխանել: Երաժշտությունն սկսվեց, Կոլյան ծափ տվեց, ու մենք գույգ-գույգ շրջանաձև քայլեցինք: Հիշում եմ՝ ոտքերս չէի զգում: Աչքերս կլանում էին նրան, իսկ նա իմ հայացքներից, չգիտես ինչու, նյարդայնանում էր: Անընդհատ շրջում էր իր փոքրիկ դեմքը կամ հակառակը՝ բարկացկոտ շուռ էր գալիս իմ կողմն ու ինչ-որ բան փսփսում: Բայց ես ոչինչ չէի լսում: Երջանիկ էի, որ բռնել եմ այդ ճերմակ ձեռքը, զգում եմ այն անկրկնելի բույրը, որ գալիս է միայն աղջիկներից, նայում եմ նրա՝ երկնքի մման կապույտ աչուկներին: Ու հանկարծ...

– Ստո՛ւպ, ստո՛ւպ, ստո՛ւպ:

Իմ դիմաց կանգնած էր դժգոհ Կոլյան:

– Ինչի՞ ես քայլքը խախտում, հը՞: Երաժշտությունը չե՞ս լսում:

– Անընդհատ ոտքերիս է բարձրանում,– նվնվաց մեր դիմացի գույգի տղան:

Ես կանգնած էի՝ ամբողջովին կարմրատակած ու շփոթված, ու չգիտեի ինչ պատասխանել: Հանկարծ հնչեց աղջկա զրնգուն ձայնը.

– Ինձ էլ է խանգարում: Անընդհատ դեմքը ծամածռում է:

Դա վերջնականապես ջախջախեց ինձ: Ես աչքերով ազատ շքամուտք էի փնտրում, բայց մոտակայքում շքամուտք չկար, քանի որ մենք գտնվում էինք դպրոցի նկուղում, որը պարասրահ էին դարձրել: Ես միշտ աչքերով շքամուտք եմ որոնում, երբ հանկարծ սաստիկ նեղվում եմ ու ուր որ է՝ պիտի հեծկլտամ: Դա ինձ

Լյոնյան¹⁶ է սովորեցրել: Նա ինձ ընդհանրապես շատ բան է սովորեցրել: Լողալ, հրաձգարանում օդածիզ հրացանով կրակել, նույնիսկ կռիվ անել: Հիշում եմ՝ ինչպես էի կատարելագործում ծնոտին աջով հարվածներս, ու դա անում էի ոչ թե ինչ-որ բանի վրա, այլ ոչ այլ մեկի, քան իր ծնոտին: Մի անգամ նա ինձ բռնեցրեց հեկեկալիս ու դրանից հետո լուրջ խոսակցություն ունեցավ հետս: Լյոնյան ասաց, որ ես տղամարդ եմ, իսկ տղամարդիկ չպետք է լացեն, բայց եթե շատ եմ ուզում, ուրեմն պիտի իսկույն ազատ շքամուտք գտնեմ, թաքնվեմ այնտեղ, արագ լաց լինեմ, դեմքս սրբեմ ու նորից, ասես ոչինչ չի եղել, դուրս գամ մարդամեջ: Դրանից հետո ես դժվար պահերին միշտ հիշում եմ Լյոնյային ու շքամուտք եմ փնտրում: Սովորաբար մոտակայքում շքամուտք չի լինում, այնպես որ ստիպված եմ լինում մտքումս լացել: Այդպես, նույնիսկ, ավելի հարմար է:

Եվ այսպես, ես շքամուտք չգտա, իսկ շուրջս աղմուկը գնալով սաստկանում էր: Ես մի հալածված գազանիկ լինեի ասես, որի վրա բոլոր կողմերից շներ էին հարձակվել, ու յուրաքանչյուրը ջանում էր ավելի ցավոտ կծել: Երեխաները մեծերից են օրինակ վերցնում և երբեմն իրենք էլ դաժանություն են անում, թեկուզ չգիտակցված: Ընդամենը մի քանի բռնություն նրանք ինձ հիշեցրին իմ բոլոր թերությունները, բոլոր սխալները, ու, որ ամենասարսափելին էր՝ այն, որ ես գեր եմ:

– Խո՛ղ,– ուղիղ իմի դիմաց հայտնվեց ինչ-որ մեկի խոխոռացող մոռուր:

Այդ խոխոռոցը խաչ քաշեց իմ պարային կարիերայի վրա: Աջ ձեռքս ինքնըստիքյան բռունցքվեց, ու ես այնպես, ինչպես սովորեցրել էր Լյոնյան, ամբողջ ուժով իջա ինձ վիրավորանք հասցնողի ծնոտին: Սա ձեռքերը թափահարեց ու մեջքի վրա փռվեց գետնին: Մի ակնթարթում դահլիճում քար լռություն տիրեց: Մյուս երեխաները վախեցած ինձ էին նայում, իսկ ես դեռ կանգնած էի բռունցքներս սեղմած ու կախարդվածի պես հայացքս սևեռել էի տապալվածին: Այդ թմբիրից ինձ հանեց ականջիս սուր ցավը: Հետո ինձ համարյա օդով քարշ տվեցին դեպի

¹⁶ Լեոնիդ Ազգալոյան

դուռը ու շարտեցին միջանցք:

– Էլ քեզ էստեղ չտեսնեմ, պարագի՛տ,– մատ թափ տալով սպառնաց Կոլյան ու դուռը շխկացրեց քթիս:

Մի քիչ կանգնեցի մութ միջանցքում, ապա քարշ եկա դեպի աստիճանավանդակը: Հասա ու հիշեցի, որ շքամուտք էի փնտրում, իսկ նկուղը շատ հարմար փոխարինող էր: Բայց ես ամենևին չէի ուզում բարձրաձայն լաց լինել: Մտքերի մեջ ընկա՝ հեծկլտալ հիմա՞ «ավանտ՞վ», քե՞ հետաձգել ու լաց լինել մի ուրիշ անգամ: Իմ փոխարեն ամեն ինչ որոշեց նկուղից եկող ոտնաձայնը: Որոշելով այլևս չփորձարկել ճակատագիրս՝ ես դուրս թռա մախսարահ ու վազեցի դեպի դպրոցի դուռը:

...Իմ սերը բավական երկար տևեց՝ մինչև երրորդ դասարանի վերջը: Տանջալից էր, անպատասխան: Ծերմակ վարդիկը սկզբունքորեն անտեսում էր իմ բոլոր հավակնությունները, ու ես, անկեղծ ասած, այն ժամանակ մեր բաժանումից մի տեսակ թեթևություն զգացի: Այդ տարիներին ամեն դասարանում քառասուն կամ ավելի աշակերտ կար, ու դպրոցի տնօրինությունը որոշում կայացրեց ևս մեկ՝ հավաքովի դասարան կազմել: Գնացողների խումբ ընկավ մասնա: Մայրս հետո ծիծաղով հիշում էր, թե ինչպես էի հեկեկում, երբ իմացել էի, որ իմ սիրուն հեռացնում են ինձանից: Իսկ ինձ համար դա ամենևին զվարճալի չէր:

Հավաքովի դասարանը տեղավորեցին դպրոցի մյուս թևում: Նրան սկսեցի ավելի ու ավելի հազվադեպ տեսնել: Սկզբնական շրջանում մա վազում էր մեզ մոտ՝ ընկերուհիների հետ շփվելու, բայց այդ այցելություններն աստիճանաբար նվազեցին: Նվազեց մասն իմ բուռն սերը:

Անցավ հինգ տարի: Ես փոխվեցի իններորդ դասարան: Կյանքն ինձ այն ժամանակ կատարյալ տոն էր թվում: Ես ամեն հերթական երեկույթի ժամանակ սիրահարվում էի սրան-նրան, մի շաբաթ ապրում էի մինչև ականջներիս ծայրը սիրահարված, բայց շուտով իմ կրքերի հերթական առարկայի մեջ ինչ-որ թերություն էի գտնում ու, ինչպես հապշտապ սիրահարվել էի, այդպես էլ հիասթափվում էի:

Մի հրաշալի օր ես դպրոցից տուն էի վերադառնում շրջանցիկ

ճանապարհով: Աշուն էր: Արդեն բավական ցուրտ էր. նոյեմբերի առաջին օրերն էին: Ավարտվում էր ուսումնական տարվա առաջին քառորդը: Եվս մեկ օր, ու կսկսվեր մեկշաբաթյա արձակուրդը: Տրամադրությունս հրաշալի էր, քեյսը թևատակիս քայլում էի՝ չափելով կողքովս անցնող ամեն աղջկա: Հանկարծ ուշադրությունս գրավեցին ինչ-որ մեկի սլացիկ ոտքերը, որ արագորեն քայլում էին ինձնից քսան մետր հեռավորության վրա: Աղջիկը միայն հետևից էր երևում, բայց նրա կերպարանքը՝ մեջքին թափված մազերով, ինձ ծանոթ թվաց: Քայլերս արագացրի: Հասավսարվելով աղջկան՝ նայեցի նրա դեմքին ու...

Իմ ճերմակ վարդն էր: Միայն թե այժմ իմ առջև կանգնած էր ոչ թե սիրունիկ աղջնակ, այլ արդեն գեղեցիկ մի օրիորդ՝ վառ արտահայտված մի բարեմասնությամբ, որը նկատի ունենալով՝ ծանոթներիցս մեկը նրա մասին ութ տարի հետո կասեր. «Նա չափազանց կլին է...»:

– Ողջո՛ւյն,– ժպտաց նա:

– Ողջո՛ւյն,– իմ ձայնն ինձ սպանդանոցում մորթվող ոչխարի խոխոռոց թվաց:

Այնուհետև խոսակցությունը շարունակվեց անիմաստ թեմաներով՝ ո՞նց ես, ի՞նչ ես, ուր ես ուզում ընդունվել դպրոցից հետո և այլն: Այդպես խոսելով՝ հասանք այն ինստիտուտ, որտեղ աշխատում էր նրա հայրը:

– Դե, առա՛յժմ:– Նա անհետացավ թափանցիկ դռան հետևում:

Մինչ ես տուն կհասնեի, սերը, որ իմ մեջ հանգել էր հինգ տարի առաջ, բռնկվեց նոր թափով: Ես կրկին սիրահարված էի: Սիրահարված, իմ կարծիքով, եթե ոչ աշխարհի, ապա գոնե մեր դպրոցի լավագույն աղջկան:

Այն, ինչ հաջորդեց դրան, այնքան էլ հեշտ չէ նկարագրել: Իմ սերը մի տեսակ հիմարավարի էր ընթանում: Ոչ մի անգամ համարձակությունս չհերիքեց նրան ինչ-որ տեղ հրավիրել, խոսել իմ զգացմունքներից: Ուղղակի սկսեցի սիրո հողի վրա աստիճանաբար խանգարվել: Խանգարումն արտահայտվում էր նրանով, որ ամեն օր դպրոցից տուն տանող ճանապարհի տարբեր մասե-

րում դարան էի մտնում ու սպասում նրան: Երբեմն ինձ հաջողվում էր «պատահաբար» հայտնվել նրա ճանապարհին, ու այդ ժամանակ մենք միասին քայլում էինք՝ մտերմիկ զրուցելով ինչ-որ բանից: Բայց իմ հսկումները մեծ մասամբ ապարդյուն էին անցնում: Նա, պարզվում է, հաճախ էր փոխում իր երթուղին ու տուն գնալու ժամերը: Մի անգամ, կարծեմ փետրվարին, ես մոտ երկու ժամ անտանելի սառնամանիքին ցցվել էի դրսում ու այնպես էի մրսել, որ երկու շաբաթ տնից դուրս չեկա:

Այսպես անցան վերջին երկու տարիները դպրոցում: Միակ արտոնությունը, որ նա ընծայեց ինձ, լուսանկարելու քույլտվությունն էր: Ես դրանից առաջ չէի զբաղվել լուսանկարչությամբ ու չխկացնելիս դողում էի՝ հանկարծ չփչացնեմ նրա պատկերով ժապավենը: Բայց կամ խցիկս էր լավը, կամ ուղղակի կարգավորումն էի ճիշտ հաջողացրել, լուսանկարները բավական որակյալ էին ստացվել: Դրանից շատ հետո նա ինձ մույնիսկ ասաց, որ այդքան լավ իրեն ոչ ոք չէր նկարել՝ իր ոչ ֆոտոգենիկ լինելու պատճառով: Գնահատենք նրա քաղաքավարությունն ու ինքնաքննադատությունը:

Ի վերջո ավարտվեց դպրոցի հետ կապված ամեն բան: Մեր ճանապարհները ժամանակավորապես բաժանվեցին, որ կրկին խաչվեն բուռի ընդունվելուց հետո:

Նորից աշուն էր: Դուրս էի եկել քաղաքում մի քիչ թափառելու: Թեթև անձրև էր մաղում: Արդեն մութ էր: Մոտեցա բժշկական ինստիտուտի կանգառին: Ավտոբուս չկար: Մի գլանակ վառեցի ու հիանում էի ավտոմեքենաների՝ թաց ասֆալտի վրա արտացոլվող լույսերով:

Ավտոբուսը մոտեցավ: Երթուղին անցնում էր նրանց շենքի մոտով: Բարձրացա, տեղավորվեցի ազատ նստարաններից մեկին: Ինչու արեցի դա՝ մինչև հիմա չեմ հասկանում: Ես կարիք էի զգում ասելու նրան այն ամենը, ինչ կուտակվել էր հոգուս մեջ: Հաջորդ օրվան սպասել չէի ուզում, ուղղակի չէի կարող:

Նրանց կանգառում իջա, անցա փողոցն ու քայլեցի նրանց բարձրահարկի կողմը: Շքամուտքում մի երիտասարդ պատահեց, որից տեղեկացա՝ նրանց բնակարանը որ հարկում է: Վերե-

լակում հանկարծ սաստիկ ծխել ուզեցի: Մինչև ութերորդ հարկ հասնելս հասցրեցի մի քանի ծուխ քաշել:

Աստիճանահարթակում ավելը ձեռքին մի անձանոթ տիկին էր կանգնած: Կասկածամիտ հայացքով ոտքից գլուխ չափելով ինձ՝ նա փորձեց պարզել, թե գրողի տարածիս ինչ է պետք իրենց կողմերում: Բնակարանի համարն ասացի:

– Ահա՛,– դեռ չէի հասցրել խելքի գալ, տիկինն արդեն սեղմել էր զանգի կոճակը:

Մի քանի վայրկյան անց դուռը բացվեց: Շեմքին նա էր:

– Ողջո՛ւյն,– արտահայտվեցի՝ ձայնիս կայտառություն տալով:

– Բարև՛,– իմ տառապանքների ու անուրջների տիրուհու ձայնն ինձ անտեղի չոր թվաց:

– Դո՛ւքս արի, հա՞: Բան ունե՞մ ասելու:

Ըստ երևույթին կռահեց՝ ինչ ունե՞մ ասելու, որովհետև, խեթ մայելով հարևանուհուն, որը չէր պատրաստվում հեռանալ հարթակից, դիմեց ինձ.

– Դե, ներս արի:

Այն ժամանակ շատ բան գլխի չէի ընկնում, դրա համար սկսեցի համառել.

– Չէ, դո՛ւ դուրս արի...

Շեմքին հայտնվեց նրա հայրը:

– Ո՞վ է,– դիմեց դստերը:

– Համադասարանցի...

– Իսկ ի՞նչ է ուզում համադասարանցին: Նե՛րս անցիր, ինչո՞ւ ես շեմքին կանգնել:

Ի՞նչ անեի: Ստիպված ներս մտա:

– Հապա, ի՞նչն է Ձեզ բերել մեզ մոտ, երիտասա՛րդ: Դե՛, նե՛րս անցիր, մտա՛իր...

Ես հուսահատ հայացք գցեցի աղջկա վրա, բայց բախվեցի լիակատար անտարբերության: Դա հունից հանեց ինձ: «Ախ եղպես, հա՞, էդպե՞ս»...

– Ես, ըստ էության, Ձե՛զ մոտ եմ եկել,– շրջվեցի դեպի հայրը:

Սա անկեղծորեն զարմացավ.

– Ի՞նչով կարող եմ օգտակար լինել:

Այստեղ ես սկսեցի դուրս տալ:

– Գիտե՞ք ինչ: Բանն այն է, որ ես ազատ ժամանակ այգեգործությամբ եմ զբաղվում...

– Դե՛, դե՛, շատ հետաքրքիր է...

– Այո, ուրեմն այսպես: Ես անբնական գույների ծաղիկներ եմ աճեցնում: Կապույտ մեխակներ ես արդեն ստացել եմ, իսկ այ՛, կապույտ վարդեր՝ ոչ մի կերպ չեմ կարողանում: Ահա և որոշեցի խորհրդակցել Չեզ հետ որպես բուսաբանի (մոռացա ավելի շուտ ասել, որ նրա հայրն ինստիտուտում բուսաբանություն էր դասավանդում)...

– Հետաքրքիր է: Իսկ ինչո՞ւ ինստիտուտ չեկար: Վա՛ղն անցիր, կխոսենք:

Արդեն հասկացա, որ անհեթեթ խաղ էի սկսել, ու շտապում էի ինքնակամ հեռանալ:

– Այո՛, այո՛: Իհարկե: Անպայման... Ներեցե՛ք,– մոթմոթացի ու շտապեցի դեպի մուտքի դուռը:

Դուրս եկա ու փողոցում փոթկացի անառողջ ծիծաղով: Ես նույնիսկ չէի ծիծաղում, այլ ուղղակի խրխնջում էի ջահել հովատակի պես:

Ինստիտուտ, իհարկե, չգնացի: Մի ամիս անց դասընկերուհիներիցս մեկի հետ հեռախոսով խոսելիս ապշահար եղա:

– Պարզվում է՝ դու կապույտ վարդեր ես աճեցնում, հա՞:

– Որտեղի՞ց գիտես,– գոռացի խոսափողի մեջ:

Այդ ժամանակ դասընկերուհիս պատմեց, որ իր մայրն ու համակրանքիս առարկայի մայրը վաղուցվա ընկերուհիներ են, ու ահա վերջերս սա իրենց մոտ հյուր է լինում ու պատմում է, որ ոչ այնքան նորմալ մի տղա՝ ուղեղում անհեթեթ կապույտ վարդեր, հայտնվել է իրենց տանը, ու իր ցնդած մտքինն իրեն հերիք չէ, իրենց վրա էլ է փորձել փաթաթել այն: Ոչ այնքան նորմալ տղան, պարզվեց, իմ անվանակիցն էր, ու մյուս բոլոր նշաններով էլ, հատկապես կանաչ բաճկոնով, ինչպես ջրի երկու կաթիլ նման էր ինձ:

Ես կախեցի լսափողն ու սկսեցի տենդագլին վազել տնով մեկ:

Որքան կուզեի այդ ժամանակ մանկությանս այն մութ շքամուտ-
քից լինեի...

Մեզանից այդպես էլ ոչինչ դուրս չեկավ: Երևի դեռ երեխա
ժամանակ, պարասրահում արդեն նա իմ վերաբերյալ հաստա-
տուն եզրակացություններ էր արել: Մեկուկես տարի էլ անցավ:
Ես քանոն էի տալիս «քաղաքացիական կյանքի» վերջին
օրերս: Մի անգամ, երբ ավտոբուսով անցնում էի նրանց ինստի-
տուտի մոտով, պատուհանից նշմարեցի նրա ծանոթ կազմված-
քը: Վարորդին խնդրեցի կանգ առնել, դուրս ցատկեցի ու վազե-
ցի նրա ուղղությամբ: Ուշացած հասա: Այնտեղ, որտեղ նա մի
քանի ակնթարթ առաջ կանգնած էր, արդեն ոչ ոք չկար: Մի թո-
պեի չափ տեղում դուրս էի՝ գուցեև հայտնվի, հետո ձեռքս թափ
տվեցի ու ոտքերս շրջեցի դեպի տուն...

Հինգ տարի էլ անցավ: Չմեռ էր: Հունվար ամիսը: Ազատու-
թյան ութերորդ օրն էր: Օրվա առաջին կեսն այն պատճառով
եմ հիշում, որ միանգամայն սթափ էի: Առավոտից վազքի մեջ էի՝
ժեկից՝ ոստիկանության տարածքային բաժին ու հակառակը:
Հարկավոր էր շտապ անձնագիր ստանալ ու աշխատանքի տե-
ղավորվել:

Տուն վերադարձա երեկոյան կողմ: Ջարմանալի էր՝ հյուրեր
չունեինք: Դե, փառք Աստծո: Կարելի է դադար առնել խմելուց:
Թե չէ՝ այդ օրերին այնքան կոնյակ ու զգվելի բաներ խմվեցին
ազատությանս համար, որ արդեն կամաց-կամաց սկսել էի հոգ-
նել ազատությունից:

Տանը պարապ քարշ գալով, այնուամենայնիվ, հասկացա, որ
ինձ ինչ-որ բան սաստիկ պակասում է: Ինչ-որ բան այն չէր:
Ազատությունը կար, կոնյակը կար, ընկերներիս ուրախ դեմքերը
կային... Չկար միայն նա:

Բացակայությանս հազար օրերի ընթացքում նրանից չորս
նամակ էի ստացել: Առաջինն անսպասելի էր: Դիշտ է, դրանից
առաջ ես նրան մի քանի անգամ գրել էի, բայց, դատելով լու-
թյունից, եզրակացրել, որ ամեն ինչ զուր է: Վերջին նամակիցս
կես տարի էր անցել, երբ հանկարծ երեկոյան մահճակալիս պա-

հարանին հայտնաբերեցի անծանոթ ձեռագրով մի ծրար: Նամակն, ըստ էության, գուրկ էր որևէ պարտավորությունից: Այնպես, էլի, քաղաքավարական պարտք էր: Որոշեցի չպատասխանել: Մի ամիս անց ստացա երկրորդը: Պատասխանեցի, լռությամբ: Կես տարի անց՝ նորից նամակ: Նորից պատասխանեցի, նորից լռությամբ: Սկսեցի այլևս չգրել: Ազատությունից ինձ այժմ մի կես տարի բան էր բաժանում: Այդ ժամանակ ես արեցի իմ վերջին փորձը: Պատասխանը եկավ ամիս-ամիսուկես անց՝ նույնատի ենթարկելով ճիշտ աչքերի արանքին հասցվող հարվածի նման: Այդ ժամանակ ես արդեն ոչ ուր տարեկան էի, ոչ էլ տասնյոթ: Կյանքն ինձ վարժեցրել էր նման հարվածների, հավատացեք, ավելի նողկալի իրավիճակներ էլ էին եղել: Յավուտ էր, բայց ինչ արած:

Եվ այսպես, ութերորդ օրն, այնուամենայնիվ, փորձեցի ամեն ինչ նորից սկսել: Վեր կացա, հագնվեցի:

– Ո՞ր,– հարցրեց մայրս:

– Հենց էնպես, քափառելու...

Քայլեցի մինչև բժշկական ինստիտուտ: Իջա գետնանցում: Գրեթե բոլոր ծաղկավաճառները ցրվել էին: Մեխակների մի փունջ վերցրի, դուրս եկա փողոց:

Վարորդն ինձ հասցրեց մինչև նրանց շենքի դիմացի կանգառը: Աստիճաններով բարձրացա, գտա ծանոթ հարթակը: Ահա և դուռը՝ երեք զանգով: Մեղմեցի համապատասխան կոճակը:

Դուռը բացվեց: Շենքին նա էր:

– Բարև՛:

– Բարև՛ Ձեզ,– նա անթաքույց զարմանքով նայում էր մերթ ինձ, մերթ մեխակներին:

– Մենք, կարծես, «դու»-ով էինք իրար հետ...

– Հա-ա՞,– ծոր տվեց նա,– ես Ձեզ կարծես չեմ ճանաչում:

– Ի՞նչ է, լո՞րջ ես ասում:

– Լո՛րջ:

– Լսի՛ր, գուցե փաստաթուղթ ցույց տամ, հը՞: Կարող եմ...

– Դե ի՞նչ, ցույց տվեք:

Պարեկային ժամի պատճառով մոտոս տեղեկանք էի պահում:

Այդ կանաչ թուղթը գրպանիցս հանելով՝ մեկնեցի նրան:

– Վա՛յ: Նե՛րս արի,– նա անկեղծորեն շփոթվեց, կամ էլ ինձ այդպես թվաց:

Հոգուս խորքում երագում էի, որ նա վզովս ընկներ, բայց դա տեղի չունեցավ: Ինչ արած...

Սենյակից դուրս եկավ նրա մայրը: Ես ներկայացա՝ հիշեցնելով, որ մի անգամ եղել եմ իրենց տանը՝ կապույտ վարդերի առիթով: Բոլորս ժպտացինք՝ հիշելով իմ մանկական արարմունքը:

– Նե՛րս արի, նստի՛ր: Ինձ կներես, ես զգեստս փոխեմ:

Տեղավորվեցի հարմարավետ բազկաթոռին: Այս սենյակում վեց տարի առաջ էի եղել: Շլանգի հետ էի հանպատրաստից մտել: Բանակից արձակուրդ էր եկել ու առաջարկել էր այցելել «մեր ընդհանուր ծանոթներին»: Այն ժամանակ մենք այցից առաջ տեղը-տեղին լիցքավորվել էինք, ու ես, ինչպես միշտ անում էի խմած ժամանակ, չէի դիմացել ու բավական շատ հիմարություններ էի դուրս տվել...

Նա ներս մտավ՝ արդեն զգեստափոխված, ու նստեց դիմացս: Լույսի տակ կարողացա ավելի լավ զննել նրան: Տարիները նրա օգտին էին անցել: Դեմքը հարթվել էր, դարձել ավելի լուրջ: Հիմա իմ առջև կոկոն չէր, այլ արդեն բացված ճերմակ վարդ: Շատ գեղեցիկ էր:

– Սո՞ւրճ: Խմի՛չք չեմ առաջարկում...

– Չէ, շնորհակալ եմ, թողել եմ,– ավելացրեցի անտեղի:

– Իսկ ինչ է, խմո՞ւմ ես:

– Չէ, ես քանի օրը միայն: Ուրախությունից:

– Ա-ա...

Ջրույցը չէր ստացվում: Ավելի ճիշտ՝ չէր գնում այն ուղղությամբ, որ կուզեմայի: Լիքը դատարկ հարցեր, նույնքան էլ սին պատասխաններ:

– Երեկոները ազա՞տ ես:

– Չէ, հիմա շատ եմ պարապում: Պիտի մինիմումներին պատրաստվեմ:

– Դե, մի երեկո գոնե կարող ես հանգստին տրամադրել, հուսով եմ: Շատ կուզեմայի քեզ ինչ-որ տեղ հրավիրել:

– Ինչի՞ համար:

– Ո՞նց թե ինչի: Դու ի՞նչ է, վախենում ես, որ դա քեզ կպարտավորեցնի՞: Եթե այո, ուրեմն իմ մասին շատ վատ կարծիք ունես...

– Դա չէ խնդիրը... Ուղղակի, իմաստը ո՞րն է:

– Ուրեմն այն վերջին նամակում ինչ գրել էիր, լո՞ւրջ է:

– Իսկ մի՞թե այդպիսի հարցերում կարելի է անլուրջ լինել:

– Հա, ճիշտ ես, ներիր...

Հանկարծ սաստիկ անհարմարություն զգացի: Դատարկ շքամուտքը հայտնվեց ու կրկին անհետացավ գիտակցության հեռու խորքերում:

– Դե ինչ: Ներիր... ուշադրության համար (չգիտես ինչու հիշեցի Վիսոցկու խոսքերը, կրկին՝ ոչ այնքան տեղին):

– Ի՞նչ ես ասում: Ինչի՞ մասին է խոսքը: Մեկ-մեկ արի՛: Կուզե՞ս, համարս գրիր: Գուցե ինչ-որ խնդիր լինի... Դիմի՛ր ցանկացած ժամանակ...

Դա ինձ վերջնականապես հունից հանեց: Վեր կացա:

– Դե չէ, չարժե: Չեմ կարծում, որ դեմքս տեսնելը քեզ հիմա մեծ բավականություն կպատճառի...

– Չէ, ի՞նչ ես ասում...

Քայլեցի դեպի դուռը:

– Ցտեսություն, շատ շնորհակալություն, – ասացի մորը:

Նա նույնպես դուրս եկավ միջանցք:

– Ամենայն բարիք, նորից համեցեք...


Վերելակում ծխեցի: Փողոց դուրս գալով՝ չզգացի այն թեթևությունը, որ սովորաբար զգում ես շենքից դուրս գալիս: Ինչ-որ բան ճնշում էր:

Ոչինչ չստացվեց: Ի՞նչ արած: Սպասելի էր: Ուզում էի քայլել, բայց արդեն ուշ էր: Մի ժամից պարեկները կսկսեին բռնել ուշացած հետիոտների: Իսկ ինձ դա բոլորովին պետք չէր:

Տուն հասա ու մտա իմ սենյակ: Բարից հանեցի կոնյակի բացած շիշն ու մի քանի մեծ կում արեցի: Ոնց որ թեթևացրեց...



ԲԱՅԿՈՆՈՒՐ



Աշունը միշտ է իմ ամենասիրած ժամանակը եղել: Իսկը նրա մասին է ասված՝ «очей очарование...»: Բայց ամենից

շատ ինձ դուր է գալիս տարվա միայն այդ եղանակին բնորոշ հոտը: Մեր տնից ոչ հեռու մի այգի կա: Ճիշտ է՝ շատ մեծ չէ, բայց փոխարենը այնտեղ լիքը ծառեր կան: Դե իսկ ծառերի վրա, ինչպես արդեն կռահեցիք, լիքը տերևներ: Եվ այսպես, Տեր Աստված, թե մայր բնությունն այնպես էին տնօրինել, որ ամեն աշուն այս տերևները սկսում էին դեղնել, չորանալ և ըստ այդմ՝ ցած թափվել: Հենց այդ ժամանակ էլ այգում հայտնվում էին հավաքարարները ու անասելի փոշի բարձրացնելով՝ թափված տերևները կույտերի էին վերածում: Ահա այդ ժամանակ էր, որ աշունն սկսում էր բուրել: Ոչինչ ի գորտ չէ համեմատվելու վառվող չոր տերևների հոտի հետ:

Հավանաբար աշունն այդ կերպ զգալու ունակությունն ինձ մորիցս է փոխանցվել: Նրա մանկության քաղաքում էլ այդպիսի ավանդույթ կար՝ վառել թափված տերևները: Երբ ես դեռ լրիվ խսկ էի, անգամ երբ դեռ դպրոց չէի գնում, նա ինձ միշտ իր հետ աշնանային այգի էր տանում՝ խարույկներից արձակվող ծուխը շնչելու: Հետո արդեն մենակ էի գնում: Նստում էի հավերժ դատարկ նստարանին (հիմա անհետացել է, միայն բազալտե թմբերն են մնացել) ու երագում իմ տարիքին բնորոշ դատարկ բաների մասին:

Հիշողությանս մեջ մնացել է հատկապես վերջին աշունը: Քսաներորդ դարի ութսուներեքերորդ և իմ կյանքի տասնութերորդ աշունը: Ես ասես զգում էի, որ բավական ժամանակ այլևս չեմ կարողանալու լիաթոք ներս քաշել այդ հրաշալի բուրմունքը, ու փորձում էի պաշար հավաքել՝ ինչքան հնարավոր է լայնացնելով ռոմագերս: Հեռացա միայն, երբ ծուխն սկսեց գրգռել աչքերս, ու անտեղի արցունքներն ուր որ է՝ դուրս պիտի հորդեին:

Անցավ մոտ մեկ տարի: Նորից աշուն է: Այժմ տնից երկու հազար կիլոմետր հեռու էի, մի քաղաքում, որտեղ ինչի հոտ ասես գալիս էր, միայն թե ո՛չ աշման: Այն՝ ի՛նչ աշման, խարույկներով աշման...

Կայագորային պարետության խցում գտնվելուս երրորդ օրն էր: Այստեղ էի ընկել հենց գորացրման հրամանի օրը: Ջորամասից երկու շաբաթ ուշանալու պատճառով: Այն ժամանակ Բայկոնուրից հենց մոր էի ժամանել *ПрокВО*՝ Նախակարպատների ռազմական օկրուգ: Դե, ես հիմա երկար-բարակ չեմ նկարագրի ճամփորդությունս, առանց այդ էլ ուղեղս մաշել եմ ինձ արդարացնելու բացատրագրեր գրելով: Դրանք մինչև հիմա երևի փոշոտվում են արխիվներում...

Եվ այսպես, արդեն երրորդ օրն էր՝ լռված էի *զադերժայում*, սնվում էի բացառապես ջրով, ամենաանպարկեշտ բառերով հայհոյում էի աշխարհում ամեն ինչ ու առաջին հերթին ինքս ինձ այն բանի համար, որ որոշեցի ազատության գնով (այն ժամանակ իմ դեմ քրեական գործ էին հարուցել) ապացուցել, թե ինչ նվիրված ու անձնագոհ զինվոր եմ, որ ներկայացել եմ հետագա ծառայությունն անցնելու, ոչ թե ծլկել եմ Կոկտեբել՝ «բայկոնուրյան սինդրոմից» տանջահար օրգանիզմս կազդուրելու: «Բայկոնուրյան համախտանիշը» տիեզերակայանի տարածքում ապրող ողջ բնակչության պատիժն է: Այն ձեռք է բերվում տեղի ջուրն օգտագործելով: Դե իսկ հետևանքները հրաշալիորեն նկարագրված են Հաշեկի անմահ վեպում: Ըստ Հաշեկի՝ այս հիվանդությունը կարելի է երեք կերպ անվանել: Եթե այն առաջացել է սպայի օրգանիզմում, կոչվում է կոլիտ, եթե կրտսեր հրամանատարական կազմի անդամների՝ խանգարում, և վերջապես, զինվորների

դեպքում այն ուղղակի կոչվում է լուծ: Ես իմ ողջ ծառայության ընթացքում շարքային եմ եղել, այնպես որ, եզրակացրեք ինքներդ...

Ես այստեղ փոքր-ինչ քնարական շեղում թույլ տվեցի, մի բան, որ այլևս չեմ անի, ամեն դեպքում՝ կփորձեմ չանել: Եվ այսպես, որպես կարգապահ զինվոր, օղի բուրելով ու հետս իրեղեն ունեցվածքի մի հսկա պարկ քարշ տալով, ներկայացա կայագորի պարետին: Ինձնից օղու հոտ էր փչում մի նախկին *զեկի* պատճառով: Ավտոբուսում էինք կողք կողքի հայտնվել: Ջրույցի բռնվեցինք: Պարզվեց՝ հենց նոր էր ազատվել բանտից, ուր տարի կյանքից կորցրել էր մուժիկը: Դե հիմա՝ ազատության համար ո՞նց չխմես: Խմեցինք: Անսովորությունից իսկույն անջատվեց, նույնիսկ հրաժեշտ չտվեցինք միմյանց, մեղքս եկավ արթնացնեմ...

Պարեկը նողկալի մարդ դուրս եկավ: Հերիք չէ՝ կալանախուց մտցրեց, դեռ գործ էլ հարուցեց: Դե, ես էնտեղ մի վեց էջանոց «կապիտան Բլադի ողիսական» հրամքների իրենց: Սպայակույտը հեզնեց՝ «складно пиздишь, ара»¹⁷, ու ինձ խուց տարան...

Ահա երրորդ օրն էր: Առանց լափի, առանց ծխելիքի, առանց վառվող խաշամի աշնանային բույրի: Փոխարենը խցում լրիվ ուրիշ «բույր» էր: Ոչ, ոչ, *պարաշից* եկող հոտը չէ, պարաշ գոյություն էլ չուներ: Այդ «բույրը» օղու հոտն էր: Ինչպես արդեն տեղեկացրել եմ վերևում, այստեղ նկարագրվող բոլոր անցքերը տեղի էին ունենում *դենքելի* հրամանի ժամանակ: Ինչպես ասում են՝ «more пива, водки таз, и Устинова приказ!»: Այդ ժամանակ պաշտպանության մինիստրը դեռ Ուստինովն էր, և դա հենց նրա վերջին հրամանն էր:

Ես անընդհատ ուզում եմ ինչ-որ բան պատմել խցի ժողովրդի մասին ու անընդհատ շեղվում եմ: Խուցը լեփլեցուն էր խումհարից տառապող դեմբելներով: Տղերքը քեֆերի ժամանակ ջանք չեն խնայել, որ հրամանը լավ նշեն, ու էդպես...

Հիմա բոլորն արդեն լրիվ սթափ էին ու տանջվում էին: Մոռացա ասել, որ կալանախցում հիրավի սպարտական ավանդույթ

¹⁷ Գռնկ. – *Լավ էլ քյոլում ես, արա՛*

էր տիրում: Չջեռուցվող խուց ուղեկցելուց առաջ ձեռքից առնում էին շինելն ու բուշլատը, նայած՝ ում ինչով են բռնել: Չնայած աշնան մայրամուտին դեռ շատ ժամանակ կար, դրսում սարսափելի սառնամանիք էր, ամեն դեպքում բարակ բամբակաշապիկով երկար չէիր զբոսնի: Իսկ խուցը, իր ողջ հարմարավետությամբ հանդերձ, մաս խոնավ էր, հավանաբար, ինչպես գերեզմանը, քեւ ես այնտեղ դեռուս չեմ հյուրընկալվել...

Այսպես ուրեմն, սթափված դեմքելները տառապում էին: Հարբածության հետ ուղեկցվող ամենահնարավոր ցավերից, մաս ցրտից: Իմ վիճակը դեռ այդքան էլ սարսափելի չէր: *Պարադիան* փրկում էր: Անհարմար էր բամբակաշապիկով ներկայանալ պարեկին, դրա համար էլ շորերս փոխել էի: Իսկ տղերքը նորնոր էին դուրս եկել զորանոցից, մի խոսքով՝ բոլորն էլ բարակ բամբակե համագգեստով էին...

Խուցը բաժանված էր խմբերի՝ ըստ համերկրացիության: Չապորոժցիները, որ կլինեին մի տասը հոգի, տեղավորվել էին գետնից մի տասը սանտիմետր բարձր փայտե տախտամածին ու նեղ շրջան կազմած՝ «Распрыгайте, хлопцы, коней...» էին երգում: Ինձ էլ էր համերկրացի հասել, եթե հիշողությունս չի դավաճանում, կարծեմ՝ Արտաշատից էր: Ես նրան հարցուփորձ էի անում այն քաղաքի մասին, որտեղ պիտի ծառայեր: Հիմա չեմ հիշում այն բոլոր մակդիրները, որոնցով նա բնութագրում էր ինձ հետաքրքրող վայրը, բայց մեկը, ու իմ կարծիքով, ամենադիպուկը, բերում եմ ստորև.

– Էդ, բրա՛տ, անձրևների, *բլյադների*, քամիների ու *պրապորների* քաղաք ա:

Գիներտներից հետաքրքրվեցի:

– Ո՛ւց չէ, կա՛ն: Էստեղ՝ մոտիկ: Մեկը՝ «Տրու-լյա-լյան», վատը չի, մեկն էլ՝ լրիվ բարդակ, «Վեայոլի պրապորշիկը»:

Չապորոժցիների երգն ընդհատվեց: Նրանցից մեկը վեր կացավ ու աղմուկով ձգվեց՝ խրթխրթացնելով խոշոր մարմինը:

– Էհ-հե-հե՛: Ո՛ւր էր մեր Նեստոր Իվանովիչից ունենայիք...

Տղերքը քրքջացին: Ես սկզբում չհասկացա՝ ինչ Նեստոր Իվանովիչի մասին է խոսքը...

– Է՛յ, Մախնո՛ւ,– կանչեց մեկը ուրիշ խմբից, կարծեմ՝
դադստանցիների:– Հերիք վնաստաս, ավելի լավ է՝ մի բան երգիր...

Միայն այդ պահին հասկացա, որ Նեստոր Իվանովիչը
Гуляй-Поля-ի լեգենդար բառկան է, որտեղից, ինչպես հետո
պարզվեց, նաև իրեն մեծարողն էր:

– Երգե՞լ, Մագա: Կարելի՛ է: Հիմա կանենք...

Ու սկսեց.

Холодно, жрать охота,
Комары грызут.
Не доеду я до дому,
Подохну тут!

– Дембель в опасности, братва¹⁸,– հիստերիկ ճչաց տղեր-
քից մեկը:

Բոլորի տրամադրությունը, անգամ իմը բարձրացավ, թեև
մինչև դեմքել դառնալը դեռ շատ ունեի: Անվերջանալի հերթա-
գայությամբ անեկդոտներ էին տեղում, զորանոցային կատակ-
ներ: Արդեն այնքան էլ տխուր չէր: Միայն թե փոքս սովից աղիո-
ղորմ հեծկլտում, թե կրճտում էր, սատանան գիտի...

Մոտավորապես օրվա վերջում խուցը սկսեց կամաց-կամաց
դատարկվել: Դուռն անընդհատ բացվում էր, ու «կրասնաչն»
ազգանուններ էր թվում, որից հետո թվարկվածներն ուրախ բա-
ցականչություններով թողնում էին բանտախուցը: Նրանց
հետևից զորամասերի սպաներն էին գալիս՝ որոշելով, որ իբր հե-
րիք է «առողջարանում» գովանան:

Ժամը տասի կողմերը մնացի մենակ: Մենակությունից վատ
բան չկա, հատկապես, երբ այն անցկացնում ես ցուրտ խցում:
Մոտենալով ճաղապատ փոքր լուսամուտին՝ ամբողջ կրծքով
մեկ ներս քաշեցի աշնանային ցուրտ օդը: Չէ, այստեղ հաս-
տատ աշնան հոտ չկար: Այն՝ իմ աշնան հոտը: Ճահճի հոտ էր
գալիս: Միայն երկու ամիս հետո հասկացա, որ այդ գիշեր ճահ-
ճի հոտ էր գալիս: Դա պատահեց, երբ թաղվեցի ճահճի մեջ՝
ձմեռային անտառով անցնելիս: Ախ, ինչե՛ր չքաշեցի ես այն

¹⁸ – Դեմքելը վրանգի մեջ է, տղեք:

Ժամանակ: Մտածում էի՝ վերջ: Բայց բախտս բերեց, ինչպես տեսնում եք...

Գլխիս մեջ վատ մտքեր սողոսկեցին: Աչքիս առաջ անվերջանալի բետոնե հսկայի պես հառնում էր պարետի խոստացած բանտը: Ինչպես հետո պարզվեց, տեսիլքներս մարգարեական դուրս եկան, թեկուզև փոքր-ինչ վաղաժամ էին...

Տախտամածի վրա մի կողմից մյուսն էի շուռումուռ գալիս՝ պառկելով մեկ փորի, մեկ մեջքի վրա, բայց իզուր: Քունը, որին ես այդքան տենչանքով սպասում էի, ասես խոսքը մեկ էր արել պարետի հետ ու միտք չունեի հայտնվել գոնե թեթև նիրհի տեսքով: Հաշվեցի մինչև հազարը՝ չօգնեց: Վեր կացա, երկու հարյուր կքանիստ արեցի, բայց հանգստանալու փոխարեն ավելի աշխուժացա: Հիշեցի, որ երեք օրից ավելի է՝ չեմ ծխել, ու դրանից վիճակս լրիվ անօգնական դարձավ: Հետևանքների վրա թքած՝ մոլեգնաբար սկսեցի ձեռքերով ու ոտքերով թմբկահարել դուռը: Բայկոնուրում «կրասնաչներին» իրենց բացառիկ ստորության պատճառով հավասարեցնում էին բանտային հսկիչներին ու այդպես էլ, ինչպես բանտում, դիմում էին՝ «նաչալնիկ»: Ես էլ հերթապահին ձայն տվեցի այդ էպիտետով:

Վերջապես միջանցքում մոտեցող քայլերի դոփդոփյուն լավեց:

– Ի՞նչ ես գոռում, արմյա՛ն,– դռան հետևից բղավեց «նաչալնիկը»:

- Լսի՛ր, նաչալնիկ, ծխելիք հասցրու, է՛լի...
- Ինչ, ի՞նչ: Նաչալնիկ՞ս որն է: Մենքի տեղ ե՞ս դրել ինձ:
- Դե, մեզ մոտ ձեզ էդպես են ասում...
- «Մեզ մոտ» որտե՞ղ:
- Բայկոնուրում:
- Ինչ... ցե՞ճե!¹⁹ Բայկոնուրի՞ց ես:
- Դե՛: Լսի՛, ծխելիք հասցրու, է՛լի...
- Ո՞ր գորակոչից ես:
- Վերջին՝ մայիսյան:
- Ա՛, իմից այսինքն...

¹⁹ Գռեհիկ (հեզոդական-հիացական) բացականչություն

– Ну ни... себе!²⁰– Սկսեցի մի քիչ լկտիանալ:– Գուցե դու՞ ես իմից: Դեհ, ծխելիք ո՞նց ես հասցնում:

– Լսի՛, արա: Իսկ տեսել ե՞ս՝ ոնց եմ հրթիռները տեղից պոկվում:

«Այ քեզ անասուն»...

– Հա, տեսել եմ, տեսել եմ: Ինչպես եմ իջնում՝ էդ էլ եմ տեսել: Ինքս էլ մի քանի անգամ թռել եմ: Ծխելու տալի՞ս ես, տո՛ւր, չէ՛ գնա՛ էստեղից...

– Էդ ինչ է՛ բարոնետրդ չի՞ դիմանում արդեն:

– Ես կորցնելու բան չ... Մեկ է՛ գործս պիտի գնա տրիբունալ:

– Տրիբունալ՝-ա՞՞լ,– ձգեց տղան:– Ինչի՞ համար:

– Դե, դու էլ գրողի ծո՛ցը գնա...– կատաղեցի, հեռացա դռան մոտից:

Դռնից այնկողմ որոշ ժամանակ լռություն էր: Ապա հեռացող ոտնաձայներ լսվեցին: Թքեցի գետնին ու հոգու խորքում զղջացի, որ կորցրեցի այդ՝ թեկուզև ոչ մի բանի պիտանի զրուցակցիս: Հիմա էլ, լրիվ անտեղի, քանի բարձրացավ դրսում: Խոնավ խցում ընդհանրապես անտանելի դարձավ: Դե որ բախտդ չի բերում՝ չի բերում:

Հանկարծ քամու սուլոցին ու խցի լռությամբ մի ձայն էլ խառնվեց: Մոտեցող քայլերի ձայն էր: Ցատկեցի դեպի դուռը, ականջ դրեցի: Քայլերը հասան ինձ, լռեցին:

– Է՛յ, արա՛,– լսվեց ծանոթ ձայնը:– Մոտ արի լուսամուտի՛ն: Բանալի չունեմ: Ես քեզ լուսամուտից ծխելիք կտամ...

– Ага! Молодец, братан!²¹


Ուրիշ բան չգտա ասելու:

Բուպե անց ախորժանքով ներս էի քաշում, երևակայել կարելի է միայն, «Կազբեկի» ծուխը... Մի քանի զլանակ էլ գրպանումս էր: Փաթաթել էի թղթի մեջ, որ թութունի կորուստ չլիներ:

²⁰ Գռեհիկ բացականչություն

²¹ – Ըհը: Կեցցես, ախպերս:

«ԿԻՉԱ»



«Չինվորական ծառայությունն
այնպիսին էր, որ մազերդ բիզ-բիզ են
կանգնում, հենց հիշում ես»:

Սկիտալեց Ս. Գ. «Շարակարգի միջով»

Դե, մազերի պահով, մա, ընդունենք,
չափազանցել է, այդ Սկիտալեցը,
բայց որ ինչ-որ բան կանգնում է, դա
հաստատ: Հիմա մի դեպք կպատմեն այդպիսի դեպքերով հա-
րուստ իմ զինվորական կենսագրությունից:

Դեպքը տեղի է ունեցել Նախակարպատներում: Ճիշտ որ-
տեղ՝ չեն պատրաստվում նշել, թե չէ հանկարծ կարող են մահ
ռազմական գաղտնիքի հրապարակման համար մեղադրել:
Չմռան սկիզբն էր: Օդի ջերմաստիճանը՝ քսանհինգից երեսուն
աստիճան զրոյից ցածր: Չով էր: Ինձ համար որ՝ հաստատ շոգ
չէր:

Այդ ժամանակ ես պահվում էի կայազորային *հսուպրվախ-
յի* մենախցում, որին պարզապես «կիչա» էին ասում: Ինչպես
միշտ՝ ոչ կանոնադրական փոխհարաբերությունների պատճա-
ռով: Բայց: Բայց այս անպետք անգամ իմ բախտը սարսափելի
չբերեց: Փոխանակ, ինչպես և կիչայում ընդունված է, հրուշակե-
ղենի ֆաբրիկայում կամ *Վոյենտորգի* տեղական բազաներից
մեկում ազնիվ, ինքնամոռաց աշխատանքով հատուցելի *կոմբա-
յի* նշանակած յոթնօրյա ապաշխարանքը, ես արդեն տասնե-
րորդ օրն էր՝ առանց դուրս գալու մի բան էի անում միայն՝ զբաղ-

վում էի ինքնակատարելագործմամբ, այսինքն՝ մարմնամարզության, որպեսզի վերջնականապես չփայտանամ:

Եվ այդ ամենի մեղավորն այն տարաբախտ աստղն էր, որի տակ իմ խեղճ մայրն ինձ աշխարհ էր բերել, թող նույնիսկ՝ Աստծո աշխարհը: Վաշտապետն ինձ կիշա բերեց հենց այն ժամանակ, երիցս նզովյալ այն օրը, երբ այնտեղ տեսչական ստուգումներ անցկացնելու նպատակով հայտնվեց ոչ ավել, ոչ պակաս, ինքը՝ կայագործի պետը: Գեներալ-մայորը, մի հինգ գնդապետ ու էլի մանր-մունր մի քանի սպա: Գեներալի ազգանունը հիրավի մարտական էր՝ Ռա՛կով (ազգանունն էլ եմ փոփոխված տալիս, կրկին՝ ռազմական գաղտնիքի պահպանման նպատակով): Ռակովը պահակային շենք մտավ հենց այն ժամանակ, երբ տեղի էր ունենում իմ ձևակերպման ծեսը: Բոլոր ներկաները լարի պես ձգվեցին: Գեներալը ձեռքով արեց՝ հասկացնելով իբր՝ «ազատ» (բառ՝ նց, ցարին՝ ծառա, զինվորներին՝ հայր) ու նույն պահին էլ *նաչգուրից*՝ տեղի ինքնաքաշ օդուց լրիվ կապտած կապիտանից պահանջեց այն զինծառայողների ցուցակը, որոնք այդ պահի դրությամբ իրենց պատիժն էին կրում սույն մռայլ պատերի մեջ:

Մինչ կապիտանը փորփրում էր թղթապանակները, իմ գեներալի խոժոռ, հայրական դեմքն իմ կողմն ուղղվեց: Ու այդտեղ ես սկսեցի դողդողալ. «Կավելացնի, հաստատ կավելացնի...», — կայծակի մման փայլատակեց միտքս արդեն ճաղատանալ սկսող զանգատուփիս մեջ:

— За что попался, солдат?²² — ահեղ որոտաց նա:

Ես շատ էի ուզում բառախաղի մեջ մտնել ու ասել, որ попался я за..., բայց խոհեմությունը միշտ իմ բնորոշ զիծն է եղել, ու ես, ինձ համար անսպասելիորեն, չէ՞ որ տանել չեմ կարող սուտը, ստեցի.

— За самовольную отлучку²³, ընկե՛ր գեներալ-մայոր:

Խստադեմ արտահայտությունն իր տեղը զիջեց բարեհոգի-հայրականին: Գիտե՛ի՜ ուր եմ խփել: Տեղի հրամանատարությունը լավ էլ խրախուսում էր ինքնական բացակայությունները,

²² — Ինչի՞ վրա ես բռնվել, զինվո՛ր:

²³ — Ինքնական բացակայությամբ:

որոնցից հետո փորներն ուռած չքնադագեղ աղջիկների բոլոր հնարավոր բարեկամները հայտնվում էին զորամասի հսկիչ անցակետում՝ ու արդարության վերականգնում էին պահանջում: Չեմ մոռանա մի հարսանիք, որի ժամանակ վարորդը փեսայի վաշտապետն էր, իսկ հարսանքապետը՝ *գամայուհի*ը: Եվ այսպես՝ գեներալն ամբողջովին սկսեց փայլատակել:

– Ինչ է, կովկասյան արյո՞ւնդ հանգիստ չի տալիս: Դե՛-դե՛: Գործի՛ անցիր: Հարսանիքիդ չմոռանաս հրավիրել: Հապա սրա՛ն նայեք,– շրջվեց նա իր շքախմբի կողմը,– ի՛նչ լեռնային արծիվ ե...

Ես նույնպես ժպիտ հիշեցնող բան հորինեցի դեմքիս, իբր՝ ճի՛շտ այդպես, не могу знать и служу Советскому Союзу!²⁴ Բայց հանկարծ...

– Թո՛ւյլ տվեք դիմել, ընկե՛ր գեներալ,– խռպոտ ձայնով սկսեց նաչգուրը՝ կտրվելով ամսագրից:

Ես տեսա, թե ինչպես վաշտապետս հանկարծ սարսափելի գունատվեց: Ըստ երևույթին՝ նրա հոտառությունն ավելի սուր էր, քան իմը, ու նույն պահին նրան ստիպեց մի գռեհիկ ոտանավոր հիշել, թե ինչպես «совсем незаметно, под самый конец, на тоненьких ножках подкрался...» դե, դուք ինձ հասկացաք...

– Թույլատրո՞ւմ եմ,– բարյացակամորեն գլխով արեց գեներալը:

– Ընկե՛ր գեներալ-մայոր: Այս *արմյանը* ծեծկռտուքի համար է յոթ օր ստացել: Ահա՛ նրա վաշտապետը, թող նա՛ ասի:

Գեներալը շրջվեց վաշտապետի կողմը, իսկ սրա կախված ծնոտն արդեն քիչ էր մնում պորտին հասներ, ու ինքն էլ մի գլուխ հոնքերն էր շարժում:

Գեներալը մի փոքր շարժվեց, ու նրա սարսափազդու հայացքն արդեն ընկավ ինձ վրա: Դա վերջն էր...

...Ամենահնարավոր էպիտետների, որոնցով այնքան հարուստ է ռուսերենն ու որոնք չես գտնի և ոչ մի բառարանում, ահա այդ էպիտետների հզոր, տևական հրետանային համազարկից հետո գեներալն արտաբերեց ճակատագրական բառերը.

²⁴ ... ծառայում եմ Սովետական Միությանը:

– Մենախոսի՞ց սրիկային: Ու իմ կողմից՝ տասը օր: Ու էնպիսի խուց, որ դրա վերջն էնտեղ գա...

Մինչ ես բաճկոնիս ու տաքատիս գոտիները հանձնում էի նաչգութիմ, պահակատանը մեռելային լռություն էր տիրում: Բայց երբ ինձ ուղեկցեցին խուց, ականջիս գեներալային որոտի հեռավոր ճայթյուններ հասան, որոնք այս անգամ, ըստ երևույթին, թափվում էին վաշտապետիս բազմաչարչար գլխին: Ու ընդհանրապես, ի՞նչ քաշեց խեղճը հենց մենակ իմ պատճառով...

...Հիմա արդեն, ինչպես վերը նշեցի, ես մատած էի, իսկ ավելի ճիշտ կլիներ ասել՝ տասը օրով կանգնած էի կամ ցատկոտում էի մենախցում: Առաջին գիշերվանից հետո գոնե հույս էի փայփայում, որ աշխատանքների ժամանակ կտաքանամ: Չէ՞ որ քաղաքն ինքնաթոր օդուց ու կանանց քնքշանքներից առաջին տեղն էր զբաղեցնում *օկրուգում*: Բայց ի՞նչ: Երբ մնացած *գուքարիկներին* ցրեցին քաղաքով մեկ ուղղիչ աշխատանքների, որին՝ բազաներ, որին՝ հրուշակեղենի արտադրամաս (մինչև հիմա կարոտով եմ հիշում բոնբոներկաների արտադրությունը), ինձ առաջարկեցին, եթե իհարկե ուզում եմ տաքանալ, հաուպտվախտի բակը ավելել: Դա ես բացարձակ չէի ուզում անել: Ստիպված էի այդ առաջարկն արած կարաուլի պետին այնքան հեռուն ուղարկել, որ նա վիրավորանքից իմ արդեն եղած օրերին երեքն էլ ավելացրեց, այնպես որ հիմա «ամբողջական զինապահուստ» ունեմ: Բսան օր մենախուց, այն էլ՝ ձմռանը: Բոլոր նախադրյալները կային երկու մետր հողի տակ պառկելու համար: Բայց մի ավելի վատ սպառնալիք էլ կար: Օրվա ընթացքում պիտի ողջ ժամանակ ոտքի վրա լինեիր. մահճակալ տալիս էին միայն գիշերվա համար: Եթե հանկարծ թուլանալիր ու մատերի բետոնե հատակին, վերջ: Թուքքը, նեֆրիտն ու թոքախտն ապահովված էին մինչև կյանքիդ վերջը:

Ես դեռ երբեք այդքան ինքնամոռաց չէի տրվել սպորտին: Եթե ինձ կիչայում մի շաբաթ ավել պահեին, երևի հնարավոր լիներ իմ թեկնածությունն առաջադրել վազք առաստաղի վրայով մարզաձևի աշխարհի առաջնությունում: Բայց դա տեղի չունե-

ցավ: Տեղի ունեցավ այլ բան: Հենց այն, ինչի պատճառով էլ որոշեցի հիշողություններիս տրվել ու ընթերցողների լայն շրջանին պատմել, թե ինչ էր կատարվում... Բայց չեմ ուզում առաջ ընկնել:

Իմ հարևանությամբ պահվում էր Յուրկան: Յուրկան տանկիստ էր: Նա կիչա էր ընկել հենց *դեմքելից* առաջ՝ հարբեցողության համար, ու հիմա մենք հարևաններ էինք: Մեր հարևանությունից մի յոթ օր անց Յուրկային վերջապես հանեցին աշխատանքի: Ու հենց բախտի բերմամբ ոչ այլ ուր, քան (օ, նոստալգիա) հրուշակեղենի ֆաբրիկա:

Երեկոյան Յուրկային բերեցին ու հետ դրեցին իր տեղը՝ մենախուց: Նույնիսկ մեքենայով չբերեցին, այլ ավելի շուտ՝ քարշ տալով: Նա հարբած էր: Կոնծած: Ու էլի ինչ-որ բան: Պատի այն կողմից ականջիս սարսափելի տնքոցներ ու ձայներ էին հասնում, որոնցով սովորաբար ուղեկցվում է փսխման պրոցեսը: Խոնավ միջանցքի հոտերին միանգամայն քաղաքացիական հոտ էր խառնվել: Այս հոտը գալիս է բոլոր ռեստորանային զուգարաններից, ուր մի բուպեով կորչում են չափից դուրս խմած քաղաքացիները, որ տեղ ազատեն հերթական գինեկոնծության համար: Կարճ ասած՝ միջանցքից փսխուքի հոտ էր փչում:

Հաջորդ առավոտյան ես Յուրկային խնդրեցի պատմել եղելությունը: Յուրկան ոչինչ չկամեցավ թաքցնել:

Ընկնելով, ինչպես ասում են՝ նավից պարահանդես, հարևանս սկսել է տարվել հարբեցողությամբ: Հարձակվել է կոնֆետի լցոնի համար նախատեսված կոնյակի կանիստրի վրա: Հիմնավորապես լիցքավորվելով «վագրի կաթով», ինչպես կոչվում էր կոնյակը դեռ քաղաքացիական կյանքում ճանաչածս *բուխարիկների* լեքսիկոնում, քաջարի տանկիստը զգացել է, որ... Մի խոսքով, իրեն սեռական գանգատեր է զգացել ու նետվել է զոհ փնտրելու: Նրա զոհն է դարձել մույն այդ ֆաբրիկայի աշխատակցուհիներից մեկը: Հաճելի արտաքինով կինարմատը, ինչպես թվացել է Յուրկային խմած աչքերով, դուրս է թռչել ինչ-որ անկյունից ու քաջարի տանկիստին բռնելու գործողությունն իրականացրել ամենևին ոչ ձեռքից, և մույնիսկ ոչ շինելի օձի-

քից, այլ բոլորովին ուրիշ տեղից: Դե... դուք հասկացաք: Ու այդպիսի լկտիությունից ապուշ կտրած Յուրկային բերման ենթարկելով մի օժանդակ տարածք՝ նրա հետ իրականացրել է միանգամայն բնական կենսաբանական պրոցես, ընդ որում՝ ոչ միանգամյա: Դե, իմ հարևանն էլ, բնականաբար, չի ցանկացել զցել զրահատանկային զորքերի պատիվը ու իրեն դրսևորել է մարտական ու քաղաքական պատրաստության գերազանցիկի պես: Այնպես է դրսևորել, որ շոկոլադի պահեստի երախտագետ հավերժահարսը նրան հրաժեշտին անհնարինության աստիճան հարբեցրել է սպիրտով, հետն էլ՝ գրպանները լիքը ընկույզ ու այլ վերականգնող խորիզներ լցրել: Բայց ճանապարհին Յուրկան վերջնականապես ուժասպառ է եղել, ու նրան կիչա են վերադարձրել «լրիվ պատրաստ» վիճակում, ինչպես վերևում արդեն նշել էի:

Տանկիստն ավարտեց իր պատմությունը, ու մենք երկուսով լիաթոք ծիծաղեցինք՝ բարի խոսքերով հիշելով և՛ հրուշակեղենի ֆաբրիկան, և՛ նրա կանանց անձնակազմը: Մի բան միայն մթագնում էր իմ չէ, այլ Յուրկայի ուրախությունը: Այն, որ դեպի այնտեղ տանող ճանապարհն այլևս ընդմիշտ փակ էր իր համար:

Հարևանս լռեց, իսկ ես, նորից ցուրտ զգալով, անցա իմ ֆիզիկական վարժություններին, որպեսզի խթանեմ երակներին ու մազանոթներին մեջ սառած արյանս շրջանառությունը: Անցավ և՛ այդ, և՛ հաջորդ օրը: Ես արդեն մոտեցել եմ բուն էությանը, մի քիչ էլ համբերեք, ինչպես համբերել եք մինչև հիմա:

Կիչայում կանոն կար սահմանված՝ զուգարան թողնում էին օրվա մեջ ընդամենը մի անգամ, իսկ փոքր կարիքների համար խցերում ցիցկե մեծ ամաններ էին դրված՝ տոմատի մածուկի երբեմնի տարաներ: Տասներորդ օրը երեկոյան կողմ ականջիս տնքոցի ձայներ հասան: Շունչս պահեցի: Տնքոցները գալիս էին պատի այն կողմից, այնտեղից, որտեղ Յուրկան էր պահվում: Բոլոր գուբարիկներին հատուկ համերաշխության զգացումն ինձ դրդեց հետաքրքվել մերձավորիս ճակատագրով, ու ես ամբողջ ուժով սապոգով խփեցի պատին:

– Ի՞նչ, Յուրա՛ստի: Ի՞նչ ես ոռնում:

Յուրկան մի քիչ էլ տնքաց, հետո շատ երկար ու մանրամասն հայիոյեց ու վերջապես բավարարեց իմ հետաքրքրասիրությունը.

– Ссу и плачу, ара!²⁵

Հիշեցի անեկդոտը, որից վերցվել էին այս խորիմաստ բառերը, ու հանկարծ միանգամից լրջացա:

– Վստա՞հ ես:

– Վստահ չլինելու բան չկա,– խռպոտ ձայնով պատի այն կողմից ձայնեց տանկիստը, ինչին նորից հետևեց վիրավորական բնութագրիչների մի շարք՝ հրուշակեղենի իր ոչ վաղեմի գույրնկերուհու հասցեին:

Ի նշան համերաշխության՝ ես էլ միացա:

Վերջապես, սպառելով մեր բառագիտական հնարավորությունները՝ որոշ ժամանակով լռեցինք:

– Բա ի՞նչ ես անելու,– դադարը խախտեցի:

– А...его знает!²⁶ Կխնդրեմ, որ սանմաս տանեն:

– Դե ծեծի՛ դուռը: Ո՞ւմ ես սպասում:

Յուրկան սկսեց դուռը դմդմբացնել: Կամենալով գոնե մի բանով օգնած լինել՝ միացա նեղ օրերի ընկերոջս՝ հետը հավասար ուժեղ հարվածելով փայտե փտած դռանը:

Միջանցքից մոտեցող քայլերի ձայներ լսվեցին: Դադարեցի խփել ու ականջ դրեցի: Յուրկայի խցին մոտեցան ժամապահն ու կարաուլի պետը: Ես այստեղ չեմ փոխանցի այն խոսքը, որով իմ տարաբախտ հարևանը դիմեց նրանց: Մանավանդ, որ նրանց մտքով իսկ չանցավ անսալ տառապյալի աղաչանքներին: Ընդհակառակը, կարաուլի պետը վազեց նաչգուրի հետևից: Կապույտ կապիտանը, մոտենալով Յուրկայի դռանը, հայիոյանքներ տեղաց ու ի լրումն՝ հիմզ օր էլ անձամբ իր կողմից ավելացրեց:

Նրանք հեռացան: Միջանցքում կրկին լռություն տիրեց:

– Ես էստեղ կսատկեմ,– անսպասելի սկսեց Յուրան:

– Да-а, дембель в опасности,– ավելի լավ բան գլխովս չանցավ ասել:

²⁵ գոհկ. – *Շոռում ու լացում եմ, ա՛րա*

²⁶ գոհկ. – *Ի՞նչ իմանամ:*

Այդ պահին հարևան նորից բնական պահանջ ունեցավ. պատի այն կողմից ականջիս էին հասնում նրա տնքոցները՝ «պարաշի» ցինկե պատերին շփող միզաշիթերի կարճատև հերթազայությունների արանքում:

Հոգոց հանեցի: Ուրիշ ի՞նչ անեի: Սուսանակը պենիցիլինով են բուժում, ոչ թե կարեկից դատարկախոսությամբ: Փորձեցի ինձ պատկերացնել Յուրկայի տեղում, բայց թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, անմիջապես էլ հեռու վանեցի ինձնից այդ դժնդակ միտքը:

Այդպես անցավ ևս տասը օր: Այժմ Յուրկայի տնքոցները գիշեր-ցերեկ պատի այն կողմից հետապնդում էին ինձ: Դա մի մղձավանջ էր: Մի անգամ առավոտյան զննման ժամանակ լույսի տակ ավելի լավ տեսա նրա դեմքն, ու միանգամից այլալվեցի: Հաղթակազմ տղան ընդամենը մի շաբաթվա մեջ մմանվել էր Օսվենցիմի կալանավորի, այնպիսին, ինչպիսին ցույց են տալիս նրանց վավերագրական քրոնիկոններում: Աչքերն ու այտերն այնպես էին փոս ընկել, որ թվում էր՝ ձեռքդ կմտներ այդ խորխորատները: Դեռ բոլորովին վերջերս այնքան առույգ, կարմրաթուշ Յուրկան դարձել էր այն լեզենդար որդերի նախատիպը, որոնց այնպես փայլուն գովերգում է Ավիցեննան իր կանոններում:

Վերջապես ազատման ժամը հասավ: Այս անգամ իմ հետևից եկել էր վաշտի ավագը իր «Մոսկվիչով»: Ըստ երևույթին, տեսքս, չնայած սպորտային զվարճանքներին, բավականին ողորմելի էր, քանի որ ավագը կափ-կանաչեց՝ տեսնելով ինչպես են անհաստատ քայլերով գնում միջանցքով:

Մեքենայում ձեռքով բարևեցինք իրար, առհասարակ՝ վատ մոժիկ չէր: Ջորամաս չհասած՝ խնդրեցի նրան արգելակել մի անհրապույր գյուղակի մոտ, որտեղ ապրում էր հերթական ընկերուհիս:

– *Օրբոյի* ամեն դեպքում արի՛, – հրաժեշտին նետեց ավագը:

Ես գլխով արեցի ու ոտքերս քարշ տվեցի ծանոթ խրճիթի կողմը: Խողովակից բարակ ծուխ էր բարձրանում: Խրճիթի մասին մի անպարկեշտ ոտանավոր միտքս ընկավ:

...Видит – в поле теремок стоит,
Из трубы валит дымок –
Значит, варится обед!
А есть там б... и или нет?

Մի ամիս անց Յուրկան ու ես հանդիպեցինք կայագորի հոս-
պիտարում, որտեղ ես «թաքնվում» էի ցրտերից, իսկ նա, ինչպես
պարզվեց, սուսանակն էր բուժում, որ սկսել էր քրոնիկական
դառնալ:


– Դու ի՞նչ է, դեռ չես գորացրվե՞լ,– հետաքրքրվեցի ձեռքսեղ-
մումից հետո:

– Դե չէ: Հարմար չի մի տեսակ՝ սուսանակով վերադառնամ
տուն: Էնտեղ հարսնացու ունեմ: Համ էլ՝ բան չի մնացել: Մի հինգ
ասեղ...

– Դե-դե...

Մեր կողքով հետույքն օրորելով փքված անցավ մի սիրունա-
տես բուժբույր. Յուրկան հայացքը թախիծով հառեց հեռացող
նստագնդերին: Ես քթիս տակ ծիծաղեցի, թփթփացրի նրա ուսն
ու շարժվեցի պալատի կողմը, որ մի կուշտ քնեմ մեր բոլորի կող-
մից ջերմագին սիրված տերության պաշտպանական կարողու-
թյան ամրապնդմանն ուղղված արդար վաստակից հետո:

«ԴՈՒՐՈՉԿԱ»



Աշունն այդ տարի շուտ սկսվեց: Օգոստոսի երրորդ տասնօրյակն էր, բայց հաճախացած անձրևներն ու տերևաթափը պատրանք էին ստեղծում, թե տարերքի շրջանն է այն եղանակի, որին անվանում են «очей очарование»... Պիտի ասեմ՝ պոետները մակդիր չեն խնայել՝ գովերգելու տարվա այս եղանակը: Ես պոետ չեմ, բայց ես էլ ժլատություն չեմ անի: Եվ այսպես, դա ամենակեղտոտ, ամենամոդկալի, ամենա..., մի խոսքով՝ աշուն չէր, այլ իսկական փորձանք: Ու բացի դրանից, ինչպես ինձ էր թվում այն ժամանակ, դա իմ կյանքի աշունն էր (տե՛ր Աստված, տասնինը տարեկանում...):

Այդպիսի կամ մոտավորապես այդպիսի մտքեր էին սողուկում այն ժամանակ դեռ չխուզած գլխիս մեջ՝ աղմուկի, ճռինչի, մետաղի սուր ճղավոցի ու մյուս բոլոր ձայների համաչափ նվազակցության տակ. ձայներ, որ կարող է արձակել *վորոնկը*՝ միջին արագությամբ ընթանալով վաղ առավոտից մաղող զգվելի անձրևի ստուսի մեջ թաղված ողորմելիագույն ճանապարհով:

Մութ մեկուսախուցն ու համր ուղեկիցս ավելի էին խորացնում այդ անուրախ, բայց, փառք Աստծու, ոչ երկար ճամփորդության անհարմարությունը: Փառք Աստծու, քանի որ շրջանային հոգեբուժարանը կամ «դուրոչկան», որի քննչական բաժին էին տանում մեզ, բանտից ընդամենը մեկ ժամվա հեռավորության վրա էր:

Պիտի խոստովանեն՝ այս ճամփորդության հետ ես փոքր հույսեր չէի կապում: Առջևում նշմարվում էր գիժ ձևանալու և, եթե ոչ «մշտական մահճակալ», զոմե «հոգեկան սաստիկ հուզմունքի վիճակ» ձեռք գցելու հեռանկարը: Էնտեղ քարը տրաքի՝ հինգ տարի է՝ «քիմիայով», ու պայմանական վաղաժամ ազատում էլ կա: Չես համեմատի օրացույցով նստելու հետ, որ գլխիս սարքել էր անմոռանալի Ալեքսանդր Արկադևիչը՝ փայլեցնելով իր լույսը բացվելուն պես սափրած թշերը, որոնցից «Սպարտակոս» օդեկոլոնի գարշելի բաղադրությունն էր բուրում: Ու ընդհանրապես, *սլեդսկը* վերջում իսկական սրիկա դուրս եկավ, թեև հարցաքննությունների ժամանակ ինձ «Ստյուարդեսա» էր հյուրասիրում: Այդ ժամանակից ի վեր չեմ կարողանում առանց նողկանքի զգացումի նայել այդ ծխախոտներին, ու առհասարակ, սիրտս խառնում է բուլղարական տաքակի ծխից, քանի որ հոտառությունս այն նույնացնում է Ալեքսանդր Արկադևիչի կաքինետի հետ, որտեղ պատերը, վարագույրները, աթոռների պաստառները, ամեն ինչ դրանով էին ներծծված:

Ըստ երևույթին համրի վիճակն իմից լավ չէր այդ երերումներով ու կտրուկ արգելակումներով ուղեկցվող ճանապարհին: Հաստատ նույնիսկ ավելի վատ էր: Ես ինձ գոմե կարող էի ճոխություն թույլ տալ՝ ժամանակ առ ժամանակ հայիոյել թե՛ ճամփան, եթե դարուփոսեր էին պատահում, թե՛ աշխարհի բոլոր վրոնոկները, երբ մետաղի ճռինչն անասելի կերպով սկսում էր ազդել նյարդերիս վրա, ու ընդհանրապես, ամեն-ամեն ինչ, հենց այնպես՝ առանց պատճառի, հոգիս թեթևացնելու համար: Համրը միայն իր մտքում կարող էր դա անել: Ինչևէ, նա ինքն էր իր համար ընտրել այդ միանգամայն անհարմար ամպլուան, այնպես որ՝ ինքն էլ պիտի միայնակ հատուցեր: Այդ հատուցումը ձգվում էր արդեն երկու ամիս, ճիշտ այն օրվանից, երբ մենքերը նրան նախնական կալանքի խցում էնպես էին հարթուկել, որ նրա միակ երթուղին մնացել էր մահճակալից *պարաշ* գնալ-գալը: *Բախանդան* խցակիցները նրան «անկողնում էին մատուցում», ինչին նա հազիվհազ պատասխանում էր երախտազետ մոթմոթոցով ու անատամ բերանը ծռնելով ժպտալու պես մի

բանով: Հիմա, ճիշտ է, արդեն ուշքի էր գալիս, ու թեև կուզեկուզ էր քայլում, բայց էլ չէր տնքում՝ ծեծված երիկամները բռնած: Մի խոսքով, վատ տղա չէր: Հետագայում, երբ նրա համրությունը «բուժեցին», բավական հետաքրքիր գրուցակից ու պատմող դուրս եկավ: Միբուժում էր հիշողություններ պատմել իր երկու մախկին կանանց ու էլի շատ այլ՝ օտար կանանց մասին: Հատկապես իրենց քաղաքի դատախազի կնոջ: Բայց այս ամենը հետո է պատահել ու իմ պատմության մեջ նախատեսված չէ, այնպես որ՝ չշեղվեմ թեմայից:

Վերջապես արգելակները հիմնավորապես ճռնչացին, ու վորոնկը մեխվեց տեղում: Խցիկի դուռը շրխկաց: Դրսից ձայներ լսվեցին:

Մեզ դիմավորեց երեք դյուժին սանիտարներից բաղկացած հանդիսավոր մի էսկորտ: Երբ անցնում էինք պահակակետով (այնտեղ էլ, ինչպես բանտում, պահակակետ կար՝ բոլորը չինչինարով), հերթապահ մեմբը ափսոսանքի ռեպլիկ նետեց.

– Երկուսն ե՞ն, ինչի... վե՞րջ:

Ասես պսիխների պլան պիտի կատարեին:

Մեզ տարան երկհարկանի, երկար մի շենք: «Դուրոչկան», որ իրենից գժերի հիվանդասենյակներ էր ներկայացնում, առաջին հարկում էր: Այստեղ՝ երկար միջանցքի մեջտեղում էր ծվարած մաս անչափ փոքր ընդունարանը, որտեղ մեզ ոտից գլուխ մերկացրին ու հիվանդանոցային համազգեստ տվեցին: Անկեղծ ասած՝ ես ինչ-որ բան զգացի, երանություն հիշեցնող մի աղոտ բան, երբ *կիրգաշներս* փոխարինեցի, երևակայեք՝ փափուկ հողաթափերով, թող որ առանց ետնամասերի: Համրի ձեռքը անկողնային պարագաները հետը մի ներքնակ տվեցին ու ուղեկցեցին միջանցքի ծայրը: Խցին հասնելով՝ մա շուռ եկավ ու ձեռքով արեց, ասես հրաժեշտ էր տալիս ինձ: Իսկը տարօրինակ...

Ես, ինձ հասանելիք «ներքնակեղենը» ստանալով՝ կանգնել, սպասում էի տեղավորմանս վերաբերյալ որոշմանը:

– Адж! Чаи-лимоны, бля буду, пойдём в тамбур!

Մեկը հիստերիկ ձայնով այս անհասկանալի նախադասությունն էր գոռում՝ շեշտելով միջի բոլոր ձայնավորները: Շրջվեցի

ձայնի կողմը: Հիվանդասենյակների դռներին պատուհանիկներ կային: Թերևս այդ պատճառով էին խցերն այստեղ պալատ կոչվում: Ընդունարանի ճիշտ դիմացի դռան պատուհանիկից աչքերը մեր կողմն էր չռել մի սաստիկ փոշոտած դեմք:

– Ի՞նչ կա, Կոլյա, սիրտդ էլի գալուպիրիդոլչի՞կ ուզեց, – հարցրեց սանիտարներից մեկը:

Կոլյան քթի տակ մոթմոթաց ու քաշվեց հիվանդասենյակի խորքը:

– Նիկողիմիչ, – Կոլյայի հետ խոսող սանիտարը շրջվեց դեպի գործընկերը, որ մի պնդակազմ, մոտ երկու մետր հասակով, գլխիս չափ բռունցքներով տղամարդ էր:


– Էս մեկին առայժմ *նարկոզների* մոտ չտեղավորե՞մք:

«Էս մեկը», այսինքն՝ ես, որևէ հիացմունք չարտահայտեց այդ հրապուրիչ հեռանկարի առնչությամբ, բայց Նիկողիմիչը, որ չնայած իր բիզոնային մարմնակազմությանը՝ հարմարվող մուժիկ էր, գլխով հավանություն տվեց ու ուսս բռնած տարավ դեպի հենց այն դուռը, որտեղից դուրս էին բռչում «չայ-լիմոնները»: Դուռը բացվեց, մտա հինգ մահճակալանոց մի լուսավոր, ընդարձակ հիվանդասենյակ: Հատակին, ինչպես միջանցքում, լինոլեում էր փռած: Լուսամուտները սովորականներից տարբերվում էին միայն դրսի հաստ ճաղավանդակով, որն «աչք էր շոյում» իր քառակուսիներով: Պատերն ու առաստաղը սպիտակեցրած էին: Չորս *չկոնկաները*, պարզվեց, փոշոտներով էին զբաղեցված, իսկ վերջինը, որ ուղիղ լուսամուտի տակ էր, իր բոլոր զսպանակներով ասես ինձ էր ժպտում:

– Здорово, братва!, – հիվանդասենյակի բնակիչներին ողջունեցի ավանդական ֆրագով:

Բրայրվան խաղաղ էր տրամադրված: Շկոնկաներից ողջույններ ու «նե՛րս արի, տեղավորվի՛ր» բնույթի հրավերներ հեղվեցին: Ներքնակս դատարկ մահճակալին գցելով՝ սկսեցի բարևել ու ծանոթանալ նոր հարևաններիս հետ:

Մեկի՝ նրանցից ամենատալանդալիչի անունը, ինչպես արդեն բախտ ունեցա նշել, Կոլյա էր: Կոլյան շատ մման էր յոգի: Համեմայն դեպս, վրան մսի կտոր չկար. լրիվ կաշի ու ոսկոր էր...



(անալիզի)

ՆՈՐ ՏԱՐԻ



Բացվեց դեկտեմբերի երեսունմեկի առավոտը: Մենք այն դիմավորեցինք՝ շրջան մտցնելով *չիֆիրի*՝ գիշերվանից արդեն չորրորդ բաժակը: Խցի ընդհանուր թվով քսանհինգ հոգուց միայն հինգս էինք չիֆիրիստ: Այդ հինգից չորսն առաջին տասնամյակը չէր, որ չիֆիրում էին, և միայն ես էի նորեկ նրանց շարքերում: Այն ժամանակ ինձ թվում էր, թե շրջանով պտտվող բաժակից իմ երկու կումն անելով հաղորդակից եմ դառնում սրբություն սրբոց՝ ինձ անձանոթ այդ նոր կյանքին:

Դեպքը, որի մասին պատրաստվում եմ պատմել, տեղի էր ունենում թբիլիսյան բանտի նկուղում, ինչպես արդեն նշեցի՝ Նոր տարվա նախօրեին: Խուցը, որտեղ գտնվում էինք, կատարում էր ինչպես կարանտինի, այնպես էլ *տրանզիտկայի* դեր, այսինքն այնտեղ պահում էին այն *զեկերին*, որոնց մի կետից մյուսն էին էտապավորելու: Մեզ Ռոստովից Թբիլիսի բերեցին բառացիորեն Թբիլիսի-Երևան *էքսպան* ուղարկելուց մեկ ժամ առաջ, և, քանի որ փաստաթղթերը ձևակերպելն ու մեզ *սյուլիպին* բարձելն անհնար կլիներ թե՛ ժամանակի, թե՛ բանտային գործիչների ճարակության դեֆիցիտի պատճառով, մենք ստիպված էինք համակերպվել այն մտքին, որ այս Նոր տարին էլ ենք դիմավորելու հայրենիքից դուրս, թեև այդքան մոտ էինք նրան: Իսկ այդ առավոտ մենք լուռ չիֆիր էինք խմում՝ ամեն մեկն իր մտքերով, ու բոլորը հաստատ մոտավոր հաշիվ էին անում՝ դեռ քանի այս-

պիսի տոն պիտի նշեն տնից, ով տուն ուներ, ու ազատությունից դուրս:

Մեր խցում խառը ռեժիմ էր՝ ուժեղացված և խիստ: Հավանաբար այդպես էր ստացվել տարեվերջին բանտում առաջացած ծանրաբեռնվածության պատճառով: Այս ժամանակահատվածում էտապներն առանձնահատուկ շատ են լինում: Բոլոր «տերերն» ամփոփում են անում ու աշխատում են գլուխներն ազատել ավելորդ ուղևորներից:

Մեր հրաշալի հնգյակը բաղկացած էր երեք հայից ու երկու վրացուց: Ինձնից բացի՝ բոլորը *սարոգաշներ* էին: Իմ հիշողություններում վրացի կոլեգաների մասին շատ քիչ բան է պահպանվել: Հիշում եմ միայն, որ նրանք երկուսն էլ կողոպտիչներ էին: Երկուսի դեմքին էլ երկու շաբաթվա, եթե ոչ ավելի, մորուք կար, ու հետո՝ նրանք իմ հիշողության մեջ տպավորվել են իրենց չափազանց լռակյացությամբ: Նրանց անունները ջնջվել են իմ հիշողությունից իրադարձությունների այդ ամբողջ հորձանքում, և հետո՝ դա չէ հիմա էականը, նրանց մասին չէ, որ պատմելու եմ:

Ուզում եմ հիմա անցնել իմ մյուս երկու համաչիֆիրնիկների դիմանկարների էսքիզներին, ու չգիտեմ՝ ումից սկսել: Թերևս լավ կլինի՝ ըստ ավագության...

Ըստ ավագության՝ առաջինն Օնիկն էր: Ես նրան այլևս այդ անունով չեմ կոչի, քանի որ ինքս էլ պատահական եմ իմացել նրա իսկական անունը, ու ինձ համար, ի դեպ, ինչպես բոլոր այն մարդկանց համար, ում հետ նրան վիճակված էր շփվել չորս պատերի մեջ հայտնվելուց ի վեր երեք տասնամյակ, նա, չգիտես ինչու, Կոլյան էր, ավելի շուտ՝ Կոլիկը: Հենց այդպես էլ նրան կանվանեմ այն ողջ թանկ ժամանակվա ընթացքում, որը խլելու եմ ինտրիգային «չիֆիր» բառն ընթերցելուց հետո՝ դեռ երկրորդ նախադասությունից իմ պատմվածքով հետաքրքրված ընթերցողից: Հա, ու մի խնդրանք. ներքե իմ փոքրիկ թուլությունը, այն է՝ բարդ նախադասությունները: Դպրոցական տարիքից եմ այդպիսին, և կարծում եմ՝ արդեն անբուժելի է: Այնպես որ, մի անգամ էլ եմ խնդրում, ներողամի՛տ եղեք...

Եվ այսպես, շարունակում են: Կոլիկը հայրենիք էր վերադառնում Մորդովիայից, որտեղ իր պատիժն էր կրել հատուկ ռեժիմի գաղութում: *Օսոբնյակների* համար զեղչ էր գործում, ըստ որի՝ նրանց ազատագրկման ռեժիմը պատժաժամկետի կեսն անցնելուց հետո կարող էր առանձնակի կոպիտ խախտումների բացակայության դեպքում փոխարինվել խիստ ռեժիմով: Թե որոնք են համարվում առանձնակի կոպիտ խախտումներ, թողնված էր գաղութի ղեկավարության հայեցողությանը: Կոլիկը կողոպուտի համար դատապարտվել էր տասներեք տարվա ազատագրկման, ու հիմա՝ կալանքի տակ առնվելուց համարյա յոթ տարի անց, նա անհամբեր սպասում էր այն բուպեին, թե երբ ոտքերի տակ կրկին կզգա հայրենի հողը: Չնայած հատուկ վտանգավորության կրկնահանգագործի պիտակ ունենալ, բայց նա դատարանի այդ որակումն ամբողջովին հերքում էր թե՛ իր արտաքինով, թե՛, ի դեպ, իր պահվածքով: Լրագրողները բավական հաճախ են դիմում այդ սահմանմանը, որ միամիտ ընթերցողներին որքան հնարավոր է պարզորոշ ներկայացնեն հանցագործին: Վերջինս սովորաբար ներկայանում է լողլողի տեսքով՝ առնվազն հարյուր ութսունվեց սանտիմետր հասակով, մի սաժեն լայնության թիկունքով, կիտած հոնքերով և *ֆենյայի* ու թրծված հայիռյանքի խառնուրդ խոսվածքով: Կոլիկը միջահասակ էր, պնդակազմ ու ուժեղ: Նրա դեմքն ամենևին չար չէր, ավելին՝ խաղաղ էր ու շատ հոգնած: Աչքերը՝ ոչ այն է՝ կապույտ, ոչ այն է՝ գորշ, ինչ-որ միջին մի բան այս երկու երանգների արանքում, ամենևին էլ չէին փայլատակում կայծակի նման, ընդհակառակը՝ նրանց մեջ կարելի էր խղճմտանք կարդալ: Խղճմտանք՝ մարդկային ցեղի հանդեպ, կարծում են: Չնայած վիտամինների մշտական սղությանը, *բալանդան* առատ չէ դրանցով, նրան հաջողվել էր պահպանել բոլոր ատամները: Հայիռյուն էր միայն ծայրահեղ դեպքերում, և որ ամենակարևորն է՝ բոլորին ապշեցնում էր մանր գողերին բնորոշ հատկանիշների խալառ բացակայությամբ: Ես նրա հետ ծանոթացա Ռոստովի բանտի տիղմագտարանում, էտապից առաջ: Խոսեցինք դեսից-դենից...Ես այդ ժամանակ արդեն սկսել էի պարփակվել ինքս իմ մեջ և այն-

քան էլ հաճույքով չէի շփման գնում մարդկանց հետ: Որոշ ժամանակ անց այդ պարփակվածությունն իմ մեջ բազմաթիվ բարդույթներ ծնեց, որոնց պատճառով մինչև հիմա դժվարություն եմ ունենում մարդկանց հետ շփվելիս:

Բայց Կոլիկն ասես ձգում էր դեպի իրեն: Ըստ երևույթին, հին օտբնյակի հետ իմ այդ կարճատև ընկերությունն սկսվեց պարզապես հետաքրքրասիրությունից, այդ նոր՝ անսպասելիորեն ինձ պատուհասած կյանքի մասին որքան հնարավոր է շատ բան իմանալու ցանկությունից: Իսկ ով, եթե ոչ մա՝ այդպիսի ստաժով զեկը, կկարողանար ինձ պատմել այդ աշխարհի ժամանակավոր պահման վայրերի ու ճամբարների, օրենքների ու սովորույթների, հայտնի գողերի մասին, որոնցից շատերի հետ մա անձամբ շփվելու առիթ է ունեցել Սովետմիությունով մեկ էտապային քոչվորության տարիներին, ու դե իհարկե՝ պարզապես կյանքի մասին: Ակնհայտ էր, որ մա չէր խաբում, երբ պատմում էր այդ ամենի մասին: Երբ մեզ տեղափոխում էին ստոլիպինով, ես նրան պատմեցի իմ պատմությունը: Կոլիկը, ուշադրությամբ լսելով ինձ, սկզբում որոշ ժամանակ լռեց, ապա խոր շունչ քաշելով՝ աչքերը վեր բարձրացրեց ու նայեց ինձ.

– Աջ ձեռքով էիր խփում:

– Հա...

– Հենց աջ ձեռքով էլ ամբողջ կյանքդ փշրել ես: Չգիտեմ՝ ուր տարի հետո, երբ դուրս գաս, կկարողանա՞ս վերադառնալ էն կյանքիդ, որով ապրել ես նախկինում: Եթե կարողանաս՝ լավ: Եթե չէ, ավելի լավ է՝ չապրես: Չկա ավելի վատ բան, քան էս կյանքը: Ամենուր կեղտ է: Դու դեռ չես սովորել տեսնել էդ կեղտը, ոչինչ, շուտով կսովորես: Այ այդ ժամանակ ամեն ինչից սիրտդ կսկսի խառնել: Ինձ ի՞նչ, ես արդեն սովոր եմ, էլ ոչ մի բանի չեմ արձագանքում, ամեն-ինչ տանուլ տվածի պես եմ: Դե լավ, վերջ...

Հետո մա երկար պատմում էր հիսունականների Տազանյան բանտի ու այն գողերի մասին, որոնց մոտ նրան այն ժամանակ տեղավորել էին: Նրան լսելը շատ հետաքրքիր էր: Կոլիկը հրա-

շալիորեն կարողանում էր իր մտքերն ունկնդրին փոխանցել ամենանրբին ձևակերպումներով: Ափսոս, որ նրա այդ ունակությամբ չէր օգտվում:

Նրա մի առանձնահատկության մասին էլ կուզենայի հիշատակել: Կոլիկն ասում էր: Ատում էր մի յուրահատուկ բավականությամբ: Նրա այդ զգացմունքը տարածվում էր ներքին գործերի ողջ ապարատի վրա՝ սկսած մինիստրից, վերջացրած ամենավերջին ուղեկցորդ-հսկիչով: Սկզբունքորեն, մենք բոլորս էինք նրանց ատում, բայց այնպես, ինչպես դա անում էր Կոլիկը, ուրիշ ոչ ոք չէր կարող անել, համենայնդեպս՝ անալոգներ ինձ չեն հանդիպել: Տարիների ընթացքում, որ անցկացրել եմ անազատության մեջ, դիտարկման մեթոդով հանգել եմ այն եզրակացության, որ զեկերի կեսից ավելին դատապարտված են հանրավի, իսկ մնացած մասի ութսուն տոկոսի դատավճիռը ավելին է եղել, քան վաստակել են: Որպեսզի ավելի պարզ լինի, թույլ տվեք հետևյալ օրինակը բերել: Կես դույլ ցորենի համար, որ *կոլ-խոզի* ձիապանը գողացել էր հենց կոլխոզի ձիերի համար, որոնք մնացել էին առանց կերի, վերոհիշյալ ձիապանին մշանակվել էր պատիժ՝ չորս տարվա ազատազրկում: Իսկ քաղկոմի կոմսոմոլի քարտուղարին, որ սեռական այլասերության համար զուգընկերուհի էր ընտրել հինգ տարեկան աղջկա, այդ նույն չորս տարին ներվել էր: Ինչի՞ համար էր իմ այս շեղումը: Դե լսեք շարունակությունը...

Իր վերջին՝ վեցերորդ պատժաժամկետը կրելուց հետո Կոլիկը վերադառնում է Երևան: Նա այդ ժամանակ քառասունինը տարեկան էր: Թվում էր՝ արդեն ուշ է կաշին փոխելու համար, բայց նա հստակ որոշում էր կայացրել՝ փակել հաշիվները հնի հետ, և պատկերացրեք, դա նրան հաջողվել էր: Նա փորձում էր ինքն իրեն համոզել, որ բանվորական միջին աշխատավարձն ազատության մեջ իր կարիքներն ավելի լավ կբավարարի, քան պետության տված օրապարենն ու ամսական յոթ ռուբլին, որով կարելի էր անհրաժեշտ ապրանքներ առնել զոնի կրպակից: Եվ նրա մտքում արդեն գծագրվում էր բարեկեցության վարդագույն

նկարն իր բոլոր մանրամասներով. մոտավորապես՝ բնակարան նորակառույց թաղամասում, քնքուշ, ամեն ինչ հասկացող կին՝ մոտ մի երեսունյոթ տարեկան, ու անամպ երջանկության այլևայլ բաղադրիչներ: Բայց միլիցիայի շրջանային բաժինը, որտեղ Կոլիկը հաշվառված էր, բախվել էր չբացահայտված ավազակային հարձակման խնդրի: Եվ *օպերները* խորհրդակցել, գցել-բռնել ու որոշել էին, որ այդ խճճված գործում հանցագործի դերի համար Կոլիկից լավ թեկնածություն չկա: Ու քանի որ վերջին պատժաժամկետն իրեն վիճակված էր եղել կրել հենց կողպուտի համար, տասներեք տարվա պատժաժամկետի հետ միասին նրա վրա դրել էին նաև քսանվեցերորդ հոդվածը, համաձայն որի էլ նա օր ծերության ճանաչվել էր առանձնակի վտանգավոր կրկնահանցագործ՝ զգեստափոխված զոլավոր *սպեցուկայուլ*, որին էտապավորել էին գրողի ծոցը՝ Մորդովիա՝ այնտեղ ավարտելու իր կյանքի ուղին: Եվ այժմ ահա, ի հեճուկս արդարադատության աշխատակիցների բոլոր սպասումների, նա՝ ողջ ու անվնաս և վերջիններիս նկատմամբ կատարելապես հիմնավորված ատելությամբ, վերադառնում էր տուն: Նրա հետագա ճակատագիրն ինձ հայտնի չէ, թեև, լավ իմանալով արդարադատության մեր ապարատի անասանությունը, խստագույնս կասկածում եմ, որ արդարությունը հաղթել է, իսկ Կոլիկին ներողություններով ազատ են արձակել: Ինձ կարող են հակադարձել՝ ասելով, որ այս օտբնյակի համար անմեղության իր վարկածը հորինելը ձախ ձեռքի գործ էր: Բայց այստեղ արդեն գալիս է նման հայտարարությունը տարրական տրամաբանությամբ հակադարձելու իմ հերթը: Բարի եղեք ասել, գրողը տանի, ինչո՞ւ պիտի մարդը, որը գիտակցական ողջ կյանքն անցկացրել է անազատության մեջ, ինչպես հաջողված, այնպես էլ տապալված գործերի ծառայողական ահռելի ցուցակով արդեն տարեց այդ հանցագործը իր ազատագրկման յոթերորդ տարում ինձ ներկայանար որպես պատժիչ մարմինների քմահաճույքի անմեղ զոհ: Հավատացե՛ք, դա հիմար ու ծիծաղելի կլիներ այն պայմանների պարագայում, որոնցում մենք գտնվում էինք: Բայց թերևս արդեն բավական շատ բան ասվեց, որպեսզի դուք ընդհանուր գծերով կա-

րողանաք պատկերացնել՝ ինչ մարդ էր Կոլիկը:

Նրա մասին խոսելիս ես մի քիչ տարվեցի ու բոլորովին մոռացա այս պատմության մյուս հերոսին: Իսկ նա, հավատացե՛ք, պակաս հետաքրքրական մարդ չէր, քան Կոլիկը: Իր ասելով՝ 1943 թվականի ծնունդ էր, այնպես որ իմ նկարագրած իրադարձությունների պահին նա իր կյանքի քառասուներեքերորդ տարում էր, թեև տեսքից նրան 56-58 տարեկանից պակաս չէիր տա: Պատահականորեն նրա անվան հետ էլ նույն պատմությունն է եղել, ինչ Կոլիկի դեպքում: Նրա անունը դրել էին Հենրիխ, բայց Էդիկ էին ասում: Առաջին անգամ նա ստիպված է եղել վռիկ ճաշակել տասնչորս տարեկանում, ու այդ ժամանակից սկսած, այսինքն՝ համարյա 28 տարի, եթե չհաշվենք այն օրերը, որ ընկած էին հերթական ազատման ու հերթական կալանավորման արանքում, իսկ դրանք այդ ժամանակահատվածում ամբողջությամբ վերցրած կազմում էին մոտ երեք ամիս, մի խոսքով, այդ ամբողջ ժամանակ նա առանց դուրս գալու լռված է եղել ճամբարներում: Տասը անգամ նրան վիճակված է եղել վերապրել արդարության հաղթանակի ողջ հմայքը, այսինքն այն պահը, երբ դատավորի ճառն ավարտվել է «.... տարի ազատազրկման» բառերով, ընդ որում՝ չորս անգամ այս վերջին բառերից հետո դատավորն ավելացրել է. «.... հատուկ ռեժիմի ուղղիչ-աշխատանքային գաղութում»:

Եվ ահա վերջին պատժաժամկետի մեկնարկից մեկուկես տարի անց նրան ուղարկել են «տուն»: Ուղարկել են ոչ թե հիվանդանոց, ոչ թե տուրքիսպանսեր (նա տառապում էր թոքախտով), այլ հենց զոնա: Ես բազում անգամ լսել եմ մի հրահանգի մասին, համաձայն որի ուղղիչ գործերով ապարատի աշխատակիցներին առաջարկվում էր ամեն կերպ նպաստել առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստներին դանդաղ շարքից հանելուն, բայց եթե այդպես էր, ապա էլ ի՞նչ իմաստ ունի սադիզմը՝ դանդաղ մահը: Ես այստեղ չեմ պատրաստվում հանդես գալ փաստաբանի դերում, որի առաքելությունը օտոբնյակների իրավունքների և շահերի պաշտպանությունն է, քանի որ նրանց

ճնշող մեծամասնությունը կործանված մարդիկ են, ու ոչ մի բան այլևս ի գործու չէ վերաձևել նրանց հոգեբանությունը, բերել նորմալ վիճակի, բայց թույլ տվեք հարցնել՝ ի՞նչ էր մնում անել դանդաղ մահվան դատապարտված այս մարդկանց, եթե ոչ՝ պայքարել հանուն գոյության: Կարևոր չէ՝ ինչ միջոցներով: Գլխավորը նպատակն է: Նպատակն օգնում է գոյատևել: Ուկրաինայից Հայաստան էտապավորվելու ժամանակ ինձ հանդիպած օտար-նյակներից մեկը հենց այդպես էլ հայտարարեց. «Գիտես ինչ, ես թքած ունեմ: Հարազատ եղբորս էլ կծախեմ, մենակ թե ինձ լավ լինի»: Այն ժամանակ ես իմ ամբողջ էությանը վրդովվեցի, բայց հիմա հասկանում եմ նրան: Քանի որ մույնիսկ միանգամայն բարեկեցիկ կյանքով ապրող, երբևէ որևէ հարցում պարսավանքի չարժանացած մարդիկ, գուցեև որևէ կերպ աչքի չընկած, երբեմն իրենց նպատակին հասնելու համար (և ուշադրություն դարձրեք՝ նրանց նպատակը գոյատևելը չէ, նրանց այսպես թե այնպես ոչ ոք չի խանգարում ապրել) այնպիսի բարբարոս ճանապարհներով են գնում, որ նրանց կողքին ցանկացած օտար-նյակ ուղղակի հրեշտակ կթվա: Ես նորից փոքր-ինչ շեղվեցի հիմնական տեքստից, այնպես որ խնդրում եմ մեծահոգաբար ներել ինձ: Եվ այսպես՝ Էդիկի մասին:

Էդիկը պրոֆեսիոնալ էր՝ խիստ նեղ որակավորմամբ: Ամեն անգամ խանութների ցուցափեղկերի ապրանքների առատությունից մինչև սրտի խորքը ապշահար եղած՝ նա անմիջապես, առանց հապաղելու, վերոնշյալ ցուցափեղկեր ներթափանցելու փորձ է արել, և ինչն է հետաքրքիր՝ ամեն անգամ անհաջող: Նա այնքան քիչ է գտնվել ազատության մեջ, որ այդ արհեստը սովորել այդպես էլ չի կարողացել, իսկ այլ բան սովորելու ձգտում նա ուղղակի չուներ: Որևէ այլ բան նա չի էլ պատկերացրել: Եվ հետո՝ ե՞րբ պիտի պատկերացներ...

Ահա այդպես էլ նա աստիճանաբար մոտեցել է այն վիճակին, երբ կյանքի միակ ուրախությունն իր համար չիֆիրի բաժակն է մնացել: Մեր ծանոթության ողջ ընթացքում ոչ մի անգամ չեմ տեսել նրան օճառով լվացվելիս, առավելևս՝ ատամները լվալիս: Բայց չէ, տարին մի անգամ՝ Նոր տարվա նախօրեին նա ամեն

դեպքում կատարում էր վերջին պրոցեսուրան, այն էլ՝ աղի օգնությամբ: Այդպես նա իր բերանում մնացած չորս թե հինգ ատամները մաքրում էր փայլելու աստիճան, բայց այդ պրոցեսուրայից հետո նրա ամեն մի ժպիտը մեր ծիծաղն էր հարուցում: Այնպես անհեթեթ էր նրա մարգարտափայլ ատամների այդ կոնտրաստն ընդհանուր կեղտոտ ֆոնին: Ու մեկ էլ՝ նրա նվազ մարմնում ապշեցնող էր ցրտին դիմանալու կարողությունը: Ես այդ ժամանակ տասնինը տարեկան լոնդի էի՝ 185սմ հասակով, 90կգ քաշով, սպեցովկայի տակից հագած պուլովերով ու տաք բուշատով, բայց միևնույն է՝ մրսում էի: Իսկ նրա հագին ընդամենը պետական սպեցովկա էր, վրայից էլ՝ առանց օձիքի բարակ բաճկոն, հիվանդություններն էլ՝ վրադիր: Ու նա խորապես թքած ուներ թե՛ խոնավության, թե՛ սառնամանիքի, թե՛ բանտային մահճակալների պողպատյա ձողերի վրա, որ խրվում էին ոչնչով դրանցից չպաշտպանված մարմնի մեջ: Հավանաբար նա անտարբեր էր ոչ միայն մարդկանց հանդեպ, այլև հենց բնության՝ իր բոլոր աճաբարություններով հանդերձ:

Թերևս, բավական պատմեցի արդեն այս պատմության հերոսների մասին: Այժմ կարելի է անցնել սյուժեի զարգացմանը: Չիֆիրն արդեն խմել-վերջացրել էինք: Երբ ինչ-որ լավ բան վերջանում է, սովորաբար տխուր զգացողություն է առաջանում: Այդպես էլ մենք, տխուր հայացքներով ճանապարհելով առույգության այդ էլիքսիրի վերջին կումը, որ անհետացել էր արդեն չեմ հիշում ում կոկորդում, նստել ու լուռ մտածում էինք, ինչպես սկզբում ասել եմ, ամենքս մեր մասին:

Առաջինը լռությունը խախտեց Կոլիկը: Նա տնքտնքալով վեր կացավ տեղից, ձգվեց ու մոթմոթաց.

– Դե ի՞նչ: Վերջին թուրմն էլ խժռեցինք: Հիմա պիտի մտածենք՝ գիշերն ինչ ենք խմելու:

Մենք միաձայն հոգոց հանեցինք, ընդ որում՝ Էդիկն իր թոքեփից ավելի շուտ խզոց հանեց, քան հոգոց:

– Ես էստեղ մի համերկրացի ունեմ, ինքն էլ է Փոթիից: Հիմա

կարթնանա, կհարցնեն, գուցե մոտը *չերվոնեց* մնացած լինի, – ասաց ստրոգաչներից մեկը:

– Դե-դե..., – մոթմոթաց Կոլիկն ու ոտքերը քարշ տվեց դեպի լվացարանը:

Էդիկը նույնպես վեր կացավ և սկսեց քայլել ազատ արանքում՝ դռնից մինչև սեղանը: Միջանցքում *բալանդյորներն* արդեն զրնգացնում էին ալյումինե սպասքը: Շուտով այս տարի վերջին անգամ անցնելու էինք նախաճաշի:

Խուցն աստիճանաբար սկսեց արթնանալ: Այս ու այն կողմից քնաթաթախ մոթմոթոցներ էին լսվում: Էդիկը դադարեց քայլել և դռանը մոտենալով՝ սկսեց սպասել բալանդյորներին: Փոթեցի ստրոգաչը, տեսնելով, որ իր համերկրացին՝ մոտ երեսուն տարեկան բարձրահասակ մի երիտասարդ, արթնացել և պարաշի հերթ է կանգնել, մոտեցավ նրան ու արմունկից բռնելով՝ մի կողմ քաշեց: Ես չլսեցի նրանց երկխոսությունը, բայց հասկացա, որ *չերվոնեցի* հետ կապված մեր հույսերը զուր էին: Երիտասարդն ինչ-որ բան մոթմոթալով անընդհատ տարածում էր ձեռքերը ու գլուխը բացասաբար տարուբերում: Այդ ժամանակ հասավ իր հերթը, և նա, մի անգամ էլ անհույս տարածելով ձեռքերը, ծուլորեն մոտեցավ պարաշին: Ստրոգաչը վերադարձավ ու իմ հարցական հայացքին ի պատասխան ասաց.

– Ասում է՝ լրիվ *լոբշ* է: Ոչինչ, մի բան կմտածենք, ա՛րա...

Կոլիկը, որ արդեն վերջացրել էր իր առավոտյան հարդարանքն ու մոտեցել էր մեզ, քմծիծաղեց:

Նախաճաշը բերեցին, եթե կարելի է այդպես կոչել սև հացը՝ դրսից վառված, ներսից լրիվ հում, ասես ընդհանրապես չեն էլ թխել, ոլոռով ապուրը, որ պատրաստված էր մեկ լիտր ջրին մեկուկես ոլոռահատիկ հաշվարկով, և թեյը՝ արդեն սառած ու չտեսնված անգույն: Տոնական նախաճաշն անցնում էր տխուր-տրտում: Վերջապես այն էլ ավարտվեց: Համակազմը ցրվեց դեպի երկաթե մահճակալները: Բոլորը սպասում էին առավոտյան ստուգմանը:

– Քեզ մոտ ոչ մի վտանգավոր բան չկա[»]: Եթե կա, թաքցրու կամ տուր, ես թաքցնեմ: Հիմա շմոն եմ անելու: Նոր տարուց

առաջ միշտ շնոն են անում,— թեքվելով իմ կողմը՝ կամաց խոսեց Էդիկը:

Ինձ մոտ ոչ մի վտանգավոր բան, ինչպես ինքն արտահայտվեց, չկար: Ես ուսերս թոթվեցի ու գլուխս բացասաբար տարուբերեցի: Նա ուղղվեց ու մոտենալով իր երկաթյա մահճակալին՝ մեջքի վրա փռվեց: Խցում լռություն տիրեց:

Միջանցքն անսպասելիորեն լցվեց աղմուկով: Աղմուկը մոտեցավ մեր խցին: Դուռը բացվեց՝ ներս թողնելով մի տասը հոգի բանտապանի: Նրանց մեջ կային ոչ միայն բանտապահակներ, այլ նաև սպաներ, հավանաբար օպերներ ու *ռեժիմնիկներ*:

— Արա՛գ, արա՛գ, դե՛, դե՛, բոլորդ միջանցք:

Էդիկը ճիշտ դուրս եկավ: Դա սովորական առավոտյան ստուգում չէր, այլ ամենախիսկական *շմոն*:

Մենք դուրս եկանք միջանցք ու շարվեցինք պատի երկայնքով: Երեք թե չորս բանտապաններ լապտերներով մտան խուց, մյուսներն սկսեցին զբաղվել մեզնով: Մեզ շմոնեցին բավական արագ, բայց՝ գործն իմացողի պես: Ինձնից քիչ հեռու կանգնած էր այն տղան, որին մի ժամ առաջ մեր ընկերը դիմել էր չերվոնեցի խնդրանքով: Հասավ խուզարկվելու նրա՝ հերթը: Նրանով զբաղվում էր մի հաղթանդամ բանտապահակ: Ակնհայտ երևում էր, որ տղան անհանգստացած է: Նրա այդ վիճակը բացատրվում էր այն երեք կարմիր թղթերով, որ բանտապահակը հայտնաբերեց նրա աճուկից: Բանտապանը գլխավերևում հաղթականորեն ցնցեց թղթադրամներն ու, մոտենալով մայրին, որ կանգնած էր քիչ հեռու ու հետևում էր շմոնին, դրանք մեկնեց նրան: Ապա վերադարձավ իր զոհի մոտ ու ինչ-որ բան ասաց նրան: Սրա ուսերը թուլացան, նա մարմնով մեկ մի տեսակ կուչ եկավ ու այդ դիրքով էլ մնաց մինչև նախատոնական միջոցառման ավարտը: Կուլիկը մայեց նրա կողմը, ու նրա դեմքին զգվանքի արտահայտություն հայտնվեց: Էդիկն իր զգացումներն ի ցույց դրեց ավելի բուռն: Դրանք արտահայտելու համար առանց որևէ դիմախաղի օգնության դիմելու՝ նա պարզապես շատ երկար ու խրթին հայիռյանք տեղաց ու թքեց իր ոտքերի տակ:

Մեզ բոլորիս արդեն ստուգել էին և, էլ ոչինչ չհայտնաբերելով, բանտապանները սպասում էին խցերի ստուգման արդյունքներին: Դրանք երկար սպասել չտվեցին: Ըստ երևույթին՝ հարուստ որս չէր եղել, քանի որ բոլորը դատարկածեռն էին ու դեմքի հիասքափված արտահայտությամբ: Միայն թափորի վերջից գնացողը, հավանաբար առաջնորդվելով «շնից մազ պոկելն էլ օգուտ է» դեկզով, ճանկել էր մրտա չիֆիրբակը: Չիֆիրբակը նույն այն ալյումինե կեալիտրանոց բաժակն է, որ հարմարեցված է կրակին դնելուն: Օգտագործվում է չիֆիր պատրաստելու համար ու կա բոլոր խցերում: Սովորաբար նրա վրա ստուգումների ժամանակ ուշադրություն չեն դարձնում, քանի որ թեյը վաճառում են հենց իրենք՝ բանտապահակները՝ տուփը մի չերվոնեցով: Տեսնելով, որ էլ ապրուստի բան չկա, բանտապաններն սկսեցին ներս քշել մեզ: Վերջապես, վերջին ուղևորն էլ մտավ խցի կիսախավարը, ու դուռը շխկալով փակվեց:

Առհասարակ, շմոռը, եթե նույնիսկ ոչինչ չեն հայտնաբերում, տհաճ մատվածք է թողնում հոգում: Միայն մի պահ կա այս ամբողջ պրոցեդուրի մեջ, երբ չգիտես՝ լաս, թե խնդաս: Դա այն ժամանակ է, երբ գրպաններում ու կոշիկների մեջ ոչինչ չհայտնաբերելով՝ շմոռ անողի ձեռքն սկսում է ձվերդ քչփորել: Իմ մեջ միշտ կասկած էր առաջանում, որ այդ ապարատում աշխատանքի են ընդունում ընտրովի, այսինքն այնպիսիներին, ովքեր դեմ չեն բռնել մեկի անդամը: Ես, թերևս, նման լիրիկական շեղումներ այլևս չանեմ, որ չգայրացնեմ մեր փառապանծ օրգաններին, քանի որ նրանց աշխատակիցները, բացի ամենաանհավանական պատմություններ գրելու ունակությունից, ցավոք, տիրապետում են մառ կարդալու տաղանդին, ու եթե գտնվի մի մարդ, որի համարձակությունը հերիքի հրատարակել այն, ինչ ես գրել եմ այստեղ, ապա հաստատ գլխիս շմոռ կսարքեն՝ ձվեր պոկելու հատուկ նպատակով: Իսկ դրանից հետո գրես, չգրես, նորերը, մեկ է, չեն աճի: Այնպես որ, ես վերադառնամ իմ նյութին: Եվ այսպես, դուռը շխկալով փակվեց...

Մեր չկայացած կրեդիտորը կանգնած էր՝ մեջքը հենած մահճակալի սյանը, և սպասողական հայացքով հետևում էր դեպ-

քերի ընթացքին: Երևում էր՝ նա տրամադրվել էր, որ իրեն շուտով սկսելու են խփել, «*возмощно, даже нозаму*»²⁷ (ներեցեք գողացած մեջբերման համար): Սպասումն արդեն տանջալից էր դառնում, իսկ նրան ոչ ոք այդպես էլ չէր անհանգստացնում: Էդիկն այդ ժամանակ անցնում էր նրա կողքով: Տղան նետվեց դեպի օտբեյական ու սկսեց ինչ-որ բան մոքմոքալ, հավանաբար արդարանում էր՝ ընթացքում պատճառաբանություններ հորինելով ու կախվելով վերջինիս արմունկից: Էդիկը կտրուկ թափ տվեց ուսն ու ձեռքն ազատելով՝ երես դարձրեց նրանից: Տղան հենց այն է՝ ուզում էր նետվել իր համերկրացու՝ ստրոգաչի կողմը, սա կասեցրեց տղային՝ կտրուկ թքելով իր ոտքերի տակ: Տղան այժմ շփոթված կանգնած էր խցի մեջտեղում ու անօգնական չորս կողմն էր նայում: Հանկարծ նրա ուսին նստեց Կոլիկի ծանր ձեռքը: Սա կկոցեց աչքերը՝ սպասելով հարվածի: Բայց հարվածը չհետևեց: Դրա փոխարեն բոլորը լսեցին Կոլիկի բարձր ձայնը.

– Որդի՛ս,– խոսեց Կոլիկը,– դու դեռ ջահել ես, քեզ դժվար չի լինի ուղղվել: Ոչ մի տեղ ու երբե՛ք ժլատ մի եղիր: Ինքդ տեսար: Էդ չերվոնեցը լավ բանի կծառայեր, մնացած փողն էլ մենք էնպես կպահեինք, որ մենքերը ոռներն էլ ճղեին, չէին գտնի: Դե, ոչինչ: Թող սա քեզ դաս լինի: Հաջորդ անգամ էլ էդպես չես վարվի, չէ՞:

Տղան ջերմեռանդ գլխով արեց ու խղճալի ժպտաց: Կոլիկը բաց թողեց նրա ուսն ու շարժվեց դեպի իր մահճակալը:

Այս իրադարձություններին հետևած ցերեկն ու երեկոն անցան առանց դրվագների: Բայց չէ, ստում եմ: Երբ ընթրիքից հետո բոլորն անցան մարաֆետի, այսինքն՝ լվացվելու, ով ածելի ուներ՝ սափրվելու, Էդիկը տուփից մի պտղունց աղ հանեց, շարժվեց դեպի ազատվող լվացարանն ու սկսեց դանդաղ մլուլ տալ հատուկեմտ մնացած ատամների հետ:

– Նա էս բանը միայն Նոր տարուց առաջ է անում,– շշմջաց ինձ Կոլիկը:

Նա ինքը ոչ միայն լվացվել ու փոխել էր ներքնագգեստը, այլև

²⁷ հնարավոր է՝ նույնիսկ ոտքերով

սափրվել էր, և այն էլ ո՛չ հենց այնպես, այլ լիարժեք: Ու ինչպե՛ս էր հերիքել համբերությունը: Չէ՞ որ ստիպված էր եղել սափրվել «Նևայով», ու ոչ թե սափրվելու գործիքով, այլ սայրը մի փոքր ուստի ամրացրած:

Կրկնությունից խուսափելու համար Էդիկի ժպիտից ստացած տպավորություններս չեմ նկարագրի, ավելի լավ է՝ շարունակեմ պատմությունս: Այժմ մենք պատրաստ էինք դիմավորելու Նոր տարին, բայց մի բան մթագնում էր մեր տոնը՝ «թրջելու» բան չունեինք:

Հանկարծ, տասնմեկի կողմերը կլինեք, Էդիկի դեմքն, այսպես ասած, փայլատակեց:

– Եկեք *ժժոնկա* սարքենք: Չիֆիր չկա՝ գոնե ժժոնկայով ուրախանանք:

– Դո՛ւ, քանկագի՛ն, երբեմն սիրելի՛ Էդիկ, բացառիկ գյուտարար ես, միայն թե հաշվի չես առել, որ ժժոնկան շաքարից են սարքում, որը մենք նույնպես չունենք: Այնպես որ՝ հանգստացիր:

Մենք նորից լռեցինք: Բայց այս անգամ մեր լռությունը խախտվեց մի ձայնով, որը մեզ ձայն Աստծո թվաց.

– Ես ունեմ շաքար...

Մեր առջև կանգնած էր այն նույն տղան, ումից կոնֆիսկացրել էին չերվոնեցները: Նա մեզ երկարեց իր ձեռքը: Եվ ոչ թե դատարկ ձեռքը, այլ փաթեթը:

Էդիկը չքողեց նրան երկար մնալ այդ դիրքով: Փաթեթն առնելով ու բացելով՝ նա այնպիսի ձայն արձակեց, որ երևի կարձակեին հեռավոր անցյալի մեր նախնիները մամոնտի հաջող որսի դեպքում: Թղթի վրա ճերմակին էին տալիս շաքարի մեծ կտորները՝ իսկը մի բաժակ թունդ ժժոնկայի համար:

Ժամանակ չկորցնելով ու տղային լրիվ մոռանալով՝ սկսեցինք զբաղվել «գրոգի» պատրաստությամբ: Սկզբում բաժակից նոր չիֆիրբակ սարքեցինք: Լաթերը շերտ առ շերտ պատռեցինք ու ձգեցինք բաժակի շուրջն ու նրա լայնքով այնպես, որ բաժակն անմիջապես կաթսայի վերածվեց: Կողիկը վառելիք ճարեց: Որպես այդպիսին ծառայում էին չոր լաթերը: Դրանք խողովա-

կաձև փաթաթում էինք ու վառում: Այս յուրօրինակ պրիմուսի միակ անհարմարությունն այն էր, որ անընդհատ ստիպված էինք լինում վառվող լաթից պոկել այրուքը, ու մկրատ չունենալու պատճառով ստիպված էինք լինում դա անել մատներով, և միշտ չէ, որ այդ պրոցեսն անցավ էր անցնում, այնպես որ մեր մատների ծայրերը միշտ ածխացած էին լինում:

Էդիկը՝ որպես ժժոնկայի մեծ մասնագետ, ստանձնել էր այն որակով պատրաստելու պատասխանատվությունը և հետևում էր շաքարի հալման գործընթացին: Ես մոտեցա նրան, նայեցի բաժակի մեջ: Շաքարը հալվել էր ու արդեն սկսում էր եռալ: Խցում յուրահատուկ հոտ էր տարածվել: Հանկարծ Էդիկը ճանկեց չիֆիրբակը, վազեց ծորակի մոտ ու մտցրեց ջրի շիֆի տակ: Բաժակը թշշաց, գոլորշին քուլա-քուլա վեր բարձրացավ: Էդիկը չիֆիրբակը նորից կախեց ամենաձայրի մահճակալից, մոռացել էի ասել այն տեղի մասին, որտեղ նա կատարում էր իր մանիպուլյացիաները (ներողություն եմ խնդրում), ու կրկին անցավ այն եռացնելու գործին:

Մենք նստած էինք մահճակալին նույն դիրքով, ինչ առավոտյան: Երիտասարդը, որ մեզ ապահովել էր շաքարով, ժժոնկան վայելելու մեր հրավերին մերժողաբար պատասխանեց: Իր գործն է. չի ուզում՝ չի ուզում:

Պահը, երբ չիֆիրբակից ժժոնկայով լցված բաժակը շրջան մտավ, համընկավ տոնական հրավառության առաջին համազարկին: Մենք տեսնում էինք միայն բազմերանգ ցուլքեր, որոնք մի ակնթարթ գունավորում էին պատուհանի *բայանաճաղերի* միջից մեզ երևացող սև երկնքի բարակ շերտերը: Բոլորը սկսեցին իրար շնորհավորել, մաղթել այն, ինչ սովոր էին մաղթել միայն ազատության մեջ, միայն մաղթանքների վերջում լրացում էր արվում. «Տա Աստված՝ վերջին անգամ»: Նկատի ունեին, որ վերջին Նոր տարին լինի անազատության մեջ: Բայց դեռ քանի՞ տարի վերջինը չեղավ...

Մենք մինչև հատակը խմեցինք ժժոնկան ու իրար հետ կարճ ֆրազներ էինք փոխանակում: Ինչ-որ մեկը խոսք գցեց փակ վագոնների մասին: Կովիկը բռնեց թեմայի ծայրից ու սկսեց պատ-


մեկ այն մասին, թե ինչպես էին իրեն վաթսունականներին փակ վագոնով զոնից քշել Ջլատոուստ: Մենք լուռ լսում էինք, իսկ նա, ամբողջովին տարված, հիշում էր իր կենսագրության այդ դրվագի բոլոր մանրամասները: Այդպես, զրույցով ընկած՝ չնկատեցինք էլ՝ ինչպես անցավ Նոր տարվա գիշերը:

Միջանցքում սովորական առավոտյան աղմուկ էր: Բալանդյորները զնգզնգացնում էին փոքրիկ բաքերը: Կոլիկը լռեց, հետո վեր կացավ տեղից ու շարժվեց դեպի պարաշ: Ինչպես միշտ...





ՁԻՈՒԿՆԵՐ



Ավարտին էր մոտենում *օսուծդյոնկայում* գտնվելուս երրորդ շաբաթը: Այդ ժամանակ սատանան դրդեց ինձ լսել փաստաբանին ու վճռաբեկ զանգատ ուղարկել *օկրուգի* տրիբունալ: Որքան էլ տարօրինակ է, ես դեռևս հավատում էի միֆական արդարության հաղթանակին և առաջնորդվելով այդ հավատով՝ չզլացա տասը էջ թուղթ մրոտել, որոնց վրա երկարորեն ու տաղտկաբար ապացուցում էի իմ անմեղությունն այն բանում, ինչի համար դատապարտվել էի: Ահա արդեն երկու շաբաթ էր՝ դռան վրայի *բաքի* ամեն բացվելու հետ սպասում էի *սպեցի* երևալուն, ինչպես կսպասեի պահապան հրեշտակին, որն ինձ մի թուղթ կպարզեր՝ սևով սպիտակի վրա տպված, թե՛ գնա՛, թանկագի՛ն-հարազատ, գրողի ծոցը ու ների՛ր մեզ ու մեր անշնորհք ծառաներին քեզ պատճառած վնասի համար, և այլն, և այլն...

Ավարտվում էր տանջալից սպասման քսաներորդ օրը: Ընթրիքը վաղուց վերջացել էր: Մենք՝ տաստեղանոց պահածոյատուփի հինգ բնակիչներս, սպանում էինք այդ անպետք օրվա վերջին ժամերը՝ ով ինչպես կարող էր: Նիկոլայ Վասիլևիչը՝ *կոլխոզի* նախկին նախագահ ու շքանշանակիր, իսկ ներկայում՝ պետական ունեցվածքի առանձնապես խոշոր չափերի հափշտակիչ, ու Դոկտորը, անկեղծ ասած՝ մոռացա ինչ էր անումը, ուստի թույլ տվեք հետազայում էլ նրան անվանել ըստ իր մասնագիտական պատկանելության, զրուցում էին իրենք իրենցից՝

ծերունականից. երկուսն էլ վաթսունին մոտ էին: Նրանց երկխոսությունը մի գլուխ ընդհատվում էր ծանր հոգոցներով, տնքոցներով ու դադարներով: Ծերուկները, հատկապես նրանք, որ ավելի լավ օրեր են տեսել, շատ հիվանդագին են տանում անազատությունը: Բացառություն չէին նաև այս երկուսը:

Եվ խցի երիտասարդությունը՝ ձեր խոնարհ ծառան, Միշանյան, որ եկեղեցական գող էր, բայց մնացած ամեն ինչում՝ հրաշալի տղա, ու Ռուդիկը՝ Արտյոմովսկից մի գերմանացի, որն ինձ նման՝ ինտերնացիոնալիզմի ու զինվորական եղբայրության իսպառ բացակայություն էր դրսևորել: Նստած խոսում էինք դեսից-դենից: Միշանյան արդեն երկրորդ անգամ էր պատմում այն մասին, թե ինչպես է խորանը սրբելուց հետո, գողացածը եկեղեցու պատերից դուրս բերելիս, հանկարծ ծարավ զգացել: Ծարավը հագեցնելու համար Միշանյան ավելի լավ միջոց չի գտել, քան Քրիստոսի արյունը, այսինքն՝ այն կագոր գինին, որն օգտագործվել է հաղորդության ժամանակ: Միշանյան արդեն պատմելով հասել էր էն տեղին, երբ շշերով պարկն սկսում է իջեցնել պատուհանից, երբ նրա պատմությունն ընդհատվեց մեր ամրոցի բացվող դռան շոինդից:

Դուռը բացվեց, *պոպկարը* խուց հրեց մի նոր ուղևորի: Նրա դեմքը չէր երևում առջևում պահած ներքնակի պատճառով: Ոտքերով մի քանի վայրկյան տեղում դոփելուց հետո ուղևորը ներքնակը նետեց իր մոտի ազատ մահճակալին ու դեմքով դեպի մեզ շրջվելով՝ բարձր ձայնով ասաց.

– Здорово, мужики!..²⁸

Ես նրան անմիջապես ճանաչեցի: Ծանոթացել էինք դեռևս հետաքննվողների համար նախատեսված խցում: Վատը չէր տղան: Անուրը Վոլոդյա էր, բայց բոլորը նրան փոքրի տեղ էին դնում ու Վովոչկա էին կանչում:

Ըստ երևույթին Վովոչկան էլ ինձ ճանաչեց, որովհետև, երբ ես շարժվեցի դեպի նա, ինքն էլ ընդառաջ եկավ: Իրար ձեռք սեղմեցինք:

– Ինչքա՞ն, – հարցրեցի:

²⁸ – Ողջո՛ւյն, մոժիկներ:

– Չորս...– հոգոց հանեց նա ու հայացքը ցած գցեց:

– Плюнь, все пройдет²⁹,– արտաբերեցի բոլորին հոգնեցրած ֆրազը,– ծխի’...

Վովոչկան իրեն մեկնածա «Պրիմայի» տուփից մի ծխախոտ հանեց, ես հետևեցի նրա օրինակին...

Նստել ու լուռ ծխում էինք: Ծերուկները շարունակում էին գրուցել: Միշանյան կազորի պատմությունը վերջացրեց ու սկսեց պատմել առաջին կնոջ մասին: Վովոչկան անսպասելիորեն ձայնեց.

– Էս դուք ինչ է՝ «ձիուկ» չեք գցո՞ւմ: Ո՞վ կա ձեր ներքևում...– նա ցույց տվեց հատակը:

– Հազարից մեկ: Ներքևում *չուվեր* են:

– Թեկ ունե՞ք,– աշխուժացավ Վովոչկան:

Նա ասես միանգամից մոռացավ, թե ինչպես ժամ-ժամուկես առաջ դատավորի արտասանած մի քանի բառը խաչ քաշեց իր կյանքի վրա՝ ամենահետաքրքիր տեղում: Վովոչկան այդ ժամանակ ընդամենը քսաներկու տարեկան էր: Ես զարմացած նայում էի նրան, բայց ոչինչ չհասցրեցի ասել: Իմ փոխարեն ձայն տվեց Նիկոլայ Վասիլևիչը.

– Տե՛ս, է՛, ինչ կայտառն է: Դեռ ուշքի չեկած՝ արդեն ուզում է «ձիուկ» գցել: Դու արի նախ խրճիթիդ հետ ծանոթացիր, հետո նոր «ձիուկներով» խաղա:

– Սա, Վովոչկա, մեր *պախանն* է, Նիկոլայ՝ Վասիլևիչը,– կատակով ներկայացրի ծերուկին:

Նիկոլայ Վասիլևիչը, երևում է, լավ զգաց իր անձի այդպիսի բնութագրումից, քանի որ բարեսրտորեն ժպտալով՝ ձեռքը պարզեց Վովոչկային: Նախկին նախագահողի հետ ծանոթանալուց հետո Վովոչկան սկսեց խցով մեկ շրջել ու ներկայանալ.

– Վլադիմիր, Վլադիմիր...

Ծանոթության ծեսն ավարտելով՝ հանկարծ կուչ եկավ, խոր շունչ քաշեց ու հազիվհազ մոտեցավ իր մահճակալին: Այլևս ոչ մի ֆրազ չարտաբերելով՝ Վովոչկան շտկեց ներքնակը, գցեց անկողինը, հետո «հեռուստացույցի» վրա դրեց ուտելիքի պաշարով

²⁹ – Թքի՛, ամեն ինչ կանցնի:

ցելոֆանե տոպրակն ու այդպես լուռ էլ վազեց *սարսաշ*: Վերջապես, կենցաղային հարցերն ավարտելով՝ քքի տակ «բարի գիշեր» մրթմրթաց բոլորին, բարձրացավ մահճակալին ու, ինչպես մեզ թվաց, անմիջապես քուն մտավ:

Միջանցքից հասան պոպկարների ձայները. տասը թուպեից՝ *օլթոյ*: Մենք էլ սկսեցինք պատրաստվել դրան: Վերջապես «աքաղաղը» (այդպես էին անվանում բարձրախոսը) վեց ազդանշան արձակեց, ու հաղորդավարուհին հայտարարեց, որ Մոսկվայում ժամը 22-ն է:

– День прошел³⁰, – արտասանեցի դեռ բանակային տարիներից հոգնեցրած ֆրազը:

– Ну и хер с ним!³¹ – միասին արձագանքեցին Միշանյան ու Ռուդիկը:

Լռությամբ տիրեց: Սարսափելի երկար ձգվող լռություն, որի ժամանակ բոլորն իրենց տրամադրում էին քնելու, բայց ապարդյուն: Սովորաբար անցնում էր մի քսան թուպե, հետո Միշանյան սկսում էր մի դրվագ պատմել իր հարուստ կենսագրությունից, և միայն նրա բառերի տակտի հետ, ասես օրորոցայինի տակ, քունը հերթով հաղթում էր բոլորիս: Այդպես եղավ նաև այդ գիշեր: Վերջինը, իր ասելով, ինքն էր քնել՝ պատմողը, կեսգիշերն անց:

Գիշերն այնքան էլ բարեհաջող չանցավ: Վովոչկան, ըստ երևույթին, դեռ նախորդ օրվա իրադարձությունների տպավորության տակ էր՝ դատարան, դատավճիռ, *վորոնոկ* և այլն, դրա համար էլ, դեռ լույսը չբացված, վայրի ճիչով ցած գլորվեց մահճակալից: Լավ էր գոնե, որ նրա խելքին հասել էր վայրէջք կատարել նախ ոտքերի վրա, հետո միայն՝ մնացածի: Ամբողջ խուցն արթնացավ ու սկսեց Վովոչկային ուշքի բերել: Սրբիչը պահվեց ծորակի տակ, հետո արդեն թաց՝ փաթաթվեց Վովոչկայի գլխին: Երբ համոզվեցինք, որ վայր ընկնելն առանց ծանր հետևանքների էր անցել, եթե չհաշվենք մի քանի կապտուկները, գնացինք պառկելու, որ գուր չկորչի լուսաբացին նախորդող այն ժամանակահատվածը, երբ քունն առանձնահատուկ քաղցր է լինում:

³⁰ – *Օրն անցավ*:

³¹ գոչկ. մոտավորապես՝ – *Գրողի ծոցը*:

Օրն սկսվեց սովորականի մման: Սկզբում նախաճաշ, հետո ստուգում: Կես ժամ էլ չէր անցել ստուգումից՝ մեզ տարան զբոսանքի: Ճիշտ է՝ զբոսանքն այդ օրը մեզ բավականություն չպատճառեց. առավոտից սկսել էր անձրև մաղել, ու երբ մտանք զբոսաբակ, անձրևն, ասես քննչական մեկուսարանի աղմինիստրացիայի պատվերով, սկսեց դույլերով թափվել:

Զբոսանքից վերադառնալով՝ մենք նախ չորացնելու փռեցինք մեր ջերմաշապիկները, ապա մեր մշտական կվարտետով՝ ես, Միշանյան, Ռուդիկն ու Նիկոլայ Վասիլևիչը, նստեցինք պոկերի: Ճիշտ է՝ մեր խաղը փոքր-ինչ տարբերվում էր նրանից, որ խաղում են Մոնտե Կառլոյի կամ Օսթենդեի խաղատներում: Նախ՝ խաղում էինք ոչ թե փողի, այլ գետնից ձգում անելու վրա (Նիկոլայ Վասիլևիչին թույլատրված էր չվճարել տարիքի, նաև ձախ ձեռքի դաստակի բացակայության պատճառով), հետո՝ մենք խաղում էինք ոչ թե խաղաքարտերով, այլ դոմինոյի քարերով: Հուսով եմ՝ ոչ ոք ինձնից չի նեղանա, եթե չնկարագրեմ այդ անկասկած հետաքրքիր խաղի կանոնները, միևնույն է՝ ազատության մեջ համարյա ոչ ոք այն չի խաղում, իսկ անազատության մեջ, թշնամուս չեմ ցանկանա, որ հայտնվի այնտեղ, այն կարելի է շատ արագ սովորել՝ ժամանակը սպանելու համար:

Եվ այսպես, չորսով նստեցինք պոկերի: Դոկտորը, մահճակալին պառկած, ինչ-որ գիրք էր թերթում, ու մեր նեղ զննանի բնակիչներից միայն մեկը, դուք արդեն կռահեցիք, թե ով, դե իհարկե, Վովոչկան, ոչ մի կերպ իր տեղը չէր գտնում: Նա թրև էր գալիս խցում ու անընդհատ շեղում էր մեզ խաղից կամ խոր հոգոցներով, կամ էլ բոլորովին անիմաստ հարցերով: Մեծ մասամբ դրանց ստիպված էի պատասխանել ես՝ հին ծանոթության պատճառով, այնպես որ ես ամբողջ ժամանակ շեղվում էի, ու քանի որ առանձնապես փայլուն չէի էլ խաղում, հայտնվեցի չորրորդ տեղում: Մոռացա մի երկու խոսք ասել խաղադրույքների մասին: Ուրեմն այսպես. առավելագույն միավոր հավաքածը նստում ու «վայելում էր», թե ինչպես են ձգվում մյուսները, երկրորդ տեղը պետք է երեսուն ձգում աներ, երրորդը՝ քառասուն, դե իսկ չորրորդ տեղին սպասում էր ԱՄՆ բանակի մինիմումը՝ հիսուն ձգում:

Ես սպասում էի, մինչև տղերքը վճարեն իրենց պատվո պարտքը: Նիկոլայ Վասիլևիչն այս անգամ առաջին տեղում էր, լիիրավ «վայելում էր»: Բանտային կյանքն այդ ժամանակ դեռ չէր հասցրել այդքան կործանարար ազդեցություն ունենալ իմ օրգանիզմի վրա, ու վերջին քսան ձգումը ես կատարեցի չեղեն-տանոյավարի, այսինքն՝ ծափերով, ինչպես «Կամակոր տղա-մարդու սանձահարումը» ֆիլմում:

Իմ ծափերը բուռն, երկարատև ծափահարություններ առաջ բերեցին մեզ մոտ, իսկ ներքևից՝ դժգոհ թակոց հատակին:

– Դու հանդգնեցիր խախտել մեր տիկլինների անդորրը, – մտածկոտ խոսեց Նիկոլայ Վասիլևիչը:

Վեր կացա տեղիցս, ու ավերս իրար շփելով մոտենում էի սեղանին՝ խաղը շարունակելու, բայց ճանապարհս կտրեց Վովոչկան, որ դեմքի մտահոգ արտահայտությամբ ինչ-որ բան էր փնտրում առաստաղին: Կանգ առա, հարցական նայեցի նրան.

– Ի՞նչ է, Վովոչկա:

Նա սկսեց շատ դիվանագիտորեն. իբր՝ լավ չեղավ, անհանգստացրինք կանանց, նրանց օրգանիզմում ինչ-որ բան խախտված կլինի և այլն, և այլն: Ու վերջում ավելացրեց, որ վատ չէր լինի օգտվել առիթից ու ծանոթանալ, լավ է՝ «ծիուկն» էլ արդեն գլուխ է բերել, ու որպես ապացույց՝ Վովոչկան ինձ ցույց տվեց թելը վրան փաթաթած ստվարաթղթի մի կտոր: Թելի ծայրին նա նույնիսկ սուզագնդիկ էր հարմարեցրել՝ մետաղական մի կոճակ: Ես մինչև վերջ շատ ուշադիր լսեցի նրա մեմախոսությունը, և երբ նա լռեց, հարցրեցի.

– Այդ ամենն, իհարկե, լավ է, բայց ինձնից, ինձնից ի՞նչ ես ուզում: Թիկունքդ պահե՞լ՝ խնդրեմ, կարող էիր հենց սկզբից ասել...

Բայց Վովոչկան հայտարարեց, թե թիկնագործի կարիք չունի, իր խնդիրն այն է, որ չգիտի քնքուշ մամակներ գրել, դե, չի ստացվում ու վերջ:

– Էնպես որ, օգնի՛ր, հա՞, – թախանձագին նայելով աչքերիս՝ ասաց ու ավելացրեց. – դու, ոնց էլ չլինի, իմստիտուտում ես սովորել, իսկ ես՝ մինչև ութերորդ դասարան, էն էլ հազիվ...

Սկսեցի նրան մատչելի բացատրել, որ պոլիտեխնիկում եմ սովորել, ոչ թե համալսարանի բանասիրականում, բայց Վովոչկայի հավատն անգամ թերի բարձրագույն կրթության ուժի հանդեպ սասանելու ոչ մի հնար չկար:

– Լսի՛ր, դու ավելի լավ է՝ Նիկոլայ Վասիլևիչին խնդրիր, նա երկու լրիվ ինստիտուտ է վերջացրել՝ գյուղատնտեսական ու մարքսիզմ-լենինիզմի:

Վովոչկան, իհարկե, թքած ուներ ինչպես մարքսիզմի, այնպես էլ լենինիզմի վրա, բայց երկու ինստիտուտների հիշատակումը գրգռեց նրա հետաքրքրասիրությունը: Տեսնելով, որ նա այնուամենայնիվ տատանվում է, ինքս դիմեցի երբեմնի նախագահին.

– Թանկագին՝ Նիկոլայ Վասիլևիչ, բարի՛ եղեք, օգնե՛ք երիտասարդին: Հիշե՛ք Ձեր երիտասարդ տարիները...

Ինչպես ինձ հետո թվաց, Նիկոլայ Վասիլևիչը հենց դրան էլ սպասում էր, որ իրեն խնդրեն այդպիսի ռոմանտիկ ծառայության համար: Հետագայում էլ ինձ հանդիպել են այդպիսի ծերուկներ, որոնց հաց չտաս, ընդամենը մի բաժակ սուրճ հյուրասիրես, սիրելիիդ ուղղված այնպիսի մամակ կհորինեն, որ եթե նույնիսկ այդ սիրելին մաքուր չուգունից էլ լինի, միևնույն է՝ կհալվի:

Նիկոլայ Վասիլևիչն ասես միանգամից տասը տարով ջահելացավ՝ այդուհանդերձ չկորցնելով իրեն այնքան բնորոշ մեծալըջությունը: Նա հանդիսավորապես խոնարհեց գլուխն ի նշան համաձայնության և բառերի արանքում բազմիմաստ ընդմիջումներ տալով՝ ասաց.

– Ես համաձայն եմ միջնորդ լինել այս նրբին միջոցառման մեջ... Բայց ես համապատասխան պայմաններ եմ պահանջում:

Նա նայեց Միշանյային ու Ռոտիկին: Սրանք հասկանալով, որ նրան սեղան է պետք, սինքրոն հոգոց հանեցին, հետո նույնքան սինքրոն վեր կացան ու գնացին դեպի իրենց մահճակալները: Ես նույնպես հետևեցի նրանց օրինակին և Դիքենսի հատորն առնելով (ինչ-ինչ, բայց գրականությամբ մեզ վատ չէին ապահովում, ինչո՞ւ գուր տեղը ստեմ)՝ ոտքերս քարշ տվեցի դեպի մահիճս:

Իսկ սեղանի շուրջ մի ամբողջ ներկայացում սկսեց ծավալվել: Վովոչկան պտտվում էր Նիկոլայ Վասիլևիչի շուրջը՝ բեղմնավոր գործունեության պայմաններ ստեղծելով նրա համար: Գրելու մաքուր թուղթ հանեց նրա համար, տակը ստվարաթուղթ դրեց, որ հարմար լինի աշխատելը: Իր «օժիտը» քրքրելով՝ գտավ ու սեղանին դրեց մի մատիտի մնացուկ՝ գրելու համար բավական պիտանի: Այդ ամենն անելուց հետո նա իր հուսառատ ու միաժամանակ հիացական հայացքն ուղղեց Նիկոլայ Վասիլևիչին:

Նիկոլայ Վասիլևիչը նստած էր իմաստուն մետրի կեցվածքով ու մատիտի ծայրով քորում էր կզակը: Մտածում էր: Մտածում էր բավական երկար, և երբ Վովոչկան սկսեց անհամբերության ակնհայտ նշաններ ցույց տալ՝ տեղում ավելի ու ավելի անհանգիստ շարժումներ անելով, վերջապես անցավ շարադրելուն:

Այդ գործընթացը նրանից խլեց մոտ կես ժամ, բայց դուք միայն պատկերացրեք՝ ինչ տանջանք կրեց Վովոչկան այդ ժամանակահատվածում: Թեև խմբագրելու համար իրեն հանձնված *քսիվից* ստացած հիացմունքը փոխհատուցեց ողջ տառապանքը: Գերագույն բավականություն էր նայելը, թե ինչպես է տեքստն ընկալվելուն զուգընթաց աստիճանաբար պայծառանում նրա դեմքը: Մինչև վերջ կարդալուց հետո Վովոչկան Նիկոլայ Վասիլևիչի կողմն ուղղեց հիացմունքով ու երախտագիտությամբ լի հայացքը և սկսեց «իմ թանկագին...», «Դուք ինքներդ էլ չգիտեք...», «ես Ձեզ համար պատրաստ եմ...» ու այդ ոգով այլ բաներ մոթմոթալ: Նիկոլայ Վասիլևիչը բարեհաճորեն ընդունեց երախտագիտության ու ոգևորության այդ բոլոր արտահայտություններն ու երջանիկ Վովոչկայի ուսին թփթփացնելով, թե՛ դեհ, գործի՝ անցիր, ոտքերը քստքստացնելով մոտեցավ իր մահճակալին:

Վովոչկան սպասել չտվեց: Երեք անգամ հատակին տկտկացնելով ու սպասելով, մինչև ներքևից պատասխան միակ թակոցը հնչի, նա հայացք նետեց դռան դիտանցքին ու համոզվելով, որ ամեն ինչ կարգին է, արագ մոտեցավ պատուհանին ու բայանաճաղերից նախ դուրս հանեց սուզագնդիկը, հետո քսիվը: Այդ պրոցեդուրայից հետո Վովոչկան թելն ավելի շատ բաց թողեց ու, սե-

դանի մոտ մատելով, տեսք ընդունելով՝ իբր խորասուզված է սեղանին դրված գրքի մեջ, թելն սկսեց կամաց-կամաց իջեցնել: Հանկարծ նրա դեմքին հայտնվեց մի արտահայտություն, ինչպիսին ունենում է ձկնորսը, երբ զգում է կտցելը: Նա էլի իջեցրեց թելն ու սպասեց: Վերջապես ներքևից կրկնակի թակոց լսվեց, որ նշանակում էր՝ «նժույզը» ժամանել է նշանակված վայր: Վովոչկան թելը կապեց սեղանի ոտքից, վեր կացավ, գնաց դեպի իր մահճակալը: Նրա համար տանջալից սպասման մի նոր փուլ սկսվեց:

Սպասումը բավական երկար տևեց: Արդեն հասցրել էինք ճաշել ու նորից մատել էինք պոկեր խաղալու, երբ ներքևից երեք անգամ թակեցին՝ մեզ, ավելի ճիշտ՝ Վովոչկային հայտնելով, որ «ձիուկը» պատրաստ է վեր քաշելու համար: Վովոչկան խայքովածի պես մահճակալից ցած թռավ, վազեց դեպի պատուհանը՝ նույնիսկ դռանը չնայելով: Այդ ժամանակ խցում զբոսնող Դոկտորը գլուխը թափահարեց ու կանգնեց դռան դիտանցքի առաջ՝ պոպկարներից, եթե հայտնվեին, ծածկելով խցի տեսադաշտը: Այդ ընթացքում Վովոչկան ջերմեռանդորեն վեր էր քաշում թելը, ասես վախենալով, որ քսիվը ձկան մնան կարող է պոկվել կարթից: Մենք այդ ժամանակ շարունակում էինք շխշխկացնել քարերով, ու Վովոչկայի «օհո՜»-ն էր, որ կտրեց մեզ խաղից: Այդ «օհոյից» հետաքրքրված՝ նայեցինք լուսամուտի կողմը: Մեր աչքի առաջ Վովոչկան էր՝ իր «ձիուկով», որի ծայրին ոչ թե մեկ, այլ միանգամից չորս քսիվ էր կախած: Ջարմացական հայացքներ փոխանակելով ու նկատելով, որ միայն Նիկոլայ Վասիլևիչն է քթի տակ ժպտում, շարունակեցինք մեր խաղը: Այդ ընթացքում Վովոչկան մտավ իր անկողինն ու սկսեց ուսումնասիրել նամակագրությունը: Նա բացեց քսիվներից մեկն ու ընկղմվեց ընթերցանության մեջ, իսկ մյուսները մի կողմ դրեց:

Մենք վերջացրինք խաղը: Ես նորից վերջին տեղում հայտնվեցի: Չգում վարժություններից հետո, որոնք անցան նույն հաջորդականությամբ, ինչ նախորդ անգամները, այսինքն՝ ես իմ նորման կատարեցի ամենավերջում՝ շարքը եզրափակելով պարտադիր ծափերով, ուզում էինք շարունակել խաղը, բայց Վովոչկան մեզ կանգնեցրեց:

– Ստո՛ւյ, մութիկներ, էստեղ դուք քսիվներ ունեք: Եկե՛ք ստացե՛ք ու ստորագրեք...

Նա առանց մահճակալից իջնելու սկսեց բաժանել փոստը: Երբ ստացա իմ քսիվը, զարմացա՝ վրան կարդալով իմ անունը: Իմ հարցական հայացքին Վովոչկան հետևյալ բացատրությունը տվեց:

Պարզվում է՝ Նիկոլայ Վասիլևիչը ներքևի հարկում գտնվող հարեմ ուղերձ գրելու մեջ մեր զապորոժցուն օգնելիս ոչ միայն Վովոչկայի մասին է հրաշալի բնութագիր տվել, այլև մյուս բոլորի՝ բացառությամբ իր ու Դոկտորի: Չգիտեմ՝ ինչպես են իմ բախտակից ընկերների՝ վերևից ստացված բնութագրերին արձագանքել մյուս թղթակցուհիները, բայց որպեսզի դուք կարողանաք պատկերացնել իմ նորահայտ ընկերուհու արձագանքը, մի քանի դրվագ կներկայացնեմ նրա քսիվից.

«...Ինչ լավ է, որ դու հայ ես: Շատ եմ սիրում հայերին: Նույնիսկ ազատության մեջ երկուսին ճանաչում էի: Կարծեմ, երկուսն էլ Երևանից էին... Դու ձգում-վարժանք արա ինչքան ուզես, սիրելի՛ս, մենք էլ չենք թակի առաստաղը... Ասում են՝ ում բախտը խաղի մեջ չի բերում, բերում է սիրո մեջ: Կարծես, ես արդեն սկսում եմ քեզ մի քիչ սիրել: Ինչքան կարող ես, շատ գրիր քո մասին, խնդրում եմ: Ինչպիսի՞ն ես դու: Նկատի ունեմ արտաքինը: Իմ կարծիքով դու հոգով շատ բարի ես...», և այլն, նույն ոճով, իսկ հետո նա տվել էր իր մանրամասն նկարագրությունը, որից դեմքս կաս-կարմիր կապեց՝ դե դրանից բխող մյուս հետևանքներն էլ հետը: Այդ նկարագրությունը գետեղում եմ ստորև, այնպես որ, թե ինչպիսին էին այդ հետևանքները, առաջարկում եմ կռահել ընթերցողին. «Ես շիկահեր եմ, մաշկս սպիտակ է, թավշյա, աչքերս՝ երկնագույն, բայց թվում է, թե կապույտ են, բերանս մեծ չէ, բայց փոքր էլ չէ, շրթունքներս՝ ուռած, բայց այնպես էլ չէ, որ շատ: Հասակս 172 սմ է, քաշս՝ 57 կգ, կրծքիս շրջագիծը՝ 92 սմ, կոնքերինս՝ 90, գոտկատեղինս՝ 50, ոտքերս, իմիջիպալոց, երկար են ու փռոտ չեն, ինչպես ոմանցը...»: Ա՛յ այս ոտքերն էլ վերջնականապես ինձ ջախջախեցին: Եթե Ժենյան չէր ստում: Ի դեպ, մոռացա ավելի վաղ հայտնել ձեզ, որ իմ մամակագրուհու անունը Ժենյա

էր՝ ի լրումն իր մյուս բոլոր արժանիքների: Այսպես ուրեմն, եթե Ժենյան չէր փչում, վկայակոչելով իր հմայքների նկարագրության մեջ բերված տվյալները, որոնք առնվազն աշխարհի գեղեցկուհու տվյալներ են, որոնց մասին գիտեի դեռևս անազատությունից առաջ կարդացածս ինչ-որ ամսագրից, ապա իմ պատասխանին, ինչպես «ամռան տխրակին» (ի դեպ՝ սա մույնպես նրա նամակից է) սպասում էր եթե ոչ ինքը՝ սիրո աստվածուհին, ապա հաստատ վերջինիս քրմուհիներից մեկը:

Դե ես, ինչպես ինքներդ եք հասկանում, փորձեցի սևերես դուրս չգալ: Իմ ուղերձը լի էր իմ մասին հսկայական տեղեկությունքամբ, ես չէի զլացել նշել իմ բոլոր չափերը, որոնք, անկասկած, հիշատակված էին այն ժամանակ իմ անձնական գործում, բավական մանրամասն նկարագրել էի իմ ողիսականը, որ սկսվել էր անցյալ տարվա գարնան վերջին օրը, Երևանի հավաքակալանից ու ժամանակավորապես կանգ առել այս աշնանը՝ օսուժյոյնկայում: Բավական տեղ էր հատկացվել նաև հուսառատ խոսքերին. որ նա՝ ասես թարմ գեփյուռ, նոր էջ է բացում իմ կյանքում, որ իմ երագածն ընդամենը դրախտն է մի փոքրիկ հյուղակում նրա հետ միասին՝ անգամ «մինչև մահ ու գերեզմանում»: Դե, իհարկե, այն պարունակում էր նաև նրա բոլոր հմայքներին ուղղված հաճոյախոսությունների մի ամբողջ հեղեղ: Մի խոսքով, քսիվը մակարդակով ստացվեց: Նամակը վերընթերցելուց հետո ներքին աչքերիս առաջ մույնիսկ հովվերգական մի պատկեր հառնեց. Ժենյան, կարդացածից ցնցված, ինչ-որ տեղից ինչ-որ երկաթի կտոր ճարած, արդեն իր խցի առաստաղն է քանդում՝ ջարդուփշուր անելու համար այն միակ անջրպետը, որ բաժանում է նրան իր սիրելիից: Ինչ վերաբերում է թակոցին, ապա այն իրոք կարճ ընդհատումներով լսվում էր ներքևից: Ըստ երևույթին, երկար սպասումը հոգնատանջ էր արել մեր տիկնանց, և նրանք որոշել էին հիշեցնել իրենց մասին: Տղաները, պարզվեց, այնքան պերճախոս չէին եղել, որքան ես: Վովոչկան առհասարակ մատը մատին չէր խփել, նրա համար ամեն ինչ արագ ու որակով շարադրել էր Նիկոլայ Վասիլևիչը (թղթի վրա տեղի ունեցող մեր սիրային եռուզեռը շատ էր շարժել

ծերուկի հետաքրքրասիրությունը, և նա նույնպես որոշել էր մասնակցել դրան): Մի խոսքով, «նժույզն» արդեն պատրաստ էր, պակասում էր միայն իմ քսիվը: Ես խնամքով ծալեցի երկու կողմն էլ գրոտած թուղթն ու հանձնեցի Վովոչկային, որ ուղարկի: Նա անմիջապես «ծիուկը» համալրեց և երեք անգամ հատակը թակելով՝ ձեռնամուխ եղավ իջեցման գործողությանը: Շուտով ներքևից իմաց տվեցին, որ «նժույզը» ժամանել է նախանշված վայր:

Այժմ տանջվում էր ոչ միայն Վովոչկան: Չորս սիրտ՝ խոցված Ամուրի նետերից մի վայրում, որտեղ նրանք այդ նետերից ամենապաշտպանվածն են, համաձայնեք՝ չէ՞ որ սիրտ համար բանտի պատերից լավ բարիկադներ չկան, այսպես ուրեմն, այդ չորս սրտերն իրենց տեղը չէին գտնում խցի նեղ տարածության մեջ: Մենք չգիտեինք ինչով զբաղվել պատասխաններին սպասելիս: Փորձեցինք պոկեր խաղալ, բայց խաղը չէր ստացվում: Մութն արդեն ընկել էր, բայց ներքևից երկար սպասված թակոցը դեռ ուշանում էր: Ընթրիքից հետո ես հենց այնպես, առանց պարտվելու, որոշեցի մի քիչ մարզանք անել: Այս անգամ մի այնպիսի անվեհերությամբ էի մարզվում, որ աղջիկների խցում, հավանաբար, ծեփը թափվում էր: Դեռ չէի հասցրել շունչ քաշել իմ օլիմպիական զվարճանքներից, երբ ներքևից լավեց երկար սպասված թակոցը:

Վովոչկան խայթվածի պես սուրաց դեպի պատուհանը ու սկսեց եռանդով թելը վեր քաշել: Մենք շունչներս պահած հետևում էինք նրան, և որքան մեծ էր մեր հիասթափությունը, երբ քսիվից հետո երևաց ոչ թե հաջորդ գրությունը, այլ Վովոչկայի կոճակը: Չորս գույզ աչքեր ուշադիր մայում էին Վովոչկայի մատների մեջ բացվող քսիվին՝ հավանաբար ոչ պակաս սրտի դողով, քան բանկիրի ձեռքին եղած խաղաքարտերին կնայեր վերջին գրոշները կոնին դրած խաղացողը: Վերջապես քսիվը բացվեց: Ահա թե ինչ էր գրված այնտեղ. «Տղաներ: Դուք այստեղ նշել եք ձեր բոլոր չափերը, բացի ամենակարևորից: Հավանաբար դուք էդտեղ հպարտանալու բան չունեք: Էնպես որ եկեք մամակագրությունը հետաձգենք ավելի լավ ժամանակներ, երբ

ձեզ վրա էդտեղ ինչ-որ բան աճի: Իսկ դո՛ւ, գորիլա, հերիք է հատակը ...ես: Ամբողջ առաստաղը քո պատճառով ցնցվում է (էդ ինձ էին ասում, լրբերը...): Դե վերջ, ՉԱՌ»:

Մի ինչ-որ ժամանակահատված խցում համր լռություն տիրեց: Համաձայնե՞ք՝ *մանթրաշի* համար ծանրակշիռ հիմքեր կային: *Գրոգի* վիճակից առաջինը դուրս եկավ Միշանյան: Իր ապրած քսաներեք տարում հասցրած լինելով երկու անգամ ամուսնանալ և այդքան անգամ էլ բաժանվել, նա կանանց կողմից ժամանակ առ ժամանակ մեզ համար ստեղծվող անհարմարություններին փիլիսոփայորեն նայելու ունակություն էր ձեռք բերել: Նա չփորձեց մեկնաբանել քսիվի բովանդակությունը, այլ ուղղակի ու ամբողջ հոգով սկսեց հռչակալ: Շուտով նաև մենք միացանք նրան՝ փորձելով հռչակոցի օգնությամբ ինքներս մեզ հանել անհարմար վիճակից: Նիկոլայ Վասիլևիչն, ինչպես նկատեցինք, շատ էր ուզում իմանալ քսիվի բովանդակությունը, ու մենք չփորձեցինք խոչընդոտել նրան՝ բավարարելու իր հետաքրքրասիրությունը: Ընթերցելով ու վերընթերցելով չարաբաստիկ թղթի պատառիկը, նա այնպես ուրախ քրքջաց, որ մենք անգամ սկսեցինք նախանձել իրեն՝ իր վրա թափված բոլոր դժբախտություններից հետո այդպես ուրախանալու կարողության համար: Իսկ Նիկոլայ Վասիլևիչը շարունակում էր քրքջալ ու ասել. «Տե՛ս, է՛, ձիուկներ է գցում, է՛» ու էլի բաներ՝ այդ նույն ոճով: Երբ բոլորիս համակած ուրախության բռնկումն սկսեց փոքր-ինչ մարել, Վովոչկան փորձ արեց վանդակաճաղի միջով հայիոյել աղջիկներին, բայց մենք ժամանակին կանգնեցրինք նրան՝ փաստարկելով, որ չուվերը չարժեն, որ նրանց հետ այդպես շփվելով ցածրացնի իրեն, և որ, առհասարակ, ավելի լավ կլինի, եթե պոկեր խաղալ սովորի:

Իմ նկարագրած դեպքերից հիմզ օր էր անցել: Օրերն անցնում էին նույնքան դատարկ ու տաղտկալի, որքան մեր խմբում Վովոչկայի հայտնվելուց առաջ: Նա պարապությունից սովորեց պոկեր խաղալ, ու հիմա նրա ամբողջ օրը լցված էր կամ խաղով, կամ ձգում վարժություններով, կամ էլ այս երկու գործողություն-

ների միջև ընկած ընդմիջումներով: Հիմա մեզ նյարդայնացնող նոր գործոն էր ի հայտ եկել: Բանտի ադմինիստրացիան վիթխարի նորոգում էր սկսել, և միջանցքից ու հարևան խցից մեզ բաժանող պատի հետևից մշտապես աղմուկ էր լսվում: Սկզբում այդ տաղտկալի նվագակցությունը շատ էր ազդում մեր նյարդերի վրա, բայց, ինչպես և մնացյալ ամեն ինչին, սրան էլ արագ հարմարվեցինք:

Այն օրը, որի մասին խոսում եմ, սովորականի նման ժամանակ էինք սպանում պոկերով՝ սպասելով ընթրիքին: Ավելի ճիշտ՝ խաղով զբաղված էին Նիկոլայ Վասիլևիչը, Վովոչկան, Միշանյան ու Ռուդիկը: Դոկտորն իր սովորության համաձայն գիրքը ձեռքին ընկողմանել էր մահճակալին, իսկ ես աննպատակ հետուառաջ էի անում խցում՝ սպասելով խաղալու իմ հերթին: Սեղանին տկտկացող քարերի տակտի մեջ միջանցքից եկող մի թակոց լսվեց: Անսպասելիորեն ականջս պատռ թակող երեք հստակ հարված որսաց: Ինչպես ինձ թվաց, ձայնը ներքևից էր գալիս: Ես դադարեցի քայլել ու ականջ դրեցի: Որոշ ժամանակ անց թակոցը կրկնվեց:

Այդ ժամանակ մոտեցա Վովոչկայի մահճակալին ու նրա բարձի տակից հանեցի «նժույզը»: Այն չարաբաստիկ երեկոյան, երբ մենք բոլորս ձեռառնոցիի զոհ դարձանք, Վովոչկան այն մտքեց իր բարձի տակ՝ մարդ ես, մեկ էլ տեսար պետք եկավ: Պոկերիստներն ուշադրություն չդարձրին ինձ վրա, ու իջեցման օպերացիան ստիպված մենակ իրականացրի: Ասեմք, նրանց օգնության կարիքն էլ չառաջացավ: Սպասելով թակոցին, որը հաստատեց, թե «նժույզը» ժամանել է ըստ նախանշանակման, թելն ամրացրի ճաղին ու լուսամուտից հեռացա: Բայց ստիպված չեղա երկար սպասել: Շուտով ներքևից նշան տվեցին, թե փոստը կարելի է բարձրացնել: Նայելով դիտանցքին՝ արագ մոտեցա լուսամուտին ու սկսեցի թելը եռանդագին վեր բարձրացնել: Տղաները, որ արդեն ավարտել էին խաղը, պարտքերն էին մարում Ձեզ արդեն հայտնի եղանակով: Միայն Նիկոլայ Վասիլևիչն էր սեղանի մոտ բազմած՝ իր հպարտ մենության մեջ, բայց նա նայում էր ոչ թե ձգում անողներին, այլ ինձ:

– Ի՞նչ է, նորից «ծիուկներ» ե՞ս գցում,– քնծիծաղեց նա՝ ձեռքիս տեսնելով սուզագնդիկին կապած քսիվը:

Տղաները նույնպես հետաքրքրվեցին այդ իրադարձությամբ ու հարցրին՝ ում է այն հասցեագրված: Թուղթը բացեցի ու դարձերեսին կարդացի իմ անունը:

– Ինձ են գրել,– զարմանքով մրթմրեցի ես:

Բոլորն անմիջապես ժպտացին ու սկսեցին ամենատարբեր ենթադրություններ անել այն պատճառների վերաբերյալ, որոնք նամակագրուհուս դրդել են հիշել իմ գոյության մասին:

Ես քայլեցի դեպի իմ մահճակալն ու նստելով ընկղմվեցի ընթերցանության մեջ: Իսկապես որ՝ Ժենյան էր գրում: Շատ ու շատ ներողություն էր խնդրում ինձնից մեր «սուրբ» զգացմունքների նկատմամբ իրենց թույլ տված ստորության համար, բայց դա բացատրում էր նրանով, որ ողջ խցում միակ երիտասարդն ինքն է, մնացած բոլորն արդեն երեսունն անց են և ուղղակի ցանկացել են գժություն անել Վովոչկայի փոքր-ինչ վերամբարձ նամակն ընթերցելուց հետո: Ես քթիս տակ ծիծաղեցի՝ ավստոսելով, որ ժամանակին չեմ ծանոթացել Նիկոլայ Վասիլևիչի գրական գործունեության այդ արգասիքին: Հետո նա հայտնում էր, որ իմ անկեղծ նամակը թափանցել է իր հոգու մեջ, որ ինքն այն շատ-շատ անգամներ վերընթերցել է ու մտքում իմ մասին անգամ ոչ վատ կարծիք է կազմել: Նաև իր կյանքից մի քանի մանրամասներ էր գրում, որ նստած է կողոպուտի հոդվածով, որ այստեղ է լրացուցիչ հետաքննության համար և որ, առհասարակ, ուղղակի երջանիկ կլինեի գրել ու նամակներ ստանալ ինձնից, ինչպես հիմա, այնպես էլ հետո, երբ մեզ նետեն Սիության տարբեր ծայրերը:

Ընթերցելուց հետո նրան անմիջապես պատասխանել չկարողացա: Ընթրիքը բերեցին, իսկ հետո երեկոյան ստուգումն էր: Քսիվն արդեն պատրաստ էր ու թելից կապած, բայց իմաստ չունեի «ծիուկն» իջեցնել: Պոպկարներն անընդհատ թրև էին գալիս միջանցքում, ու դիտանցքն անընդհատ բացվում էր:

Վերջապես, երբ որոշ չափով լռություն տիրեց, ես համարձակվեցի «ծին» իջեցնել: Արդեն ուշ էր, դրա համար էլ քսիվի

վերջում ավելացրի, որ անվտանգության առումով ավելի լավ կլինի նամակագրությունը շարունակել վաղը: Թելը հուսալիորեն պատուհանին ամրացնելով՝ մոտեցա սեղանին ու, խաղացողների կողքին տեղավորվելով, ընկղմվեցի գեկի համար սովորական հիշողությունների գիրկը: Այս անգամ մտքերս մեն-մի թեմայի շուրջ էին պտտվում: Ինչպես հասկացաք, այդ պահին ես ոչ մի այլ բանի մասին չէի կարող մտածել, քան կանանց: Մտածում ու հետն էլ թունդ հայհոյում էի այն սրիկաներին, որոնք օրենք էին հորինել մեզ՝ թույլատրելի սահմանն անցածներիս դատապարտելով այսպիսի դատարկ, անսեռ գոյության...

«Աքաղաղն» արդեն հաղորդել էր, որ Մոսկվայում ուղիղ ժամը 22-ն է, երբ ինձ թվաց, թե դրսից ինչ-որ մեկն ինձ անունով կանչում է: Մոտեցա լուսամուտին ու մթության մեջ ձայնեցի.

– Ժենյա, Ժենյա:

– Մինչ վաղը, իմ լավ ընկեր: Բարի գիշեր,– ականջիս հասան հաճելի զրնգուն ձայնով արտաբերված բառերը:

Ես ժպտացի ու նույնպես բարի գիշեր մաղթեցի: Տղաներն էքս-նախագահի գլխավորությամբ սկսեցին քննարկել այդ իրադարձությունն ու իրենց հնարավոր-անհնար ենթադրություններն անել, թե ինչը դրդեց իմ ավագակուհուն շարունակել նամակագրությունն ինձ հետ: Ես այնքան էլ չէի ցանկանում մասնակցել այդ համաժողովրդական քննարկմանը ու ձևացրի, թե քնում եմ: Նրանք անմիջապես փոխեցին թեման, ու շուտով միայն Միշանյայի քնեցնող ձայնն էր լսվում, որով նա ինչ-որ նշանակալի դեպքի մասին հերթական պատմությունն էր պատմում իր բուռն ամուսնական կյանքից: Նրա պատմության տակ էլ քուն մտա:

Այդ գիշեր հաճելի երազներ էի տեսնում: Ըստ երևույթին նախորդ օրվա իրադարձություններն իրենց հետքն էին թողել իմ հոգեկանի վրա, այդ պատճառով էլ երազիս միայն կանայք էին գալիս, բոլորն ասես հատուկ ընտրված՝ կապույտ աչքերով ու շիկահեր, ու ի լրումն այդ ամենի՝ մերկ: Ասեմք, այդպիսի երազներ ամեննին էլ հազվադեպ չէի տեսնում, ինչպես որ նման վիճակում հայտնված բոլոր տղամարդիկ:

Գիշերային երազների տպավորության տակ էլ դիմավորեցի

հաջորդ օրվա առավոտը: Նախաճաշի ողջ ընթացքում չէի համբերում՝ երբ եմ մոտենալու պատուհանին, ու միայն պայմանական թակոցի բացակայությունն էր ինձ հետ պահում: Երբ նախաճաշն ավարտվեց, մոտեցա պատուհանին ու սպասում էի: Բայց ինձ ամենևին այն չէր վիճակված, ինչ ցանկանում էի: Խցի դուռն անսպասելի բացվեց, ու պոպկարների մի ամբողջ բրիգադ ներս մտավ:

– Արագացրե՛ք, շու՛տ, իրերը հավաքե՛ք: Վերանորոգման պատճառով ձեզ ուրիշ խուց ենք տեղափոխում...

Ասես ինչ-որ բանով հարվածեցին գլխիս: Աչքերիս առաջ, կարելի է ասել, փլվեց իմ սիրո ամբողջ, ճիշտ է՝ դեռ նոր ծնունդ առնող, բայց միևնույն է...

Այդտեղ ես հիշեցի «ձիու» մասին: Պետք չէր այն հենց այնպես լուսամուտին թողնել: Բայց թելը կծկելու հնարավորություն չկար: Պոպկարները չէին պատրաստվում հեռանալ: Չգիտեմ ինչպես ինձ հաջողվեց աննկատ կտրել թելը, բայց արեցի: Բանտապաններից մեկն այնուամենայնիվ նկատեց, որ հապաղում եմ, ու բղավեց, որ շարժվեմ:

Մեզ տեղափոխեցին արդեն վերանորոգված խուց, որը քսան ուղևոր էր տեղավորում: Այն արդեն դատարկ չէր: Ձեկերից երեքը պառկած էին մահճակալներին, չորսն էլ սեղանի շուրջ տարված էին պոկերով:

– Здорова, мужики! – գվարթ ձայնեց Վովոչկան, հենց խցի դուռը շխկալով փակվեց մեր թիկունքին:

Մուծիկները նույնպես բարևեցին ու սկսեցին հարցուփորձ անել, թե որ *խապալից* ենք: Մի քանի բառ փոխանակելուց հետո Վովոչկան հարցրեց.

– Իսկ դուք ի՞նչ է, «ձիուկ» չե՞ք գցում:

– Ո՞ւմ գցենք,– խոժոռված խոսեց ուղևորներից մեկը:– Ներքևում *օտրենյակներն* են, վերևում՝ անչափահասներ:

Վովոչկան հիասթափված հոգոց համեց ու սեղանի մոտ նստելով՝ սկսեց հետևել խաղին:

ՎԱՐԱԶԴԴՏ ԱՐՔԱ

(համակարգչային խաղ-լեգենդ-պոպուրիի
սցենար և ռեժիսորական մշակում)



ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԾՆՈՒՆԴ ՎԱՐԱԶԴԱՏԻ

Տևողությունը՝ 6 թույն
(ենթագրերով՝ 6 թույն 30 վայրկյան)

Կերպարներ.

ԱՐՔԱ (ունենալ արքայի պատկերը թե՛ որպես
հետևակ, թե՛ որպես հեծյալ)

ԹԱԳՈՒՀԻ (նույնը, մասն` երկունքի ցավերի մեջ)

ԴՐԱՆԻԿ

ԱՎԱԶԱԿՆԵՐ (բոլորի համար կարելի է ընտրել
միևնույն պատկերը, միայն հետիոտն)

ՁԻԵՐ ԱՌԱՆՅ ՀԵԾՅԱԼՆԵՐԻ
(սպիտակ, սև, դարչնագույն)

ԾԵՐՈՒՆԻ

ԱՐՁ

ՈՉԽԱՐՆԵՐ

ԱՐԾԻՎ

ՄԱՆՈՒԿ ՎԱՐԱԶԴԱՏ

*Խաղային այլ ռեկվիզիտների մասին տեղեկությունները՝
սցենարում և ծանոթագրություններում: Հեղինակը ներո-
ղամտություն է հայցում գրամոլության և խիստ ոճի համար:*

ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Տեսարան 1

...Գարնան եռուն շրջան է: Ապառաժոտ լեռներ՝ փարթամ կանաչի զմրուխտե կարկատաններով: Վառ արևը մոտենում է զեմիքին: Կապուտակ, անաղարտ երկնքում ճախրում է արծիվը:

(Որպես հնչյունային ուղեկցություն կարող է ծառայել հայկական ժողովրդական որևէ երաժշտություն՝ մերթրնդ-մերթ ընդմիջվելով գեպի հեռավոր աղմուկով և թռչունների ճովողյունով: Մի խոսքով՝ հովվերգություն: 1-ին տեսարանը պետք է էկրանին երևա ընդհանուր պլանով: Տևողությունը՝ 10-20 վայրկյան):

Տեսարան 2

...Լեռնային կիրճ: Զարաժայռի հետևից դուրս է գալիս հեծյալների մի խումբ՝ մեջտեղում փառահեղ գահավորակ: Գահավորակի կողքից ճերմակ նժույգով անցնում է մի հեծյալ, որն իր ճոխ հանդերձանքով տարբերվում է մյուսներից: Նրա գլխին թագ է: Արքան է:

(Հնչյունային ձևավորումը նույնն է, ինչ նախորդ տեսարանում: Ուժգնանում է միայն գեպի խշռոցը, որին միախառնվում է նաև ամբակների դոփյունը: Պլանը՝ կրկին ընդհանուր, մի տարբերությամբ, որ առարկաները պարկերված են ավելի խոշոր ու մանրամասն: Հեռապարկերն ու գույները նույնն են, ինչ նախորդ տեսարանում, որպեսզի կասկած չառաջանա, որ կիրճը գտնվում է առաջին տեսարանում ներկայացված սարերում: Տևողությունը՝ 10-15 վայրկյան):

Տեսարան 2ա

...Արքան բարի ու գեղեցիկ դեմք ունի՝ շրջանակված կոկիկ մորուքով: Կրծքին կախազարդ է շողում:

(Հնչյունները նույնն են: Պլանը՝ միջին: Էկրանին արքան

Է՝ նժույգին բազմած: Կողքից երևում է գահավորակի մի հայրվածը: Շարժում: Տալանումները՝ ձիերի սմբակների դոփյուններին համաչափ: Եզրերից՝ շարժմանը զուգընթաց հեռացող բնապարկերներ: Տևողությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 2բ

...Արքայի կուրծքը զարդարում է իշխանություն խորհրդանշող կախազարդը:

(Խոշոր պլան: Կախազարդը երևում է ողջ էկրանով: Ցույց տալ տալանումները շարժման տակտի մեջ: Հնչյունները նույնն են: Տևողությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 2գ

...Արքան կռանում է դեպի գահավորակը և վարագույրը հետ տանելով նայում ներս:

(Նույն ծանոթագրությունները, ինչ տեսարան 2ա-ում: Տևողությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 3

...Շքեղ կահավորված գահավորակին բազմած է երիտասարդ, գեղեցիկ մի կին: Թագուհին է՝ դատելով փոքրիկ թագից, որը զարդարում է նրա թավ վարսերը: Թագուհին հղի է: Նրա կուրծքը նույնպես զարդարում է կախազարդը:

(Հնչյունային ուղեկցությունը չի դադարում: Միջին պլան: Ողջ էկրանին երևում է գահավորակի ներսը: Լուսամուտից երևում է արքայի գլուխը: Տալանումները՝ շարժման տակտի վրա: Տևողությունը՝ 10 վայրկյան):

Տեսարան 3ա

...Թագուհու կախազարդին պատկերված է իշխանության նույն խորհրդանիշը, ինչ արքայի կախազարդին:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը՝ խոշոր, ողջ էկրանով: Տեղությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 3բ

...Թագուհու գեղեցիկ դեմքին երջանիկ ժպիտ է հայտնվում:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը՝ խոշոր, միայն դեմքը: Տեղությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 3գ

...Արքան նրան պատասխանում է նույն կերպ:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը՝ խոշոր, միայն դեմքը: Տեղությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 4

...Ապա արքան ուղղվում է թամբին:

(Ծանոթագրությունները նույնն են, ինչ տեսարան 2ա-ում: Տեղությունը՝ 5 վայրկյան):

Տեսարան 4ա

...Թափորը շարունակում է առաջ շարժվել:

(Ծանոթագրությունները նույնն են, ինչ տեսարան 2-ում, բնապատկերի աննշան փոփոխություններով: Տեղությունը՝ 10 վայրկյան):

Տեսարան 4բ

...Հասնելով գետագալարին՝ արքայական թափորը թեքվում է ժայռի մյուս կողմն ու անհետանում տեսադաշտից:

(Ծանոթագրությունները նույնն են, ինչ նախորդ տեսարանում: Տեսարան՝ մեջքից: Տեղությունը՝ 10 վայրկյան):

Վերջ առաջին արարի:

Ընդհանուր տևողությունը՝ 1 րոպե 40 վայրկյան:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարան 5

...Ժայռերի արանքում պահ են մտել վեց զինյալ ավազակներ: Նրանք շրջապատել են քառասունին մոտ մի տղամարդու, որը հուսահատ շարժումներով փորձում է ինչ-որ բան բացատրել նրանց:

(Տազնապալից մեղեդի: Պլանը՝ ընդհանուր: Տևողությունը՝ 10 վայրկյան):

Տեսարան 5ա

...Դատելով շքեղ հանդերձներից ու ճոխ ասպազենից՝ այդ մարդը դրանիկ է: Նրա դեմքը բարի չէ:

Հանկարծ նա պապանձվում է, ասես ականջ է դնում ինչ-որ բանի ու ցուցամատը շուրթերին դնելով՝ շրջվում է:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը՝ միջին: Կադրում երևում են ավազակներից մի քանիսը: Վերջում հնչյունային ֆոնին խառնվում է հեռվից լսվող սմբակների դուփյունը: Տևողությունը՝ 10 վայրկյան):

Տեսարան 5բ

...Ողջ խումբը շրջվում է նույն ուղղությամբ: Համբ տեսարան:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը, ինչպես տեսարան 5-ում: Սմբակների դուփյունն աստիճանաբար ուժգնանում է: Տևողությունը՝ 10 վայրկյան):

Վերջ երկրորդ արարի:

Ընդհանուր տևողությունը՝ 30 վայրկյան:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

Տեսարան 6

...Արքայական շքախումբը շարունակում է ընթանալ կիրճով: Անսպասելիորեն ժայռի ծերպերից դուրս են պրծնում մետաղեղով զինված ավազակներն ու սկսում են մետահարել հեծյալների ուղղությամբ: Արքայական թիկնապահները, մետերից խոցվելով, ընկնում են մեկը մյուսի հետևից: Չիերը նույնպես արժանանում են հեծյալների բախտին: Դեսպակակիրները վախից (սրանք կորչում են տեսադաշտից), մյուսները կիսակենդան (մետերը կրծքի մեջ) վայր են գցում գահավորակը...

(Մինչև ավազակների հայրնվելը մոտիվը նույնն է, ինչ առաջին արարում: Նրանց հայրնվելուն պես՝ փազնապալից լեյտնոտիվ: Ապա՝ մեյրահարության սուլոց: Թիրախին հասցված յուրաքանչյուր հարվածի ժամանակ՝ չայն, որը կհիշեցնի հոգեվարքի խոխոռոց: Պլանը՝ ընդհանուր: Տևողությոնը՝ 20-30 վայրկյան):

ՈՐՈԳԱՅԹ 1

Տեսարան 6ա

...Վայր ընկած գահավորակից դուրս է սողում հղի թագուհին: Նա վագում է դեպի արքան: Այդ նույն վայրկյանին ժայռերի միջից հայտնվում է մեզ արդեն ծանոթ դրանիկը՝ մետաղեղը ձեռքին:

(Նրա հայրնվելն ուղեկցվում է ազդանշանով, որը նախազգուշացնում է որոգայթի մասին):

Նշան բռնելով՝ նա մետ է արձակում թագուհու ուղղությամբ: Արքան իր մարմնով պաշտպանում է վերջինիս և մետից խոցվելով՝ անշնչացած վայր է ընկնում: Թագուհին, փրկելու համար իրեն ու ապագա մանկանը, հեծնում է կողքին հայտնված դատարկ թամբով ձին ու անհետանում շքախմբի շարժմանը հակառակ ուղղությամբ:

(1-ԻՆ ՈՐՈԳԱՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ . եթե արքան չի հասցնում իրենով ծածկել թագուհուն, թագուհին անշնչացած

վայր է ընկնում որովայնին սրացած մեղրի հարվածից: Հաջորդ մեկը խոցում է իրեն՝ արքային: Այս դեպքում խաղն ընդհարվում է: Հեղուկում է վերադարձ տեսարան 6-ի սկզբին կամ տեսարան 6-ին: Եթե արքային հաջողվում է փրկել փկնոջը, խաղը շարունակվում է: Հաջորդում է տեսարան 6բ-ն: Ծանոթագրություն. Հնչյունը՝ ըստ ծրագրավորողի հայեցողության: Պլանը՝ ընդհանուր: Տեղությունը մինչև որոգայթի ազդանշանը՝ 5-10 վայրկյան: Դրանից հետո՝ ըստ գործողությունների ընթացքի):

Տեսարան 6բ

...Թագուհու փախուստից հետո կովի դաշտում հայտնվում են ավազակներն ու դրանիկը: Վերջինս մոտենում է մեռած արքային ու, կռանալով նրա վրա, հանում է կախազարդը, կախում իր վզից: Ապա գետնից բարձրացնելով ընկած թագը՝ դնում է իր գլխին...

(Ծանոթագրություն. երաժշտություն, որը կարտահայտի չարի ժամանակավոր հաղթարշավը, ԽՄՀՄ հիմնի պես մի քան: Պլանը՝ ընդհանուր: Տեղությունը՝ 10 վայրկյան):

Տեսարան 6գ

...Ապա դրանիկը հանդիսավոր նայում է իր ցնծացող զինակիցներին: Իշխանության խորհրդանիշներն արմաթաթախ փայլում են վրան:

(Ծանոթագրությունները նույնն են: Պլանը՝ միջին: Հնարավորության դեպքում խոշորացնել թագն ու կախազարդը: Տեղությունը՝ 5 վայրկյան):

Վերջ երրորդ արարի:

Ընդհանուր տեղությունը՝ 65 վայրկյան:

Եթե հաշվի առնենք, որ որոգայթը հաղթահարվում է առաջին անգամից, ապա նրա տեղությունը 10 վայրկյանից ավել չէ:

ԱՐԱՐ ՀՈՐՐՈՐԴ

Տեսարան 7

...Այդ ընթացքում թագուհին վեր է պլանում լեռնային ճանապարհով՝ անհանգիստ շուրջը նայելով՝ արդյոք չե՞ն հետապնդում իրեն...

(Սմբակների դուփյուն՝ միախառնված «հեղապնդող» երաժշտությանը, Վիսցկու «Գայլերի որսի» նման: Ֆոն կարող է ծառայել տեսարան 1-ի բնությունը: Պլանը՝ ընդհանուր: Տևողությունը՝ 10 վայրկյան):

ՈՐՈՓԱՅԹ 2

Տեսարան 7ա

...Անսպասելիորեն ժայռից քարաբեկորներ են թափվում: Թագուհին հասցնում է ձգել սանձը, ու ձին մեխվում է տեղում:

(Բանալի. եթե թագուհին չի հասցնում սանձել չիուն, մնում է քարերի հոսքի տակ: Խաղն ընդհատվում է: Հետևում է վերադարձ դեպի տեսարան 7-ի սկիզբ):

...Քարերն աղմուկով թափվում են գետնին, իսկ թագուհին շարունակում է ընդհատված ճամփան...

(Ծանոթագրություն. պլանը և հնչյունը նույնն են, ինչ տեսարան 7-ում: Խոչընդոտը հաջող հաղթահարելու դեպքում տևողությունը՝ 10 վայրկյան):

ՆՈՏԱ ԲԵՆԵ (ինչպես կգրեր հայր Ֆյոդորը). որոգայթ 2-ը կարող է կրկնվել բազմակի անգամ՝ ըստ ծրագրավորողի հայեցողության:

ՈՐՈՓԱՅԹ 2ա

Տեսարան 7բ

...Միայն թե վտանգները չեն ցանկանում լքել փախուստի դիմած թագուհուն: Նրա ճանապարհին հայտնվում է մի նեղ կիրճ: Ներքևում խոր անդունդ է: Թագուհին հասցնում է ժամանակին սանձել ձիուն, և սա ընթացքի մեջ ցատկում է ճեղքվածքի վրայով...

(Բանալի. եթե թագուհին ժամանակին չի կատարում անհրաժեշտ գործողությունը, չին, կախված այն քանից՝ ժամանակից շուտ, թե ուշ է կատարվել գործողությունը, համապատասխանաբար կա՛մ չի հասնում և հեծելուհու հետ ցած է ընկնում՝ առջևի ամբակներով թափելով կիրճի եզրային քարերը, կա՛մ հետևի հրող ոտքերով քանդում է հիմքը, որի վրա հենված էր թռիչքից առաջ, ինչը բերում է մահվան ելքի: Չին կանգնեցնել չի կարելի՝ հնարավոր է հավասարակշռության կորուստ և նույն՝ անխուսափելի անկումը: Որոգայթ 2ա-ի հաղթահարման ժամանակ տեղի ունեցած սխալի դեպքում պետք է վերադառնալ տեսարան 7բ-ին: Որոգայթ 2ա-ն կարող է կրկնվել մի քանի անգամ, կարող է արանքներում կիրառվել նաև որոգայթ 2-ը (ըստ ծրագրավորողի հայեցողության):

...Հետևում թողնելով անդունդը՝ հեծելուհին սուրում է առաջ...

(Ծանոթագրությունները նույնն են, ինչ տեսարան 7-ում: Անկման ժամանակ կարելի է ներմուծել շայների մի փունջ՝ քաղկացած խրխնջոցից և պահածոյի տուփերի շայնից, որ գալիս է, երբ դրանք նետում ես տասներորդ հարկի աղբարարից: Տևողությունը առանց մահվան ելքի՝ 10-15 վայրկյան):

Վերջ չորրորդ արարի:

Ընդհանուր տևողությունը «օբեյ» ելքի դեպքում՝ 45 վայրկյան:

ԱՐԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեսարան 8

...Լեռնային մարգագետնում ծերունին արածեցնում է իր գառները և շվի նվագում: Կողքը կարկաչում է առվակը:

Դաշտ է խուժում ուժասպառ հեծելուհու ձին և կանգ առնելով՝ փռվում առջևի ծնկների վրա...

ՈՐՈՓԱՅԹ 3

...Ծերունին վեր է թռչում տեղից, և մոտ վազելով, հասցնում է բռնել թագուհուն, որը քիչ էր մնում՝ թամբից թռչեր գլխով ուղիղ դեպի մեծ գլաքարերը...

(Բանալի. եթե ծերունին չի հասցնում ժամանակին ներվել դեպի թագուհին, հերևում է ուղեղի ցնցում՝ վայրկենական մահով, և վերադարձ՝ տեսարան 8-ի սկիզբ: Եթե հասցնում է, ամեն ինչ կարգին է, խաղը շարունակվում է):

(Ծանոթագրություն. երաժշտությունը կարող է լինել «Հինգալան» կամ նման մի բան: Թագուհու հայնրվելու ժամանակ միանում է նաև խոյրերի մեջ խլացած սմբակների դոփշունը: Պլանը՝ ընդհանուր: Տեղությունը առանց մահվան ելքի՝ 20-25 վայրկյան):

ՈՐՈՓԱՅԹ 3ա

Տեսարան 8ա

...Կնոջը զգուշորեն ցած իջեցնելով՝ ծերունին ուղղվում է:

Հանկարծ լսվում է մի ահարկու ոռոց, և մարգագետնում հայտնվում է հսկա արջը: Հոտը վախից ցրվում է, իսկ գազանը սկսում է մոտենալ մարդկանց:

Առանց իրեն կորցնելու՝ Ծերունին նետվում է այն տեղը, որտեղ քիչ առաջ նստած շվի էր նվագում և գետնից վերցնելով հովվի ցուպը՝ կտրում է թագուհուն մոտեցող արջի ճամփան:

(Բանալի. եթե ծերունին չի հասցնում ներվել դեպի ցուպը, արջը, քաթի հարվածով անշնչացնելով նրան, մոտենում է կնոջը և նրան հափշտակելով՝ կորչում է տեսադաշտից: Այդ դեպքում՝ վերադարձ տեսարան ծա-ի սկիզբ: Եթե ամեն ինչ կարգին է, խաղը շարունակվում է):

(Հնչյունը՝ արջի ոռնոց - «Դրուժբա» սղոցի չայնի նման մի բան: Պլանը՝ ընդհանուր: Տևողությունը՝ 15 վայրկյան՝ քարեհաջող ընթացքի դեպքում):

ՈՐՈԳԱՅԹ՝ 3բ

Տեսարան 8բ

...Արջի ու ծերունու միջև կռիվ է ծավալվում: Գազանը հարձակվում է ծերունու վրա՝ առջևի պարզած թաթերով իրենից վանելով ցուպը: Ժամանակ առ ժամանակ ծերունուն հաջողվում է ցուպի ծանր գլխիկով հարվածել արջի գլխին, և այդ ժամանակ ծուռթաթը նահանջում է: Վերջապես ծերունուն հաջողվում է զենքի սուր ծայրը մտցնել արջի աճուկը (ի դեպ՝ էկրանի մի անկյունում կարելի է խոշոր պլանով ցույց տալ արջի եղած-չեղածը, որ թրթռում է ոստիկանական մեքենայի լուսավարոսիկի նման. սա՝ ըստ ծրագրավորողի հայեցողության): Գազանն աղիողորմ ոռնոց է արձակում և նույն պահին էլ ջախջախիչ հարված է ստանում գլխին ցուպի ծանր մասով: Դրանից հետո նա վերջապես անշնչացած վայր է ընկնում:

(Բանալի. կռիվ ընթացքում ծերունին կարող է իր վրա ընդունել արջի քաթի հարվածն ու անշնչացած ընկնել: Գազանն այդ դեպքում ներվում է դեպի ուշաթափ կինն ու նրան հափշտակելով՝ անհետանում: Խաղն ընդհարվում է: Վերադարձ տեսարան 8բ-ի սկիզբ: Մյուս փարբերակը՝ երբ արջին հաջողվում է կոտրել ցուպը կամ դուրս պրծնել ծերունու շեռքից ու ցատկել մի կողմ՝ կադրից դուրս: Այդ դեպքում կռիվը շարունակվում է բռունցքներով, եթե ծերունուն հաջողվում է

եւր ցարկել: Եթե գազանին հաջողվում է նոկաուրի ենթարկել ծերունուն, ելքը նույնն է, ինչ վերևում, և ենթադրում է վերադարձ տեսարան 8բ-ի սկիզբ:

Բռնցքամարտում ծերունին կարող է հաղթել՝ ընդամենը ոտքով հարվածելով արջի աճուկին և հաջորդ հարվածով թռիչքի ժամանակ բռնցքով կոտրելով արջի գանգը:

Եթե ոտքով կամ ցուպով աճուկին հասցված հարվածին չի հաջորդում գանգը կոտրող հարվածը, կռիվը շարունակվում է):

(Տեսարան 8բ-ի ողջ ընթացքում հնչում է երաժշտություն «Կարմենից» - «Տորեադոր» և այլն: Պլանը՝ ընդհանուր: Թագուհին ողջ տեսարանի ընթացքում անշարժ է: Տևողությունը առանց էքսցեսների՝ 30-40 վայրկյան):

Տեսարան 8գ

...Արջի վախճանին համընթաց լսվում է թագուհու աղիողորմ ճիչը: Ծերունին շրջվում է: Սկսվել են կնոջ երկունքի ցավերը: Ուժ տալով ու գոռալով՝ թագուհին ծննդաբերում է...

(«Տորեադորի» երաժշտությունն ընդհատվում է երկունքի ճիչերով, որոնց հաջորդում է մանկան ճիչը: Պլանը՝ ընդհանուր: Տևողությունը՝ 15 վայրկյան):

Տեսարան 8դ

...Ծերունին մոտենում է ծննդկանին և մանկանը գետնից վերցնելով՝ պարզում դեպի արևը: Այդ վայրկյանին գիտակցությունը կորցրած մայրը կամացույց տնքում է և իր կախազարդը վզից հանելով՝ մեկնում ծերունուն: Վերջինս մանկան հետ կռանում է, և այնպես է ստացվում, որ մայրն իր ձեռքով է կախազարդը կախում մանկան վզից: Դրանից հետո նա ետ է ընկնում և ավանդում հոգին, որը մարմնից հեռանալով՝ վեր է բարձրանում: Հովիվը հայացքով ուղեկցում է նրան, ապա աչքերը դարձնում մանկան կողմը...

(Մինչև թագուհու մահը «Տորեադորը» նորից է լսվում:

*Դրան հաջորդում է սգո ակորդ: Այն քանից հետո, երբ քա-
զուհու հոգին անհեղափոխում է, լսվում է «Արդյոք ովքեր են»
մեղեդին և շարունակվում է մինչև արարի ավարտը: Տեսա-
րան 8դ-ի տևողությունը՝ 15-20 վայրկյան):*

Տեսարան 8ե

...Նորածնի փափիկ վարդագույն կրծքին շողում է արքայա-
կան խորհրդանշանով կախազարդը:

(Ծանոթագրություն. պլանը՝ խոշոր: Տևողությունը՝ 10 վայրկյան):

Ընդհանուր տևողությունը՝ 2 րոպե, 10 վայրկյան:

Վերջ հինգերորդ արարի և առաջին մասի:

(անավարտ)

Գծանկարը՝ Գավիթ Սարապյանի (8տ.)



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ատա՛ս	ռուս.՝ ата́с!, այստեղ՝ վտանգի մասին զգուշացնող բացականչություն
արմյան	ռուս.՝ армян, հայ
բալանդա	ռուս.՝ баланда, վռիկ ճաշ, բանտապուր
բալանդյոր	ռուս.՝ баландер, <i>բանկր. ժարգոն</i> բանտային խոհանոցի աշխատող, բանտային կերակուր բաժանող
բայանաճաղեր բառիզ	բայանի (երաժշտական գործիքի) նման ճաղեր ռուս.՝ барыга, վերավաճառող, մանրավաճառ, սպեկուլյանտ
բարդակ	ռուս.՝ бардак, անկարգություն, թափթվածություն
բաք	կերակրադրմակ
բլին	ռուս.՝ блин, զարմանք, ուրախություն, բարկություն, դառնություն կամ դժգոհություն արտահայտող բացականչություն
բլյադ	ռուս.՝ блядь, անբարոյական, պոռնիկ
բովանչիկ	ռուս.՝ болванчик, չինական կոպիտ արձանիկ
բրատոկ	ռուս.՝ браток, <i>խսկց. դիմելաձև</i> ախպեր
բրատվա	ռուս.՝ братва, <i>խսկց.</i> ախպերություն
բուխարիկ	ռուս.՝ бухарик, <i>խսկց.</i> հարբեցող
գրոգ	անգլ.՝ grog – տաք ալկոհոլային խմիչք
գուբարիկ	ռուս.՝ губарик, <i>զինվ. ժարգոն</i> հաուպտվախտի կալանավոր
դեմբել	ռուս.՝ дембель, ժամկետային ծառայության ավարտին հասած զինապարտ

զադերժկա զամպոլիտ	ռուս.՝ задержка, <i>բանյր. ժարգոն</i> կալանախուց ռուս.՝ замполит, անձնակազմի հետ տարվող (քա- ղաքական) աշխատանքների վարչության պետի (կամ հրամանատարի) տեղակալ
զապրետկա զեկ	ռուս.՝ запретка, <i>բանյր. ժարգոն</i> արգելագոտի ռուս.՝ зек, <i>խսկց.</i> կալանավոր
զոն(ա)	ռուս.՝ зона, <i>խսկց.</i> ուղղիչ-աշխատանքային գա- ղութ, կալանավայր
էտապ	ռուս.՝ этап, կալանավորին կալանավայր տանելը, մի կալանավայրից մյուսը տեղափոխելը
ժեկ	ռուս.՝ ЖЭК, ԲՇԳ՝ բնակչահագործման գրասեն- յակներ ԽՍՀՄ-ում
ժժոնկա	ռուս.՝ жонка, <i>բանյր. ժարգոն</i> կարամեկացված շաքարահյութ
լոքշ	ռուս.՝ локш, <i>գող. ժարգոն</i> հոգեկան դատարկու- թյուն, անհուսություն
խատա կապոտ	ռուս.՝ хата, խրճիթ ռուս.՝ капот, մեքենայի կափարիչ, ծալովի ծածկոց
կարցեր	ռուս.՝ карцер, պատժախուց, մենախուց
կիրզաչներ	ռուս.՝ кирзачи, <i>խսկց.</i> կիրզայե կոշիկներ, սապոգ- ներ
կոլխոզ կոմբատ	ռուս.՝ колхоз, կոլեկտիվ տնտեսություն ԽՍՀՄ-ում ռուս.՝ комбат (командир батальона, командир батареи), գումարտակի կամ մարտկոցի հրամա- նատար
կոնվոյ	ռուս.՝ конвой, ուղեկցող պահակախումբ
կուսոկ	ռուս.՝ кусок, <i>խսկց.</i> հազար ռուբլի
կրասնաչ	ռուս.՝ краснач, <i>բանյր. ժարգոն</i> զորամասերին կից պարեկապահակային ծառայության աշխատակից
հաուպտվախտ	1. զինվորական կալանատուն, 2. զինվորական պահականոց
մանթրաշ	ռուս.՝ мандраж, <i>խսկց.</i> անհանգստություն, տազ- նապ, հուսահատություն, անօգնականություն
նաչալնիկ	ռուս.՝ начальник, պետ

նաչգուր	ռուս.՝ начгыб (начальник гауптвахта), հաուպտ-վախտի պետ
նարկոշ	ռուս.՝ наркош, <i>հսկց.</i> քմրամոլ
շաբաշ	ռուս.՝ шабаш, <i>հսկց.</i> վերջ, ընդմիջում, դադար
շկոնկա	ռուս.՝ шконка, <i>բանյր.</i> ժարգոն մահճակալ (հիմնականում մետաղյա)
շմոն	ռուս.՝ шмон, <i>բանյր.</i> ժարգոն խուզարկություն
չերվոնեց	ռուս.՝ червонец, տասը ռուբլանոց քոթադրամ
չինարիկ	ռուս.՝ чинарик, <i>հսկց.</i> կիսատ ծխած գլանակ, ծխուկ
չիֆիր	ռուս.՝ чифир կամ чифирь, բունդ թեյ, թեյի բարձր չափաբաժնով եփած բուրմ
չիֆիրբակ	ռուս.՝ чифирбак, <i>բանյր.</i> ժարգոն չիֆիր պատրաստելու բաժակ
չուվ(ա)	ռուս.՝ чува, <i>հսկց.</i> աղջկերք
պախան	ռուս.՝ пахан, <i>բանյր.</i> ժարգոն պարագլուխ, (քրեական) հեղինակություն
պարադկա	ռուս.՝ парадка, հանդիսավոր օրերի համար նախատեսված զինվորական հագուստ
պարաշ	ռուս.՝ параша, <i>բանյր.</i> ժարգոն բանտային զուգարան
պոպկար	ռուս.՝ попкаръ, <i>բանյր.</i> ժարգոն աշտարակի ժամապահ
պրապոր, պրապորշիկ	ռուս.՝ прапорщик, զինվորական կոչում (ցածր սպայական աստիճան) ԽՍՀՄ զինված ուժերում
ռեժիմնիկ	ռուս.՝ режимник, <i>հսկց.</i> ուղղիչ-աշխատանքային հիմնարկում կալանավորների կողմից ներքին կարգապահական կանոնների պահպանումը վերահսկող բաժնի՝ ռեժիմային բաժնի աշխատակից
սանմաս	սանիտարական մաս՝ բուժկետ զորամասում, բանտում և այլուր
սլեդակ	ռուս.՝ следак, <i>հսկց.</i> քննիչ
սպեց	ռուս.՝ спец, <i>հսկց.</i> կալանավայրի հատուկ սուրհանդակ

սպեցովկա	ռուս.՝ спецовка, <i>խսկց.</i> հատուկ հագուստ, այստեղ՝ քանտահագուստ
ստարլեյ	կրճ. ռուս.՝ старший лейтенант, <i>խսկց.</i> ավագ լեյտենանտ
ստոլիպին	ռուս.՝ столыпин, այստեղ՝ կալանավորներին տեղափոխող գնացք, վագոն
ստրոգաչ	ռուս.՝ строгач, <i>քանկր. ժարգոն</i> ուժեղացված ռեժիմի կալանավոր
Վոյենտորգ	ռուս.՝ Военторг, առևտրային համակարգ, որը սպասարկում էր ԽՍՀՄ զինված ուժերը
վորոնոկ	ռուս.՝ воронок, <i>խսկց.</i> կալանավորներին տեղափոխող փակ բեռնատար
տրանզիտկա	ռուս.՝ транзитка, <i>խսկց.</i> առաքաբանտ, կալանավորների տրանզիտային պահման վայր
քսիվ	ռուս.՝ ксива, <i>քանկր. ժարգոն</i> բանտում կալանավորների մեջ գաղտնի շրջանառվող կամ դրսից կալանավորներին զարտուղի ճանապարհով փոխանցվող գրություն, նամակ
օկրուգ	ռուս.՝ округ, վարչական շրջան
օպեր	ռուս.՝ опер (оперуполномоченный), <i>խսկց.</i> օպերլիազոր
օսոբնյակ	ռուս.՝ особняк, <i>քանկր. ժարգոն</i> ուժեղացված ռեժիմով գաղութում պահվող առանձնակի վտանգավորությամբ կրկնահանգազոր
օսուժյոնկա	ռուս.՝ осужденка, <i>խսկց.</i> քննչական մեկուսարանի խուց, որտեղ պահվող անձանց նկատմամբ թեև դատարանի որոշում կա, սակայն դեռ ուժի մեջ չի մտել
օտբոյ	ռուս.՝ отбой, <i>խսկց.</i> սկսված, ընթացիկ գործողությունը դադարեցնելու կոչ, հրաման, ավարտանշան
ֆենյա	ռուս.՝ феня, գողական խոսվածք, ժարգոն
ֆրայեր	ռուս.՝ фраер, <i>քանկր. ժարգոն</i> ազատ մարդ, որն առնչություն չունի հանցավոր աշխարհի հետ, որը օտար, ոչ յուրային է համարվում քրեական միջավայրում

Ֆուֆլել

քանր. ժարգոն խաբել

Ֆուֆլիժնիկ

քանր. ժարգոն մարդ, որը չի վճարում տանուլ տված գումարը կամ պատասխանատու չէ իր խոսքերի համար

ԴԱՎԻԹ ՍԱՐԱՊՅԱՆ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՎԱՅՐԿՅԱՆ

Գծանկարները՝ Սերգեյ Գրիգորյանի (գինակից ընկեր)


Ձևավորումը, էջադրումը և շապիկը՝ Արամ Ուռուտյանի

Խմբագիրներ՝ Ամալյա Ալեքսանյան (Երեք հարյուր վայրկյան),
Երագիկ Գրիգորյան

Սրբագրիչ՝ Անահիտ Համբարձումյան

Շապիկի ձևավորման համար օգտագործվել է կադր
Ցվետանա Պասկալևայի
«Նվիրյալները. Դավիթ Սարապյան» ֆիլմից

«Դավիթ Սարապյան» նախաձեռնություն
<https://www.facebook.com/DavitSarapyanDev/>
Էլ. փոստ՝ davitsarapyan@gmail.com
Հեռ.՝ 091 113 133



- Լսիր, իսկ եղ ղվ է մեջքիդ: Քրիստոնսը:
- Չէ... Միքայել հրեշտակապետը: Ինչի՞:
- Հենց էնպես... Ես նրանով քեզ ճանաչեցի:

